

**Արտակ Շաքարյան**

**«Արյան հարկը»**

**Օսմանյան կայսրությունում**

**ԴԵՎՇԻՐՄԵ**



**Երևան 2006**

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF  
THE REPUBLIC OF ARMENIA

Նվիրվում է բոլոր նրանց, ովքեր իրենց  
մասնակցությունն են ունեցել գրքի  
հեղինակման գործընթացին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՅԵՐԱԿԱՆ ԱՐԿԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՅԵՐԱԿԱՆ ԱՐԿԻՎ  
ԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՅԵՐԱԿԱՆ ԱՐԿԻՎ  
600

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF  
THE REPUBLIC OF ARMENIA

INSTITUTE OF ORIENTAL STUDIES

**SHAKARYAN ARTAK**

**“BLOOD TAX”**

**IN THE OTTOMAN EMPIRE:  
DEVSHIRME**

YEREVAN  
2006

« ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՇԱՔԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ

«ԱՐՅԱՆ ՀԱՐԿԸ»


ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.

ՂԵՎԵՐՄԵ

A II  
91452



ԵՐԵՎԱՆ  
2006





ՀՏԴ 950  
ՉՄԴ 63.3  
Ը 380

ՀՐԱՏԱՐԱԿԿՈՒՄ Է  
ՀՀ ՉԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագիր՝ Ռ.Ա.Սաֆրաստյան  
պատմական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

Շաքարյան Արտակ  
Ը 380

«Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում / Խմբ.  
Ռ.Ա.Սաֆրաստյան. – Եր.: Հեղինակային հրատարակություն,  
2006, 188 էջ

Աշխատության մեջ քննարկվում են Օսմանյան կայսրությունում մանկահավաքի (դեվչիքմե) համակարգի հիմնադրման նախադրյալներն ու զուգահեռներն իլամական այլ հասարակություններում առկա նմանատիպ երևույթների հետ: Առավել մանրամասն ուսումնասիրության են ենթարկված սույն համակարգի գործառույթներն ու իրականացման մեխանիզմները: Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության շրջանում մանկաժողովների անցկացման վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրների հետազոտությունը:  
Նախատեսվում է արևելագետների, պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

*Շապիկի նկարը՝ «Թուրքերը հավաքում են պավոն տղաներին ենիչերի դարձնելու համար» (XVIդ. փորագրանկար)*

ISBN 999-30-4-578-0

ՉՄԴ 63.3

© Շաքարյան Ա.Կ., 2006թ.

ՀԵՂԻՆԱԿՆ ԻՐ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ՀԱՅ-  
ԱՄԵՐԻԿԱՅԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ, ԲԱՐԵՐԱՐ  
ՕՆՆԻԿ ՄԵՀՐԱՔՅԱՆԻՆ ԵՎ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ  
ԱՐՄԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆԻՆ  
ԳՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԿԱՆԱԿՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

**THE AUTHOR EXPRESSES HIS GRATITUDE TO  
ONNIK MEHRABYAN AND  
ARSEN ARCHIBISHOP BERBERYAN  
FOR THE SUPPORT IN PUBLICATION OF THIS  
MONOGRAPH**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օսմանյան կայսրության վարչական համակարգը միշտ եղել է արևելագետների ուսումնասիրությունների կենտրոնում: Այս առումով նրանց ուշադրությունից, անշուշտ, չի վրիպել դեվչիրմե երևույթը, որը հեռավոր գյուղի հասարակ գյուղացու որդուն տեսականորեն հնարավորություն էր ընձեռում դառնալ այս հզորագույն պետության մեծ վեզիր: Մինչդեռ դեվչիրմեի փաստը Օսմանյան կայսրությունում հստակորեն ցույց է տալիս հպատակ երկրների ազգաբնակչության իրավագուրկ, ստրկական վիճակը:

Դեվչիրմեի՝ տղայահավաք, մանկահավաք, տղայաժողով, «արյան հարկ», սկզբնավորման բացատրության համար պատմիչների և պատմաբանների կողմից բերվում են մի շարք վարկածներ՝ սկսած օսմանյան սուլթանների «հանճարեղ մտքի փայլատակման» մասին ավանդապատումներից մինչև այս համակարգի՝ Օսմանյան կայսրությունում ժողովրդագրական պայթյունի հետևանք լինելու վերլուծություններ:

Սույն գիրքը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն (այդ թվում և օսմաներեն), գերմաներեն, ֆրանսերեն, բուլղարերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Հեղինակը հնարավորություն է ունեցել ծանոթանալու ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանի, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանի, Հայաստանի Ազգային գրադարանի, Դամասկոսի Արաբագիտության ֆրանսիական ինստիտուտի գրադարանի, Կահիրեի համալսարանի Արևելագիտության կենտրոնի գրադարանի ֆոնդերում պահվող գիտական նյութերին և մասնագիտական գրականությանը:

Ուսումնասիրության համար որպես հիմնական սկզբնաղբյուր ծառայել են սուլթանական արքունիքի

հրամանագրերի ժողովածուները<sup>1</sup>: Օսմաներենով գրված այս հրամանագրերը կայսրության ներքին քաղաքականության ուսումնասիրման խնդրում կարևոր աղբյուր են:

Մյուս կարևոր սկզբնաղբյուրներից են պատմաբան Վ.Հակոբյանի<sup>2</sup> կողմից լույս ընծայված հայ միջնադարյան ժամանակագրությունները, որոնք թեև փոքրածավալ, սակայն կարևոր տեղեկություններ են հաղորդում հայերից տղայահարկի հավաքման մասին, ինչպես նաև Ի.Պետրոսյանի կողմից թարգմանված ու մասնագետների քննությանը ներկայացված «Ենիչերիական զորախմբի օրենքների ծագման պատմություն»<sup>3</sup> տրակտատը:

Առանձնահատուկ արժեք են ներկայացնում թուրք անվանի պատմաբան Ի.Հ.Ուզունչարշըլըի<sup>4</sup> աշխատությունները, որոնք թույլ են տալիս լավագույնս հասկանալ կայսրության պետական կառուցվածքն ու պարունակում են բազում կարևոր փաստաթղթերի թարգմանություններ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Ի.Հ.Ուզունչարշըլի մոտեցումները դեվչիրմե երևույթի նկատմամբ զուրկ են անաչառությունից: Թուրք հեղինակի մոտ նկատվում է այս համակարգի միայն դրական կողմերը նշելու, կատարյալ ներկայացնելու, ինչպես նաև հայերի մասնակցությունը նվազագույնի հասցնելու միտում:

<sup>1</sup> 3 numaralı mühimme defteri (966-968 / 1558-1560), c.1, Ankara, 1993;

<sup>2</sup> 5 numaralı mühimme defteri (973 / 1565-1566), c.1, Ankara, 1994;

<sup>3</sup> 6 numaralı mühimme defteri (972 / 1564-1565), c.1, Ankara, 1995;

<sup>4</sup> 7 numaralı mühimme defteri (975-976 / 1567-1569), c.1, Ankara, 1998;

<sup>5</sup> 12 numaralı mühimme defteri (978-979 / 1570-1572), c.3, Ankara, 1996.

<sup>6</sup> Վ.Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. Ա, Երևան, 1951:

<sup>7</sup> Мебде-и канун-и йеничери оджагы тарихи (История происхождения законов янычарского корпуса), Издание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели И.Петросян, Москва, 1987.

<sup>8</sup> İ.Uzunçarşılı, Osmanlı devlet teşkilâtından kapıkulu ocakları, I, Ankara; İ.Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilâtına medhal, İstanbul, 1941; İ.Uzunçarşılı, Osmanlı devletinin saray teşkilâtı, Ankara, 1945.

Ազգությանը թուրք մեկ այլ անվանի գիտնական Հալիլ Ինալչիքի աշխատությունները<sup>5</sup> ևս զուրկ չեն սուրբեկտիվիզմից: Այսպես, Օսմանյան պետության տնտեսությանն ու հասարակությանը նվիրված լայնածավալ ուսումնասիրությունում նա շարունակում է հաստատված ավանդույթն ու դեվչիմեն ներկայացնում որպես քրիստոնյաների համար ռազմական դասակարգ մուտք գործելու փայլուն հնարավորություն: Բացի այդ, Հ.Ինալչիքի աշխատություններում նույնպես ընդգծված է Օսմանյան կայսրությունում ամոթալի ու պարսավելի երևույթները և իրադարձությունները մեղմելու միտումը, ինչը համահունչ է թուրք պատմաբանների մեծամասնության ուսումնասիրությունների հետ:

Այս առումով թուրք պաշտոնական պատմագրության մոտեցումների դրսևորում է նաև Յավուզ Էրջանի<sup>6</sup> Օսմանյան կայսրության քրիստոնեաբնակ տարածքների թուրքացման ու մահմեդականացման վրա դեվչիմենի ազդեցությունը քննարկող հոդվածը, որտեղ նա փորձում է թերագնահատել դեվչիմեն երևույթի նշանակությունը քրիստոնյա հպատակների թուրքացման ու մահմեդականացման խնդրում: Մասնավորապես, նա բերում է այն փաստարկը, թե հավաքները սահմանափակված են եղել միայն գյուղերով, ինչպես նաև գոյություն են ունեցել բազում արտոնություններ: Սույն գրքում հիմնավոր կերպով հերքվում են այս փաստարկները, և ցույց է տրվում, որ վերոհիշյալ հոդվածում թուրք պատմաբանը անաչառ չէ:

Քննադատության արժանի են նաև արևմտյան մի շարք հեղինակների ուսումնասիրություններ, որոնք այս կամ այն կերպ անդրադառնում են նաև դեվչիմենի խնդրին:

<sup>5</sup> H. İnalcık, The Ottoman state: economy and society, 1300-1600, An economic and social history of the Ottoman Empire, 1300-1914, edited by H. İnalcık, D. Quataert, Cambridge, 1996, p. 9-411.

<sup>6</sup> Y. Ercan, Devşirme sorunu, devşirmenin Anadolu va Balkanlardaki etkileşme ve islamlaşma etkisi, Belleten, 1986, Aralık 1987, Ankara, s. 679-726.

Այսպես, Անդրե Բլոն Սուլեյման Փառահեղին նվիրված իր գրքում<sup>7</sup> անթաքույց հիացմունքով է խոսում Օսմանյան կայսրության և, մասնավորապես, ստրկական համակարգի մասին: Իչ օղլանների համակարգը նա համարում է հոյակապ հնարավորություն քրիստոնյաների համար: Նա մեծ պատիվ է համարում ծառայությունը սուլթանին՝ առանց հաշվի առնելու մարդու անձնական զգացումները՝ բռնի կրոնափոխություն, զատում հարազատ միջավայրից, ստրուկի կարգավիճակ: Սակայն վերոհիշյալ անտեսմանը զուեմարվում է հաջորդը: Հեղինակը որպես իր փաստարկների ապացույց բերում է սուլթան Սուլեյմանի մեծ վեզիր, դեվչիրմեի միջոցով վարչական համակարգ մուտք գործած Ալի փաշայի կենսագրությունը: Ա.Բլոն, սակայն, հաշվի չի առնում այն իրողությունը, որ Ալիի կենսուղին լուրջ մեկն է այն հարյուր հազարավորներից, որոնք չեն հասել նման պաշտոնի: Շատ շատերը դարձել են ստրուկ թուրք գյուղացիների մոտ, ենիչերի օսմանյան բանակում, մեծահարուստների սիրելեան:

Արևմտյան գիտնականների մի մասի մոտ տարածված է նաև այն թյուր կարծիքը, թե դեվչիրմեն չի կիրառվել հայերի նկատմամբ կամ կիրառվելու դեպքում կրել է վերին աստիճանի հազվադեպ բնույթ: Այսպես, Բեռնարդ Լյուիսը<sup>8</sup> արդի Թուրքիայի ժազման պատմությանը վերաբերող իր գրքում խոսում է միայն բալկանյան ազգաբնակչության՝ դեվչիրմեի միջոցով կայսրության քաղաքական ու ռազմական վերնախավ մուտքի մասին:

Իսկ Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրության հարցում դասական համարվող հեղինակներ Հ.Ա.Ռ.Գիբի ու Հ.Բոունի<sup>9</sup> աշխատությունում հստակորեն նշվում է, որ հրեաներից բացի, դեվչիրմեից

<sup>7</sup> A. Clot, Soliman le Magnifique, Paris, 1983.

<sup>8</sup> B. Lewis, The emergence of modern Turkey, London, New York, Toronto, 1996.

<sup>9</sup> H.A.R. Gibb, H. Bowen, Islamic Society and the West, Vol. 1, Part 2, London, New York, Toronto, 1951.

ազատված են եղել նաև հայերը. նախ՝ Ստամբուլում բնակվելու, իսկ հայկական հողերի գրավումից հետո՝ այն պատճառով, որ հայերը հրեաների նման վատ զինվորներ են եղել: Նույնիսկ եթե առանց քննության ընդունենք հեղինակների այս վերին աստիճանի անհամոզիչ փաստարկները, հարկ ենք համարում նշել երկու բացթողում. առաջին, նախքան հայկական հողերի գրավումը Օսմանյան կայսրությունում կային հայեր նաև Ստամբուլից դուրս, օրինակ Քյութահիայի ստվար հայկական գաղութը<sup>10</sup>, երկրորդ՝ դեվչիրմե հավաքների արդյունքում հավաքագրված երիտասարդները ոչ միայն համալրում էին ենիչերիական զորախմբերը, այլև ուղարկվում աշխատանքի պալատ, շինարարություններ, գյուղեր կամ վաճառվում ստրուկների շուկաներում: Բացի սրանից, դասական համարվող հեղինակները կրկնում են թուրք պատմաբանների առաջ քաշած այն միտքը, թե «դեվչիրմեն, ըստ էության, դուռ էր դեպի պետության բարձրագույն պաշտոնները»: Այսպես, նրանք առավելություն են համարում Օսմանյան կայսրությունում զիմմի ծնվելը (համաձայն շարիաթի՝ զիմմիներ են կոչվում այն «ժողովուրդները, որոնք ծանոթ են եղել Սուրբ գրքին նախքան Դուրանի ի հայտ գալը»), քանի որ միայն նրանք էին ենթակա հավաքագրման: Հեղինակները, սակայն, կոպիտ սխալ են թույլ տալիս՝ Օսմանյան կայսրության օրինակով անտեսելով շարիաթի սկզբունքներից մեկը: Համաձայն շարիաթի՝ զիմմիները վճարված հարկի դիմաց իրավունք էին ստանում պահպանել իրենց կրոնը և այլն, իսկ դեվչիրմեն ներառում էր նաև բռնի մահմեդականացում:

Մեկ այլ արևմտյան անվանի օսմանագետ Փ.Վիթեքը<sup>11</sup> դեվչիրմեի՝ շարիաթը խախտելու խնդրին նվիրված իր հոդվածում նշում է, թե օսմանցիները չեն

<sup>10</sup> Ա. Ալպոյաճեան, Յուշամատեան կուտինահայերու, Բեյրութ, 1961:

<sup>11</sup> P. Wittek, Devshirme and sharia, Bulletin of the School of Oriental and African Studies, London, 1955, XVII/2, p. 271-278.

խախտել շարիաթը, քանի որ սերբերը, ալբանացիները և բուլղարները քրիստոնեություն են ընդունել Ղուրանի ի հայտ գալուց ավելի ուշ, ուստի նրանք չեն կարող համարվել զիմնի: Սակայն այս դեպքում անտեսվում է այն անհերքելի փաստը, որ մասնավորապես հայերը քրիստոնեություն են ընդունել Ղուրանի գրվելուց շատ ավելի վաղ, բայցևայնպես հայերի մեջ ևս անցկացվել է տղայահավաք, որի արդյունքում ընտրված երիտասարդները հետագայում բռնի մահմեդականացվում էին:

Դեվչիրմե երևույթի՝ հայերի հանդեպ կիրառելու անհիմն բացասումը կա նաև Սթենֆորդ Շոուի<sup>12</sup> Օսմանյան կայսրության ու արդի Թուրքիայի պատմության վերաբերյալ աշխատության առաջին հատորում: Այսպես, Շոուն գրում է, որ հայերն ամբողջությամբ ազատված էին դեվչիրմեից այն պատճառով, որ նրանց մեծ մասը բնակվում էր քաղաքներում: Մեր ատենախոսության շրջանակներում մենք անդրադարձել ենք քաղաքային բնակչության՝ դեվչիրմեից համատարած ազատման կարծիքին ու հերքել այն, բացի այդ, Ստենֆորդ Շոուն «մոռանում» է հետագայում նշել, թե ի՞նչ բախտի է արժանանում հետագայում գրավված հայկական գյուղերի բնակչությունը, որը շատ ավելի մեծաքանակ էր քաղաքաբնակներից: Ամերիկացի այս հեղինակի սույն ուսումնասիրությունն առանձնանում է իր միակողմանիությամբ: Այսպես, նա ձգտում է մեղմել բացասական երևույթները՝ ցույց տալով միայն դրական կողմերը. համաձայն Շոուի՝ հավաքված քրիստոնյա տղաներից լավագույնները մուտք է գործում բանակ ու արքունիք, սակայն նա չի հիշատակում, թե ի՞նչ բախտի են արժանանում նրանք, ովքեր լավագույնների մեջ չէին մտել: Բնականաբար, նրանց չեն վերադարձրել իրենց ընտանիքներին, այլ վաճառել են ստրկական շուկաներում կամ օգտագործել որպես ծրի աշխատուժ:

<sup>12</sup> S. Shaw, *The history of the Ottoman Empire and modern Turkey*, Vol. 1, *Empire of Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire, 1208-1808*, Cambridge, 1985.



Դեվչիրմե երևույթը եղել և մնում է բուլղար պատմաբանների և արևելագետների համակ ուշադրության ներքո: Ուշագրավ են Ցվետանա Գեորգիևայի աշխատությունները: Մասնավորապես, «Еничарите в българските земи»<sup>13</sup> աշխատությունը յուրահատուկ տեղ է գրավում սույն հարցի ուսումնասիրմանը նվիրված հետազոտությունների շարքում: Հեղինակը հանգամանալի կերպով ներկայացնում է թե՛ համակարգի հիմնադրմանը նախորդող իրավիճակը կայսրությունում, թե՛ դեվչիրմեի իրականացման ողջ մեխանիզմը, ինչպես նաև խոսում է դրա հետևանքների մասին: Աշխատությունն առանձնանում է եվրոպական հարուստ աղբյուրներով:

Խորհրդային և հետխորհրդային շրջանի հեղինակների շարքում հարկ է հիշատակել Մ.Ջուլայանի արժեքավոր աշխատությունը: Ակադեմիկոս Մանվել Ջուլայանն<sup>14</sup> առաջին անգամ հայ ժամանակակից արևելագիտության մեջ անդրադարձել է դեվչիրմե համակարգի խնդիրներին՝ մեծապես օգտվելով հայ ժամանակագրություններից: Մ.Ջուլայանը «Պատմա-բանասիրական հանդեսում» լույս ընծայված իր այս հոդվածում ներկայացնում է դեվչիրմեի իրականացումը հայերի մեջ: Մանվել Ջուլայանի այս հոդվածի առանձնահատկություններից է նաև այն, որ այստեղ նա հիմնավոր քննադատության է ենթարկում թուրք պատմաբան Ուզունչարշուլի՝ օսմանյան պետական կառույցում քափըքուլու զորախմբերի պատմությանը նվիրված վերոհիշյալ աշխատությունը:

<sup>13</sup> Ц.Георгиева, Еничарите в българските земи, Наука и изкуство, София, 1988.

<sup>14</sup> Մ.Ջուլայան, «Դեվչիրմեն» (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, ՊԸՀ, Երևան, 1959, #2-3, էջ 247-256:

Ա.Նովիչևը<sup>15</sup> Օսմանյան կայսրությունում ստրկության պատմության վերաբերյալ իր հողվածում անդրադարձ է կատարում նաև դեվչիրմե ինստիտուտին՝ ներկայացնելով այդ համակարգի էությունը: Նովիչևի ուսումնասիրությունն առանձնանում է վավերագրային հարուստ նյութով: Աշխատանքում, սակայն, զգացվում է թուրք պատմաբան Ուզունչարշըլի ազդեցությունը, քանի որ, բացի օգտագործված մի քանի նույնանուն վավերագրերից, Ա.Նովիչևը Ի.Հ.Ուզունչարշըլի նման սխալմամբ նույնացնում է երկու տարբեր եզրեր՝ «խըլաթ աքչեսին» և «քուլ աքչեսին»։ «Ենիչերիական կորպուսի օրենքների ծագման պատմություն» ձեռագրի անանուն հեղինակի շարադրության տեքստից պարզ է դառնում, որ «խըլաթ բահասը» հարկը գանձվում էր գյուղի բնակիչներից՝ կախված հավաքված տղաների քանակից, մինչդեռ քուլ աքչեսին՝ «կախված գյուղից», այսինքն՝ գյուղի բնակչության քանակից:

Ստրկության համակարգին է վերաբերում նաև պատմաբան Ա.Խառատյանի «Գերության համակարգը Օսմանյան կայսրությունում (XV-XVIIIդդ.)»<sup>16</sup> հողվածը, որտեղ հեղինակը բազմակողմանի ներկայացնում է իրավիճակը կայսրությունում՝ անդրադարձ կատարելով նաև դեվչիրմե համակարգի առանձնահատկություններին:

Սույն հարցի առավել խոր ուսումնասիրման համար առանձնահատուկ արժեք են ներկայացնում Սպերոս Վրյոնիսի<sup>17</sup> հետազոտությունները, որոնցում նա քննարկում

<sup>15</sup> А.Новичев, К истории рабства в Османской империи, Тюркологический сборник 1976, М. 1978, с. 88-108.

<sup>16</sup> Ա.Խառատյան, Գերության համակարգը Օսմանյան կայսրությունում (XV-XVIIIդդ.), «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 2001, #1, էջ 25-33:

<sup>17</sup> S. Vryonis, Jr., The Decline of Medieval Hellenism in Asia Minor and the Process of Islamization from the Eleventh through the Fifteenth Century, Berkley, Los Angeles, London, 1986; S. Vryonis, Byzantine and Turkish societies and their sources of manpower, p. 140-172, in War, Technology and Society in the Middle East, edited by V. Parry and M. Yapp, London, 1975; S. Vryonis, Review of Upsprung and Wesen by B.Papoulia, Balkan

է ոչ միայն Օսմանյան կայսրության ժամանակ գործադրված այս համակարգը, այլև անդրադարձ է կատարում սելջուկյան, բյուզանդական և այլ պետություններում առկա նմանօրինակ երևույթներին: Վրյոնիսի հետազոտություններն աչքի են ընկնում խոր վերլուծությամբ, փաստերի ճշմարտացի ներկայացմամբ, ինչպես նաև փաստագրական նյութի հարստությամբ:

Գրքում բարձրացվող տարբեր հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են Իբն Բատուտայի<sup>18</sup>, Իբն Բիբիի<sup>19</sup>, եվրոպացի ճանապարհորդ Ստեֆան Գերլախի հուշերը<sup>20</sup>, ինչպես նաև բուլղարերենով լույս ընծայված փաստաթղթերի ժողովածուն<sup>21</sup>, որտեղ կազմող Պետո Պետոսովն առանց մեկնաբանությունների ներկայացնում է այնպիսի արժեքավոր նյութեր, ինչպես դեվչիրմեի մասին սուլթանական հրամանները, եվրոպացի ճանապարհորդների հուշերը, ժամանակագիրների տրամադրած տեղեկությունները:

---

Studies, 5 (1964), p. 145-153; S. Vryonis, Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, Band 41, 1964, p.224-252.

<sup>18</sup> Ibn Batoutah, Voyages, trad. par G. Defrémery et B. Sanguinetti, Paris, T. I-IV, 1893-1922.

<sup>19</sup> Ibn Bibi (el-Huseyin b. Muhammed b. Ali el-Caferi er-Rugadi), el-Evamirü'l Ala'iyе fi'l-Umuri'l-Ala'iyе (Selçukname), hazırlayan M. Öztürk, 2 cilt, Ankara, 1996 (այսուհետև՝ Ibn Bibi); H. Duda, Die Seltchukengeschichte des Ibn Bibi, Kopenhagen, 1959 (այսուհետև՝ Duda).

<sup>20</sup> Стефан Герлах, Дневник на едно пътуване до Османската порта в Цариград, Подбор, превод, увод и коментар М. Киселинчева, Предговор и редакция Б. Цветкова, София, 1976.

<sup>21</sup> По следите на насилието, Документи и материали за налагане на исляма, Съставител П. Петров, Част първа, София, 1987.

ԴԵՎԵԻՐՄԵ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՆՐԱ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ  
ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

*Մարդկային ռեսուրսների կառավարումը նախա-  
օսմանական մահմեդական հասարակությունում*

Օսմանյան կայսրության արագ վերելքը, իրար հաջորդող հաղթանակներն ու առաջընթացը դեպի Եվրոպայի կենտրոն Արևելքն ուսումնասիրելու նոր ազդակ հանդիսացան եվրոպացիների համար: Եվրոպացի քաղաքական գործիչները, պատմաբանները փորձում էին գտնել օսմանյան պետության հաջողության գաղտնիքը՝ հետազոտելով արևելյան այդ երկրի յուրահատկություններն ու տարբերությունները: Մասնավորապես, նրանք հույժ հետաքրքրված են եղել Օսմանյան կայսրության կառուցվածքով, որն այդքան տարբերվում էր իրենց քաղաքական ավանդույթներից: Դեռ Մաքիավելին Օսմանյան կայսրությունը համարում էր «թագավորի ու իր ծառաների կողմից» կառավարվող վաղ բյուրոկրատական պետության լավագույն օրինակ՝ ի տարբերություն իր օրերի Ֆրանսիայի, որն ավատատիրական պետություն էր՝ ղեկավարված «թագավորի ու բարոնների կողմից»<sup>22</sup>: Մաքիավելիի՝ Օսմանյան կայսրության կառուցվածքի մեկնաբանության մեջ չկա ոչ գովաբանում, ոչ քննադատություն. նա պարզապես ցանկություն ունի տարբերակել և համեմատել պետության երկու տիպ ու ցույց տալ, որ առաջին դեպքում դժվար կլինի գրավել, սակայն ոյուրին՝ պահել գրավածը, իսկ ավատատիրական պետության դեպքում, ընդհակառակը, ոյուրին կլինի գրավել, սակայն դժվար՝ պահել: Համաձայն Մաքիավելիի՝ հանգուցային տարբերությունը պետության անձնակազմի մեջ է. Օսմանյան կայսրությունում պաշտոնյաները «բոլորը ստրուկներ են ու կախյալ»

<sup>22</sup> Н. Макиавелли, Государь: Сочинения. — М., 1999г., с. 656.

սուլթանից, իսկ Ֆրանսիայի թագավորը «շրջապատված է բազմաթիվ ազնվականներով»<sup>23</sup>:

Մի քանի սերունդ հետո Օժյե դե Բուսբեքը, որը երկու անգամ եղել է Կառլոս V-ի դեսպանը Սուլեյման II Քանունիի (Փառահեղի) արքունիքում<sup>24</sup>, առաջինն էր, որն անձամբ ուսումնասիրել էր օսմանյան պետությունը: Նա տարբերակել է եվրոպացի ղեկավարներին, որոնք կախված են իրենց ազնվականությունից, և օսմանյան սուլթանին, որը տերն է իր հասարակական կառույցներում աշխատող ստրուկների: Բուսբեքը մեկնաբանել է, թե համակարգում ազնիվ արյան պակասը թույլ էր տալիս սուլթանին ընտրել իր ստրուկներին ու առաջ քաշել համաձայն իրենց կարողությունների<sup>25</sup>: Թերևս, առաջին հայացքից *մերիտոկրատիա* թվացող համակարգը հիացնում էր եվրոպացի դիտորդներին: Վերածննդի ժամանակակիցները հիանում էին հեքիաթային սցենարով, երբ հովիվը տեսականորեն կարող էր դառնալ վեհաշուք մեծ վեզիր:

Այն, ինչ Օսմանյան կայսրությունում զարմացնում էր նրանց, վաղուց հաստատված համակարգ էր մերձավորարևելյան մահմեդական պետություններում: Այստեղ լայն տարածում ուներ *մամլուք* երևույթը, երբ անտոհմ ստրուկը կարող էր հասնել ղեկավար պաշտոնների: Դեռ Ա.Լիբյերը նշում էր, որ օսմանյան կառավարման համակարգի ամենամերձավոր պատմական զուգահեռը Եգիպտոսի *մամլուքների* համակարգն է<sup>26</sup>:

*Մամլուքների* ռազմաստրկական ինստիտուտը բացառապես մահմեդական երևույթ է: Ամեն դեպքում, այն

<sup>23</sup> Նույն տեղում, շ. 656.

<sup>24</sup> See The Turkish letters of Ogier Ghiselin de Busbeq, imperial ambassador at Constantinople, 1554-1562, translated from Latin of the Elzevir edition of 1633 by Forster, Oxford, 1968.

<sup>25</sup> M. Kunt, The sultan's servants, the transformation of Ottoman provincial government, 1550-1650, New York, 1983, p.32.

<sup>26</sup> A. Lybier, The Government of the Ottoman Empire in the times of Suleiman the Magnificent, Cambridge, 1913, p.36.


մահմեդական աշխարհից դուրս հիշատակելու արժանի գուզահեռ չունի :

*Մամլուքյան* երևույթի հիմնական պատճառը փնտրում են հենց մահմեդականության բնույթի ու նրա նվաճումների մեջ. մահմեդական կրոնի նպատակն է ողջ աշխարհի մահմեդականացումը՝ գլխավոր միջոց ընդունելով զենքի ուժը: Հետևապես, այն, ինչ արդեն նվաճվել էր մահմեդականների կողմից, անվանվում էր Ղար ալ-Իսլամ (իսլամի աշխարհ), իսկ այն, ինչ դեռ պետք է նվաճվեր՝ Ղար ալ-Հարբ (պատերազմի աշխարհ): Մի կողմից՝ իսլամի գոյության վաղ տարիներին նրա լայն տարածումը, մյուս կողմից՝ նվաճողական հիմնական զաղափարին մահմեդականների նվիրումը անմիջապես ստեղծեցին մի խոր անդունդ՝ զրավյալ տարածքներում կայագործելու և հետագա գործողությունների համար անհրաժեշտ ռազմուժի աճող կարիքի ու Արաբական թերակղզում առկա բավականին սահմանափակ մարդկային ռեսուրսների միջև:

Անհրաժեշտ ռազմուժի սակավության խնդիրը սրվեց արդեն *խալիֆ Օմարի* օրոք: Վերջինս հրամայեց ամենագրավիչ պայմաններով որպես մահմեդական ռազմուժ հավաքագրել պարտված թշնամական միավորներին, ինչպես նաև մահմեդական նվաճողների մահմեդականացված ու ազատ արձակված նախկին ստրուկներին: Ընդ որում, վերջիններս հավասար էին համարվում իրենց նախկին տերերին<sup>27</sup>:

Այս ամենը ցույց է տալիս, թե ինչ ծայրաստիճան կարիքի մեջ էին մահմեդականներն Արաբական թերակղզուց իրենց տարածման սկզբնական փուլում, քանզի իրենց շարքերը համալրում էին ոչ արաբ ռազմուժով: Նման քաղաքականությունը մատնանշում է նաև այն տարածաշրջանը, որտեղից իսլամը այդուհետ սկսեց հավաքագրել իր

<sup>27</sup> D. Ayalon, Preliminary remarks on the Mamlūk Military Institution in Islam, War, Technology and Society in the Middle East, Ed. V.J. Parry and M.E. Yapp, London, 1975, p. 44-45.



446  
25/16

զխաՎոր ռազմուծը՝ իրանա-խորասանյան շրջան և դրանից այն կողմ ընկած թյուրքական տարածքները<sup>28</sup>։

Փաստորեն, քանի որ մահմեդական պետության ոչ մահմեդական բնակիչներն ունեին *զհմմիի* կարգավիճակ ու չէին կարող ստրկացվել, մամլուքյան համակարգում ստրուկների ավանդական աղբյուրն արտաքին աշխարհն էր. ռազմագերիներ՝ ոչ մահմեդական թշնամիներից, ստրուկներ՝ զնված շուկաներից կամ որպես նվեր ստացված բարի-դրացի և կամ վասալ կառավարիչներից<sup>29</sup>։

*Մամլուքյան* երևույթի հզորության ու անընդհատ զարգացման համար անհրաժեշտ էր մեկ պայման. *մամլուքների* անընդհատ մատակարարում։ Այդ պայմանի իրականացումը հիմնված էր մարդկանց (էլ չենք խոսում ցեղապետերի)՝ իրենց ազգակիցներին, ցեղակիցներին վաճառելու պատրաստակամության վրա<sup>30</sup>։ Սա էր ողջ համակարգի հիմքը։ Ասպատակումներն ու առևանգումներ այդքան էլ էական գործոն չէին, որքան այս վերոհիշյալ պատրաստակամությունը<sup>31</sup>։

Մի քանի դար հետո Փոքր Ասիայում Ռումի Սելջուկյանները բախվեցին նման շատ խնդիրների ու միջավայրի գործոնների, որոնք ասկա էին նաև մահմեդական Մերձավոր Արևելքի այլ հիմնական հարստությունների՝ *Աբբասյանների*, *Ղազնևիների*, *մամլուքների* և այլոց մոտ։ Նրանք կառավարում էին բազմակրոն, բազմալեզու ու բազմազգ զանգվածներ, որոնք հաճախ նույնքան օտար կամ նորեկ էին, ինչպես և իրենք՝ սելջուկները։ Այս խառը միջավայրն ու խնդիրները որոշակիորեն արտացոլվում էին կառավարման համակարգում, որի յուրահատկություններից ամենաակնառուս, թերևս, կառավարման ու զինվորական կառույցներում ստրուկների, ինչ-

<sup>28</sup> Նույն տեղում, p. 46.

<sup>29</sup> M. Kunt, *The sultan's servants...*, p. 32.

<sup>30</sup> C. Cahen, *Pre-Ottoman Turkey*, London, 1968, p. 7.

<sup>31</sup> D. Ayalon, *Preliminary remarks on the Mamlūk Military Institution ....*, p. 56.



պես նաև տարբեր ազգային ռազմական խմբերի օգտագործումն էր:

Սելջուկյան ռազմական կառույցում իրենց ուրույն տեղն ունեին խառնածին մահմեդական իղդիշները (*ikdish / iğdiş*), որոնք, սակայն, ունեին զուտ տեղական միլիցիայի գործառույթներ և դուրս էին բանակային կառույցներից: Սելջուկնամեններում խոսվում է իղդիշների հրամանատարների մասին (*Iğdiş başı / Emirülegâdişe*): Պատմաբան Ուզունչարչընը, փորձելով պարզաբանել «իղդիշ» եզրը, բերում է համեմատականներ միջնադարի բառարանագրերից: Այսպես, Վեսաֆի պատմական բառարանում իղդիշ է անվանվում նա, ով միայն մի կողմից է թյուրք: Իբնի Մյուհեննայի բառարանում արաբերեն «այ-մկյուդ» բառը թարգմանված է իղդիշ: Մկյուդ, ըստ Ախթերիի, նշանակում է արաբների մեջ ծնված-մեծացած, սակայն ոչ արաբ: Դրանից հասկանում ենք, որ իղդիշն էլ նշանակում է ոչ հարյուր տոկոսանոց թյուրք<sup>32</sup>:

Պատմաբան Զլոդ Բայենը Սելջուկյանների մոտ կիրառվող այս պրակտիկան դեվչիրմեի՝ որպես պարբերականորեն անցկացվող հարկատեսակի հետ համեմատելու ոչ մի հիմք չի տեսնում<sup>33</sup>: Սակայն, չնայած չի կարելի նույնացնել դեվչիրմեն Սելջուկյանների համակարգում առկա տարրերի հետ, բայցևայնպես օսմանցիները չեն, որ ծանոթացրել են Փոքր Ասիան ստրկական համակարգի հետ: Այսպես, օրինակ, դեռ 1085թ.՝ Անտիոքի գրավման ժամանակ, թյուրքերը մարդկային ռեսուրսների պակասորդ ունեին, ուստի բռնի մահմեդականացրին հայ ու հույն երիտասարդների՝ հետագայում օգտագործելով նրանց ըստ պահանջի<sup>34</sup>:

<sup>32</sup> İ. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilatına medhal, İstanbul, 1941(այսուհետև՝ Medhal), s. 115.

<sup>33</sup> C.Cahen, Pre-Ottoman Turkey..., p.231.

<sup>34</sup> S. Vryonis, Jr., The Decline of Medieval Hellenism in Asia Minor and the Process of Islamization from the Eleventh through the Fifteenth Century, Berkley, Los Angeles, London, 1986, p.240.



Փոքր Ասիայի Սելջուկյանների մոտ առավել տարածված էր ղուլամների համակարգը: *Ղուլամները* սովորաբար հավաքագրվում էին օտար մշակութային կենտրոնից կամ հեռավոր աշխարհագրական տարածքից, երիտասարդ հասակում: Նրանք բերվում էին արքունիք՝ համապատասխան կրթություն ու պատրաստվածություն ստանալու: Արդյունքում՝ ղուլամը, որին պատվաստվել էր ոչ հարազատ մշակույթ, դառնում էր տեսականորեն ավելի հավատարիմ իր տիրոջը, քան տեղացի մահմեդական հպատակները: Բացի այդ, նրանք, շնորհիվ իրենց հոգևոր ու խիստ ուսուցման, դառնում էին ավելի լավ զինվորներ ու կառավարիչներ<sup>35</sup>:

Դեկավարվող տարածքներում ազգայնականության և ընդհանրապես լեզվական, ազգային ու կրոնական միության բացակայության պայմաններում ղուլամական համակարգը հասավ նշանակալի նվաճումների, գոնե մինչև XIII դարը: Այնժամ մոնղոլական փոթորկի առջև այսօրինակ համակարգի վրա հիմնված գրեթե բոլոր հարստությունները քանդվեցին՝ ինչպես խաղաթղթերից պատրաստված տնակներ: Մյուս կողմից՝ ճշմարիտ է, որ ղուլամների նվիրվածությունն առանձնահատուկ էր, և որոշ դեպքերում այն հանգեցնում էր հարստությունների անկման և նույնիսկ «ստրկական» հարստությունների վերելքի՝ ինչպես, օրինակ, *Թուլունյանները*<sup>36</sup>: Թերևս, երկար ժամանակ մահմեդական աշխարհի հյուսիսարևելյան սահմանում բնակվող թուրքմեններն էին համարվում լավագույն *ղուլամներ*՝ մասնավորապես շնորհիվ իրենց ռազմաշունչ ունակությունների: Սակայն *ղուլամների* աղբյուր էին նաև այլ ազգություններ, հնդիկներ, դայլամիտներ, տաջիկներ, վրացիներ, հայեր, հույներ, ռուսներ, լատիններ: Շատ հաճախ նրանք ծեռք էին բերվում Խորասանի, Կովկասի, Փոքր Ասիայի ստրկական

<sup>35</sup> S. Vryonis, Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, Band 41, 1964, p.225.

<sup>36</sup> Նույն տեղում, p.226.

շուկաներում, տրվում որպես նվեր<sup>37</sup> իշխողին՝ այլ ազնվականներից, գերվում նվաճումների և ռազմարշավների ժամանակ, գանձվում որպես հարկ:

Ռուսի Սելջուկյանները Փոքր Ասիան գրավելուց և այնտեղ հաստատվելուց հետո բարդ իրավիճակում հայտնվեցին. XII, XIII և XIV դարերի Փոքր Ասիան դեռ մահմեդականացված ու թուրքացված չէր: Քրիստոնյա հույների, հայերի, վրացիների և սիրիացիների ներկայությունը վկայում էին, որ Կոնիայի Սելջուկյանները ևս լույ մեկ մահմեդական հարստություն էր, որն իշխում էին այդ բազմակրոն, բազմալեզու պետության վրա<sup>38</sup>: Բացի այդ, անիշխան թուրքմենական ցեղերը, որոնք շատ կարևոր դեր էին խաղում Փոքր Ասիան գրավելու և բնակեցնելու գործում, պատրաստակամորեն չէին ծառայում կարգուկանոնին և իշխանությանը<sup>39</sup>: Այս պարագայում, ելնելով այդ ժամանակվա մահմեդական կառավարման համակարգի օրինակներից, զարմանալի չէ, որ *իքթայի* համակարգի վրա հիմնված սելջուկյան ուժերի կողքին ծնվեց ղուլամների ռազմական ու վարչական համակարգը: Կասկածի ենթակա չէ, որ ղուլամները լայնորեն օգտագործվում էին սելջուկների ռազմական ու վարչական համակարգում՝ դառնալով քննարկվող համակարգի անմիջական նախնիները<sup>40</sup>:

<sup>37</sup> Duda, p.114, 121, 320.

<sup>38</sup> Իբն Բատտուտան նշել է 13-14-րդ դարերի Անատոլիայում բազմաքանակ քրիստոնյաների մասին (տես՝ Ibn Batoutah, Voyages, trad. par G. Defrémery et B. R. Sanguinetti, Paris, T. I-IV, 1893-1922):

<sup>39</sup> S. Vryonis, Seljuk Gulams and..., p.226.

<sup>40</sup> Մահմեդական Մերձավոր Արևելքում ղուլամների ավանդույթը ռազմական ու վարչական համակարգում նկարագրված է հետևյալ գրքում. İ. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilatına medhal, İstanbul, 1941: Սելջուկյան ժամանակաշրջանում ղուլամների գոյության ու գործունեության հիմնական աղբյուրն է Իբն Բիբիի «Սելջուկնամեն», որը գրի է առնվել 13-րդ դարում՝ Ibn Bibi (el-Huseyin b. Muhammed b. Ali el-Caferi er-Rugadi), el-Evamirü'l Ala'ıye

Երիտասարդ *ղուլամների* հիմնական աղբյուրը «պատերազմի աշխարհն» էր<sup>41</sup>, քանի որ սելջուկները պատերազմներ էին մղում Տրապիզոնի ու Նիկեայի հույների դեմ՝ հյուսիսում ու արևմուտքում<sup>42</sup>, Կիլիկիայի հայերի դեմ՝ հարավում<sup>43</sup>, ինչպես նաև կովկասյան տարածաշրջանի ժողովուրդների<sup>44</sup> և Ղրիմի բնակիչների<sup>45</sup> դեմ: Սուլթաններն ակնհայտորեն կիրառում էին ավարի մեկ հինգերորդը պահանջելու իրենց իրավունքը՝ համաձայն *զանիմաթի* օրենքի<sup>46</sup>: Սակայն ինչպես արդեն նշել ենք, զուլամները ձեռք էին բերվում նաև այլ ուղիներով: Օրինակ, հնարավոր է, որ զուլամների մի որոշ մաս ժամանակ առ ժամանակ հարկվում էր սելջուկյան տարածքների հպատակներից, ինչպես հետագայում օսմանյան դեվշիրմենները<sup>47</sup>:

Քրիստոնյա հույների բազմությունը զուլամների շարքերում, թերևս, բացատրվում է Բյուզանդիայի հարևանությամբ ու անընդհատ արշավանքներով, որոնք թույլ էին տալիս գերել անթիվ բնակչություն: Բազմաթիվ են եղել նաև հայ զուլամները, քանի որ հայերը եղել են թե սելջուկների հպատակներ, թե՛ բազմիցս գերեվարվել են Կիլիկիայի դեմ արշավանքներից<sup>48</sup>:

*Ղուլամները* Սելջուկյանների մոտ գրավում էին կարևոր պաշտոններ ու մեծ դեր ունեին քաղաքական կյանքում<sup>49</sup>: Փոքր Ասիայում *ղուլամները* լայնորեն

fi'l-Umuri'l-İla'iye (Selçukname), hazırlayan M. Öztürk, 2 cilt. Ankara, 1996:

<sup>41</sup> Duda..., p.60.

<sup>42</sup> Նույն տեղում, p.63.

<sup>43</sup> Ibn Bibi, c.2, s.85-86. Duda, p.238.

<sup>44</sup> Նույն տեղում, c.1, s. 421-423. Duda..., p.176-178.

<sup>45</sup> Նույն տեղում, c.1, s.324. Duda..., p.139.

<sup>46</sup> Նույն տեղում, c.1, s.166. համաձայն այդ օրենքի՝ սուլթանին էր պատկանում ավարի մեկ հինգերորդ մասը:

<sup>47</sup> İ. H. Uzunçarşılı, Medhal..., p. 115-116.

<sup>48</sup> Duda..., p.238.

<sup>49</sup> Duda..., p.52, 54, 59, 128, 197, 210, 254, 330, 341 ևն. Ibn Bibi, c.1, s. 158-159.

օգտագործվում էին սուլթանների ու *էմիրների* կողմից նաև XIII դարում: Այսպես, մենք տեղեկանում ենք, որ խլաթ քաղաքի նվաճումից հետո 1000 արքունի *ղուլամներից* բաղկացած մի զորամիավորում թողնվում է քաղաքում՝ գործերը կարգավորելու համար<sup>50</sup>: Աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ *ղուլամների* ստվար զանգվածներ ունեին նաև առավել խոշոր *էմիրները*, որոնք ընդվզումների ժամանակ օգտագործում էին իրենց ղուլամական բանակները<sup>51</sup>:

Թեև XIII դարի աղբյուրներում բացակայում է Կոնիայի պալատական անցուղարձի համակարգված նկարագրությունը, սակայն առկա են բավական մեծ թվով տեղեկություններ, որպեսզի պարզ լինի, որ պալատական տարբեր ծառայություններ ղեկավարվել են ու իրականացվել *ղուլամների* կողմից: Գոյություն է ունեցել պալատական դպրոց՝ ղուլամխանե, վեզիրի պալատին կից<sup>52</sup>, որտեղ երիտասարդ *ղուլամներին* կրթում էին *բարաները*<sup>53</sup>: Որոշակի փուլում երիտասարդները նշանակվում էին պաշտոնների, իսկ նրանց ղեկավարում էին ավելի հասուն ստրուկներ:

Բնականաբար, բացի պալատական ծառայություններից, Սելջուկյան սուլթաններն ունեին նշանակալի թվով ստրկական զորքեր՝ համաձայն այդ ժամանակաշրջանի իսլամական աշխարհի ավանդույթի<sup>54</sup>:

Իբն Բիբին նույնպես պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ Սելջուկյանների մոտ ղուլամները կարևոր դերակատարում ունեին: XIII դարում Փոքր Ասիայում գործող ղուլամական համակարգն ակնհայտորեն հաջողված էր մի քանի տեսանկյունից: Այն պատրաստել է թե՛ ռազմական, թե՛ վարչական, թե՛ մահմեդական մշակույթի ոլորտների ունակ

<sup>50</sup> Ibn Bibi..., c.1, s. 425-428.

<sup>51</sup> Duda..., p. 117-122, 330.

<sup>52</sup> Նույն տեղում, p. 242.

<sup>53</sup> Նույն տեղում, p. 330.

<sup>54</sup> S. Vryonis, Seljuk Gulams and..., p.231.

ու շնորհալի գործիչներ, որոնցից ամեն մեկն իր ուրույն ներդրումն է ունեցել սելջուկյան պետությունում: Համակարգի պատասխանատվությունն էր ապահովել այս երիտասարդ ստրուկների լավ պատրաստվածությունը: Ժամանակի ընթացքում ղուլամները և նրանց սերունդները ծուլվեցին Փոքր Ասիայի մահմեդական հասարակության մեջ:

\*\*\*

XIII դարի վերջին ու XIV դարի սկզբին՝ Սելջուկյան պետության անկման ժամանակաշրջանում, *ղուլամների* օգտագործումն այդքան էլ լավ փաստագրված չէ: Անկասկած, դրա պատճառն աղբյուրների պակասն է, ոչ թե այդ երևույթի իրական անհետացումը: Իրարից անկախ աղբյուրները, որոնք վերաբերում են XIV դարի Փոքր Ասիային, վկայում են, որ քրիստոնյա ստրուկները նույնքան բազմաքանակ էին, որքան նախկինում, և որ թյուրք *էմիրները* շահագործում էին *ղուլամներին* իրենց կառավարչական ու ռազմական համակարգերում:

XIV դարի առաջին կեսին, երբ Մաուրեթոս Եփեսացին առաջին անգամ գրավում է Եփեսոսի միտրոպոլիտի աթոռը, նա սարսափում է այդ շրջանում հույն ստրուկների բազմությունից: Մահմեդական հեղինակները ևս նշում են, որ արևմտյան Փոքր Ասիայի թուրքմենական ցեղերը շարունակաբար արշավում էին հունական հողեր ու բազմաթիվ գերիներ բերում, ընդ որում, նրանք հատկապես առանձնացնում էին հույն երեխաներին<sup>55</sup>:

Սվազն այդ ժամանակաշրջանում հանդիսանում էր ստրուկների կարևոր շուկա, որտեղ միշտ կարելի էր երիտասարդ ստրուկներ գնել<sup>56</sup>: Այսպես, Իբն Բատուտան Փոքր Ասիայի արևմտյան մասում իր ճանապարհորդության ժամանակ հավաքել էր որոշ քանակությամբ երիտասարդ

<sup>55</sup> Նույն տեղում, p.240.

<sup>56</sup> İ. H. Uzunçarşılı, Medhal.... p. 442.

ստրուկներ, որոնցից ոմանց նա գնել էր, ոմանց՝ ստացել որպես նվեր<sup>57</sup>:

Նկատի ունենալով, որ քրիստոնյա ստրուկներն այդքան մեծ թիվ էին կազմում XIV ու XV դարերում, պետք է ակնկալել, որ իշխանությունների վարչական ու ռազմական համակարգում իր շարունակությունն ուներ *ղուլամներ* պահելու սկզբունքը:

Այսպիսով, երբ XV դարում օսմանցիները գրավեցին *Փոքր Ասիայի* մեծ մասը, այդ տարածքների քրիստոնյա երիտասարդների օգտագործումը պետական ծառայության մեջ արդեն ուներ գրեթե երեքդարյա պատմություն: Դեվլչիրմեն որպես քրիստոնեական աղքյուրից ստացված մարդուժի գործածում ռազմավարչական ապարատում, նորություն չէր իսլամական աշխարհում: Սակայն տղայահավաքներն ուսումնասիրողներն ընդունում են, որ օսմանյան ստրկական համակարգը նման համակարգերից ամենից զարգացածն է եղել<sup>58</sup>: Փաստորեն, դեվլչիրմե համակարգը յուրահատուկ է նրանով, որ տղաների հարկն ստիպողաբար ու պարբերաբար հավաքվում էր քրիստոնյա հպատակներից<sup>59</sup>, այսինքն՝ մարդուժի կարիքը բավարարվում էր ներքին աղքյուրից:

Օսմանցիները չէին, որ պետք է ծանոթացնեին Փոքր Ասիայի քրիստոնյա բնակչությանը ստրկության հետ, սակայն նրանք էին, որ անտեսելով բոլոր գրված ու չգրված օրենքները՝ իրենց համար ստրուկ էին հավաքում ոչ թե ռազմագերիներից կամ ասպատակությունների արդյունքում, այլ իրենց սեփական հպատակներից՝ դարձնելով այդ պրակտիկական պարբերական ու մտցնելով այն հարկային համակարգ:

<sup>57</sup> Ibn Batoutah..., T. II, 1914, XIV+465 p., p. 307, 309, 310-311, 317.

<sup>58</sup> А. Тойнби, Постыжение истории, М., 2004, с. 198.

<sup>59</sup> M. Kunt, State and sultan up to the age of Süleyman: frontier principality to world empire, Suleyman the Magnificent and his age, the Ottoman Empire in the early modern world, edited by M. Kunt and Ch. Woodhead, London and New York, 1995, p. 15.

*Փենջիքը որպես մարդկային ռեսուրսների  
կառավարման միջոց*

Օսմանյան որոշ պատմագիրներ փորձել են դեվչիրմեի սկզբնավորումը ներկայացնել որպես սուլթանի հանձարեղ «հորինվածք»<sup>60</sup>, ինչպես, օրինակ, Սաադեդդինը<sup>61</sup> կամ «Ենիչերիական կորպուսի օրենքների ծագման պատմության» ձեռագրի անանուն հեղինակը<sup>62</sup>: Իսկ գերմանացի հետազոտող Բ.Պապուլիան դեվչիրմե համակարգի սկզբնավորումը վերագրում է Օրհան I-ի ժամանակներին<sup>63</sup>: Այս մոտեցումն իրավացիորեն քննադատել է Ս.Վոյոնիսը իր գրախոսականում<sup>64</sup>:

Դեվչիրմեն ստեղծվել է նախորդող համակարգի աստիճանական զարգացման ու վերափոխման արդյունքում: Մանկահավաքից առաջ օսմանյան պետությունում գործում էր փենջիք համակարգը: Հարկվում էին պատերազմի ժամանակ գերի վերցված զորահրամանատարները և զինվորները. զանձվում էր ռազմագերու արժեքի

---

<sup>60</sup> Նրանք, ենիչերիական զորաբանակի ստեղծման պարագաները նկարագրելիս, տեղեկացնում են, թե յայտ գորքը այքի էր ընկնում իր վերին աստիճանի անկարգապահությամբ, ինչը ստիպեց Մուրադ I-ին կազմավորել նոր բանակ (ենի չերի): Համաձայն հեղինակների՝ բոլոր քաղիներին հրամաններ են ուղարկվում ոչ մահմեդականների միջից պատանիների հավաքի վերաբերյալ: Այսպիսով հավաքվում է հազար հոգի, որոնք էլ կազմում են նոր զորքի կորիզը:

<sup>61</sup> И. Петросян, К истории создания янычарского корпуса, Туркологический сборник 1978, М., 1984, с. 194.

<sup>62</sup> Stü. Mebde-и канун-и йеничери оджагы тарихи (История происхождения законов янычарского корпуса), Издание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели И. Петросян, Москва, 1987.

<sup>63</sup> В. Papoulia, Ursprung und Wesen der "Knabenlese" im osmanischen Reich, Munich, 1963, p.71.

<sup>64</sup> Ավելի մանրամասն տե՛ս S. Vryonis, Review of Upsprung and Wesen by B.Papoulia, Balkan Studies, 5 (1964), p. 145-153.



մեկ հինգերորդը<sup>65</sup>: Արժեքը պետության կողմից նշանակված էր 125 *աքչե*, այսինքն՝ գանձվում էր 25 *աքչե* գումար<sup>66</sup>: Փենջիքը կիրառվում էր նաև գերի ընկած քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ. գերյալ քրիստոնյաները պարտավոր էին թուրքերին հանձնել կամ իրենց յուրաքանչյուր հինգ հոգուց մեկին թուրքական բանակի շարքերը լրացնելու նպատակով, կամ համապատասխան փրկագին<sup>67</sup>: Այն սկիզբ էր առնում Ղուրանից ու շարիաթի հարկային համակարգում մահմեդականներից գանձվող ամենակարևոր հարկերից մեկն էր. «Եվ իմացեք, եթե դուք վերցրել եք ավար, ապա Ալլահինն է հինգերորդ մասը... Այն, ինչ նախատեսված է Ալլահի ու իր մարգարեի համար, ուղղվում է հասարակական կարիքների բավարարմանը, որոնք սահմանել է մարգարեն իր կյանքի ընթացքում ու որոնք սահմանում է իմամը նրա մահվանից հետո<sup>68</sup>»: Այսպիսով, սուլթաններն օգտագործում էին այդ իրավունքն ու պահանջում ավարի մեկ հինգերորդ մասը<sup>69</sup>:

Համաձայն օսմանյան պատմագիր Աշըբփաշազադեի՝ փենջիքը Օսմանյան կայսրությունում զործածության մեջ է դրվել Մուրադ I-ի ժամանակ: Նա հիշատակում է մի փաստ, երբ *ուլեմաներից* Քարա Ոյուսեմի առաջարկով Մուրադի ակնառու զորահրամանատարներից էվրենոզ

<sup>65</sup> Փենջիք բառը հենց առաջացել է պարսկերեն «*panđj yak*»-ից՝ 1/5: Այն հավասարազոր է արաբական *khums*-ին (Pendjik, The Encyclopedia of Islam, edited by B.Lewis, Ch. Pellat and J. Schacht, Leiden, 1995, Vol. VIII, p. 293-294).

<sup>66</sup> А. Шамсутдинов, Проблема становления османского государства по турецким источникам XIV-XV вв., Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, (сборник статей), под ред. С. Орешковой, Москва, 1986, с. 35.

<sup>67</sup> Մ. Ջուլայյան, նշվ. աշխ., էջ 248.

<sup>68</sup> Толкование священного корана на арабском и русском языках, Каир, 2000г., Аль Анфаль, 41-42.

<sup>69</sup> S. Vryonis, Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, Band 41, 1964, p.227-228.



բեյին հրաման էր տրվել ասպատակել «անհավատների» երկիրն ու կենդանի ավարի մեկ հինգերորդ մասը հանձնել Մուրադին: Ինչպես հաղորդում է Ալըքփաշազադեն, ռազմագերիներն այնքան շատ էին, որ *քազասքեր* Չանդարլը Խալիկն առաջարկեց հանձնել վերջիններիս անատոլական թուրքերին, որպեսզի նրանց ուսուցանվի թուրքերեն լեզուն: Գերիները մահմեդականացվում էին, նրանց աշխատեցնում էին, իսկ հետո ուղարկում Մուրադի մոտ<sup>70</sup>: Այսպես էլ կազմվում է, ըստ Ալըքփաշազադեի, ենիչերիական զորաբանակը:

Փենջիքով սուլթանին հասած գերիները ոչ միայն համալրում էին ենիչերիական զորաբանակն, այլև դառնում էին սուլթանի անձնական ստրուկները, նրա թիկնազորի անդամները և այլն:

Փենջիքով ստացված արական սեռի ներկայացուցիչները (փենջիք օղլանը<sup>71</sup>) դասակարգվում էին, և համաձայն դրա էլ հավաքվում էր հարկը: Դասակարգման հիմքում տարիքային խմբերն էին. մինչև երեք տարեկանները՝ *շիրիոր*, այսինքն՝ կաթ ծծող, երեքից ութ տարեկանները՝ *բեչե* (ծագ), ութից տասներկու տարեկանները՝ *դուլամչե* (փոքր երեխա), հասունության տարիքին հասածները՝ *դուլամ*: *Քանուննամներում* հիշատակվում են նաև *սաքալլը* (մորուք ունեցող) տղաները, իսկ արդեն տարիքն առած տղամարդկանց անվանում էին *փիր*, այսինքն ծեր<sup>72</sup>:

Սկզբնական փուլում բանակի համար հավաքվող գերիների տարիքին ուշադրություն չէին դարձնում: Ճակատամարտի ժամանակ պիտանի լինելու համար մի կարճ նախապատրաստական աշխատանք էին անցկացնում ու ընդունում զորաբանակ: Այս մեթոդը, սակայն,

<sup>70</sup> İ. H. Uzunçarşılı, Osmanlı devlet teşkilâtından kapıkulu ocakları, I, Ankara, 1943, s. 6-7 ( Այսուհետ՝ İ. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları).

<sup>71</sup> M. And, XVI. yüzyılda acemi ve yeniçeri ocağı, I, «Tarih» mecmuası, İstanbul, 1971, Haziran, Cilt 1, Sayı 1, s. 11.

<sup>72</sup> İ.H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s. 9-10.

հետագայում փոխվեց: Օրենք ընդունվեց աջեմի զորաբանակ՝ ընդունել միայն 10-20 տարեկան զերի տղաների<sup>73</sup>:

Նվաճումների ընդարձակման հետևանքով ստացված մեծաքանակ փենջիք օղլաններն արդեն շատ էին Գեյիբուլուի աջեմի զորամասի նավակային ծառայությունների համար, և այսուհետ նրանց սկսեցին ուղարկել Փոքր Ասիա՝ ցածր վարձավճարով ծառայելու օսմանյան տերության սահմաններում գտնվող հողատերերին: Կարծիք կար, որ Փոքր Ասիայում մահմեդական ու թյուրքական մշակույթին ավելի մերձենալով՝ փենջիք օղլանները բանակում ավելի վստահելի կլինեին: Այսպիսով, եվրոպական արշավանքներից ստացված այս ռազմագերիներին ուղարկում էին Փոքր Ասիա, քանի որ, նախ, օսմանցիները *Ռումելիում* դեռ այդքան էլ լավ չէին հաստատվել, երկրորդ, ավելի էր բարդանում գերիների փախուստը, քանի որ այս դեպքում նրանք պետք է անցնեին նաև ջրային արգելքը՝ Մարմարա ծովն ու նեղուցները: Չնայած գործնականում նույնիսկ այստեղից փախուստներ էին գրանցվում<sup>74</sup>:

Հետագայում նման պրակտիկան կիրառվում էր նաև դեվչիրմեով հավաքված տղաների դեպքում:

### *Անցում փենջիքից դեվչիրմեի*

Փաստորեն, եթե ընդունենք, որ փենջիքը զանձվում էր միայն գրավված տարածքներից, ապա ենթադրվում է, որ բալկանյան (ինչպես նաև հայկական և այլ) գրավյալ տարածքներից փենջիք զանձվել է միայն մեկ անգամ՝ նվաճման ժամանակ:

\* Աջեմի զորաբանակի մասին ավելի մանրամասն տե՛ս երրորդ գլխում:

<sup>73</sup> I. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s. 10-11.

<sup>74</sup> Նույն տեղում, s. 11.

Սակայն սա ամենևին էլ չի նշանակում, որ դրանով ստրուկների հոսքը կայսրություն դադարեց<sup>75</sup>:

Փենջիքը չէր բավարարում օսմանցիների մարդկային ռեսուրսների պահանջարկը<sup>76</sup>: Պատճառն անընդհատ ընդլայնվող զավթումների քաղաքականությունն էր, որը թագմական ուժի անընդհատ աճ էր պահանջում: Այդ քաղաքականության մեջ կարճ դադար տեղի ունեցավ միայն 1402թ. Անկարայի ճակատամարտից հետո<sup>77</sup>: Տասնամյա երկպառակտչական պատերազմներից հետո Մեհմեդ I-ի օրոք (1413-1421թթ.) շարունակվեցին օսմանյան նվաճումները, սակայն արդեն այլ ներքին պայմաններում: Վաղ ավատատիրական հարաբերությունները փոփոխություններ էին կրել օսմանյան հասարակությունում. հրաժեշտ էր տրվել զարգացման թե՛ ցեղային, թե՛ սելջուկյան մոդելներին:

Նոր պայմաններում, չնայած օսմանցիների անվիճելի հաջողություններին, հնարավոր չէր անսահմանափակ գերել գրավյալ տարածքների ազգաբնակչությանը: Նվաճումը սկսվում էր կիսաքոչվորների ասպատակություններով, որոնց գլխավոր նպատակը կողոպուտն էր ու գերեվարությունը, և, ի վերջո, վերափոխվում տարածքների համար նոր պատերազմի: Օսմանյան ազրեսիան, որը տարվում էր «արդար կրոնի տարածման» նշանաբանով, նոր հողեր գրավելու նպատակ էր հետապնդում, որոնք այնուհետև բաժանվում էին որպես պայմանական կամ մշտական տիրույթներ՝ ձևավորելով ավատատիրական նոր դասակարգ: Նոր նվաճված շրջանում ընտրյալները ստանում էին վիթխարի հողային տիրույթներ՝ *խասեր* կամ *մյուլքեր*, իսկ *սիպահիները*, որոնք

<sup>75</sup> A. Željazkova, Social aspects of the process of islamization in the Balkan possessions of the Ottoman Empire, Études balkaniques, 3, 1985, Sofia, p. 109.

<sup>76</sup> Y. Ercan, Devşirme sorunu, Belleten, Aralık, 1986, s.712.

<sup>77</sup> 1402թ. օսմանյան սուլթան Բայազեդ I-ը ծանր պարտություն կրեց Լենկ Թեմուրի զորքերից (İ.H. Uzunçarşılı, Osmanlı Tarihi, Ankara, 1947, c.1, s.166).

հիմնական ռազմական ուժն էին հանդիսանում, մասնակցում էին ռազմական գործողություններին համաձայն այն պայմանների, որոնցով նրանց էին տրամադրվել իրենց հողակտորները՝ *թիմարները* կամ *գեամեթները*<sup>78</sup>: Սա բերեց այն բանին, որ այլևս անհնարին դարձավ զանգվածաբար ստրկացնել գրավյալ տարածքի ժողովրդին այնպես, ինչպես դա անհրաժեշտ էր օսմանյան բանակին՝ զավթումները շարունակելու համար: Դա կնշանակեր ավատատիրական տիրույթները զրկել աշխատավոր ձեռքից, առանց որի դրանք այլևս գոյություն չէին ունենա: Հողերի ամայացումը հակասում էր նաև կենտրոնական իշխանության շահերին: Այդ ժամանակաշրջանում հիմնվում էր վարչական ապարատը, ծևավորվում սուլթանի արքունիքը, որն արդեն մեծապես տարբերվում էր հին ժամանակների բեյլիքի բարբարոսական ճամբարից: Այդքան ծախսերի համար բավարար չէր կարող լինել գերիների վաճառքից եկող անկայուն եկամուտը: Ինչպես և բոլոր պետություն կազմող հասարակություններում, այստեղ ևս պետք էր ապահովել մշտական եկամուտ հարկերի միջոցով, որոնք հավաքվելու էին հպատակ ժողովուրդներից: Այսպես, հակառակ ռազմական հաջողություններին ու տարածքային ընդարձակմանը, ռազմագերիների, ներհոսքը զգալիորեն պակասեց, ինչի հետևանքով պակասեց ռոճիկ ստացող օսմանյան հետևակի համալրումը:

Երկրորդ գործոնը, որը նույնպես ունի մանրամասն բացատրության կարիք, օսմանյան պետությունում կրոնա-էթնիկական իրավիճակն էր: Այն իր սահմաններում ներառում էր մահմեդականների և քրիստոնյաների, ընդ որում, վերջինների համաձայնությունն ու զանգվածը նորանոր նվաճումների հետևանքով անընդհատ աճում էին, ինչը միջին դարերի համար լուրջ խնդիր էր: Օսմանցիների նախորդները համախմբում էին իրենց տարակազմ բնակչությունը համաձայն մեկ կրոնի սկզբունքի: Օսմանյան

<sup>78</sup> В. Мутафчиева, Аграрните отношения в Османската империя през 15-16в., София, 1962., с.33-35.

կայսրությունը չէր կարող կիրառել նույն սկզբունքը: Ի հայտ գալով Փոքր Ասիայում՝ այն զարգացրել էր բռնատիրության մի տարբերակ, որի պետական կրոնը մահմեդականությունն էր: Սակայն դեպի Բալկաններ, հետագայում նաև դեպի Հայկական բարձրավանդակ տարածվելով՝ այն ներառեց նաև քրիստոնյա ժողովուրդներ, որոնք քանակական առումով գերազանցում էին մահմեդականներին: Ինչպես արդարացիորեն նշել է պատմաբան Ա.Թոյնբին, «մեկ այլ քաղաքակրթության հանդեպ վերահսկողությունը պահպանելն ավելի բարդ է, քան այն սահմանելը»<sup>79</sup>: Նոր նվաճված տարածքներում իշխանությունը պահպանելու համար օսմանյան պետությունը ջանում էր արագ կերպով ավելացնել մահմեդական տարրը: Սակայն դեռ առաջին քայլերը ցույց տվեցին, որ մահմեդականացման դասական միջոցները, որոնք կիրառվում էին այն ժամանակվա մահմեդական հասարակությունում, Բալկաններում այդքան էլ արդյունավետ չէին: Դրա պատճառը մահմեդականության դեմ ներքին դիմադրությունն էր, որը հավանաբար բխում էր բալկանյան ժողովուրդների պետականաստեղծման երկար պատմությունից և գյուղատնտեսական հարաբերությունների զարգացած լինելուց<sup>80</sup>: Այնտեղ քրիստոնեությունը հնուց ի վեր հաստատված էր որպես գաղափարախոսություն, որին համապատասխան ստեղծվել էր կենցաղային, իրավական, բարոյական ու ավանդական նորմերի միջավայր: Մահմեդականությունը, որն ի հայտ է եկել քոչվորական կենցաղի արմատներ ունեցող տնտեսություններով հասարակությունում, չէր կարող ոյուրությամբ ներմուծվել այստեղ:

Որպեսզի նոր նվաճումը լինի ապահով՝ օսմանցիներն օգտագործում էին զաղութացման ու զանգվածային բռնազաղթման (☩☩☩) մանրամասն մշակված համակարգ: Գյուղի կամ նույնիսկ քաղաքի անհնազանդ քոչվորները կամ ապստամբ բնակչությունը,

<sup>79</sup> А. Тойнби, Постигжение истории, М., 2004, с. 198.

<sup>80</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи, София, 1988, с. 69-70.

որն անհանգստություն էր պատճառում կամ կարող էր պատճառել, տեղափոխվում էին կայսրության հեռավոր մասեր: Օսմանյան կայսրությունը նաև մեծապես մտահոգված էր նվաճված տարածքներում թուրքերի բնակեցմամբ:

Հին օսմանյան ժամանակագիր Աշըքփաշազադեի մոտ Գալլիպոլիի թերակղզու առաջին նվաճման մասին կարդում ենք. «(Սուլեյման փաշան՝ որդին Օրհան դագիի, տեղեկացնում է իր հորը, որ) մեծաքանակ մահմեդական բնակչություն է պահանջվում այս գրավված տարածքներում ու ամրոցներում... Օրհանը հավանություն է տալիս դրան ու բռնագաղթեցնում Ռում-իլի Քարա Արաբներ կոչվող քոչվորների, որոնք եկել էին իր տարածք: Նոր ընտանիքներ ամեն օր գալիս էին Քարասիից...»<sup>81</sup>: Մենք նաև կարդում ենք. «Սուլեյման փաշան հրամայեց՝ տարեք քրիստոնյա զինյալներին (Եվրոպայում գտնվող) ամրոցներից և ուղարկեք նրանց Քարասի (Փոքր Ասիայում), որպեսզի նրանք չկարողանան ապագայում մեզ անհանգստացնել»<sup>82</sup>:

Ժամանակագրություններում գրանցված բռնագաղթերի նման օրինակները շատ են: Ակներևոր են զանգվածային բռնագաղթերը կիրառվում էին օսմանյան պետության կողմից վաղ ժամանակներից:

Ավելի ուշ ժամանակաշրջանների փաստաթղթերը հաստատում են զանգվածային բռնագաղթի հին ավանդույթներն ու տալիս հետաքրքիր մանրամասներ: Համաձայն բռնագաղթի վերաբերյալ կայսերական որոշման, որը թվագրված է 1572 թվականով, *Անատոլիայի*, Ռումի (Սվազ), Քարամանի ու Ջուլքադրիյեի շրջանների ամեն տասը ընտանիքից մեկը պետք է ուղարկվեր նոր գրավված Կիպրոս: Այս բռնագաղթի շարժառիթը կղզու կյանքի վերականգնումն էր ու անվտանգությունը: Վերաբնակիչներն ընտրվում էին հասարակության յուրաքանչյուր խավից.

<sup>81</sup> H. İnalcık, *The Ottoman Empire: Conquest, Organization and Economy*, London, 1978, p. 122.

<sup>82</sup> Նույն տեղում, p. 122-123.

գյուղացիություն, արհեստավորներ և այլն: Ինչևհետե, կղզի ուղարկվող առաջին վերաբնակիչները գյուղացիներ էին՝ ոչ բերրի տարածքներից, աղքատներ, անգործներ ու քոչվորներ: Այս մարդիկ գրանցվում էին *դեֆթերներում* ու տեղափոխվում կղզի: Քանի որ սովորաբար այս մարդիկ չէին ուզում լքել իրենց տները, այդ գործով զբաղվող պաշտոնյաներին հրամայված էր դա իրականացնել ամենայն խստությամբ: Ավելի ուշ Կիպրոս էին ուղարկվում դատապարտված վաշխառուներն ու հանցագործները՝ որպես պատիժ:

[ Հայտնի են Մեհմեդ II-ի (1451-1481) կողմից կազմակերպված զանգվածային բռնագաղթերը Սերբիայից, Ալբանիայից, Մորեայից ու Քաֆայից դեպի Ստամբուլ: Գլխավոր նպատակն էր ապահովել նոր մայրաքաղաքի բարգավաճումը: ] Բռնագաղթվածների մեծ մասը պատերազմի գերիներ էին ու տեղավորվել էին Կոնստանդնուպոլսի շրջակա գյուղերում՝ որպես սուլթանի գյուղացի ստրուկներ<sup>83</sup>:

[ Քրիստոնյա երկիր զանգվածային բռնագաղթի հետաքրքիր օրինակ է մահմեդական *ռայա* 1025 ընտանիքների տեղափոխումը Փոքր Ասիայից բուլղարական մի շրջան՝ Պրավադի: Այս մարդկանց տրվել էր բռնագաղթվածների հատուկ կարգավիճակ, և նրանցից կազմավորվել էր առանձին վարչական միավոր: Այս մարդիկ առանձնացված էին մնացել մինչև XVI դարի կեսերը, երբ արդեն ծուլված էին տեղաբնիկ ռայաների հետ:

[ Տրապիզոն բռնագաղթի օրինակ է նաև XV դարում մի խումբ ալբանացիների բռնի տեղափոխումը: ] Այսպիսով, օսմանյան արխիվներից բերված օրինակները փաստերով հաստատում են նաև վաղ ժամանակագրությունները, որոնք ցույց են տալիս, որ զանգվածային բռնագաղթերն օգտագործվել են օսմանցիների կողմից որպես նոր նվաճված տարածքների վերակազմակերպման միջոց<sup>84</sup>:

<sup>83</sup> Նույն տեղում, p. 123.

<sup>84</sup> Նույն տեղում, p. 123-124.



Ուսումնասիրելով այս բռնագաղթերի մեթոդները, ինչպես նաև բնակավայրերը, գալիս ենք այն եզրահանգման, որ մահմեդական բնակչություն ունեցող եվրոպական ու հայկական տարածքների մեծ մասը կազմված էր ոչ միայն կրոնափոխված տեղաբնիկներից, այլև այդտեղ գաղթած թուրքերից: Այսպես էր նաև արևմտյան Փոքր Ասիայի դեպքում, երբ հարուստ Արևմուտքը հրապուրում էր ասիական հինթերդանդի բնակիչներին: Այն, որ 1270-1330թթ. դազիական բեյլիքների կողմից գրավված արևմտյան Փոքր Ասիան արդեն XIV դարում ուներ բազմաքանակ թուրքական բնակչություն, փաստագրված է 1455թ. թվագրված մի օսմանյան դեֆթերում<sup>85</sup>: Փաստորեն, ստացվում է, որ արևմտյան Փոքր Ասիայի թուրքացումն ընթացել է XV դարում Բալկաններում տեղի ունեցած գործընթացի նման ու ոչ թե միայն զանգվածային կրոնափոխության, այլ նաև թուրքերի զանգվածային տարաբնակեցման արդյունք էր:

Սակայն Փոքր Ասիայից եվրոպական տիրույթներ և կամ այդտեղից Փոքր Ասիա բնակչության տեղափոխումներն արագորեն ցույց տվեցին իրենց համեմատաբար անարդյունավետ լինելը<sup>86</sup>: Մահմեդական վերաբնակիչ խմբերը դժվար էին համակերպվում նոր պայմաններին, համաձայն որոնց՝ պետք է ընդմիշտ անցնեին նստակյաց կյանքի: Վերաբնակիչների նշանակալի մի մաս, ինչպես, օրինակ, յուրյուքները, շարունակեցին իրենց քոչվորական կյանքը նաև XVI դարից հետո<sup>87</sup>: Իսկ բալկանյան ազգաբնակչության բռնագաղթը Փոքր Ասիա չէր կարող լինել անսահմանափակ, քանի որ բերքատու շրջանները կորկվեին աշխատանքային ձեռքից: Հիմնական մեթոդները, որոնց օգնությամբ օսմանցիները ջանում էին ենթակայության տակ պահել իրենց թվապես գերակշռող գրավյալ ժողովուրդներին, համաձայն

<sup>85</sup> Նույն տեղում, p. 127.

<sup>86</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս. Н. Тодоров, Балканский город 15-19 веков : социально-экономическое и демографическое развитие, Москва, 1976.

<sup>87</sup> Ղ. Երեմեն, Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 181-186.



թուրք պատմաբան Մ.Թ.Գյոքքիլզինի, ենիչերիական զորաբանակում զինվորական ծառայությունն էր ու մահմեդականացումը<sup>88</sup>։

Բալկանյան երկրների արիստոկրատիայի մի մասի մահմեդականացումն օգտակար կերպով անդրադարձավ օսմանյան կառավարման համակարգի կայացման վրա։ Մահմեդականացվածները ներմուծեցին ղեկավարման փորձ ու ավանդույթներ օսմանյան հասարակություն<sup>89</sup>։ Սակայն նրանք շատ սակավաթիվ էին, որպեսզի ազդեցություն թողնեին ընդհանուրի վրա։ Բացի այդ, օսմանցիները վախենում էին թողնել նրանց իրենց ազգային միջավայրում, որտեղ նրանք կարող էին զլխավորել հակաօսմանական դիմադրական ելույթները նոր նվաճված տարածքներում։ Սկանդեռեբզ Ալբանիայում հաստատեց այդ մտահոգությունները<sup>90</sup>։

Օսմանյան իշխանությունը գործի էր դրել մահմեդականացման իր բարդ մեխանիզմը Բալկաններում, սակայն, հակառակ դրա գոյությանը, քրիստոնյաների ու մահմեդականների միջև հարաբերակցությունը անհնար էր կարճ ժամկետում փոխել հոգուտ վերջինների։ Բացի այդ, XV դարի առաջին կեսին օսմանյան պետությունում տղամարդկանց վիթխարի պահանջարկ կար։ Օսմանցիներն սկսեցին իրենց հեծյալ աշխարհագրում օգտագործել քրիստոնյա *սիպահիներին*, ինչը լիովին հակասում է շարիաթին<sup>91</sup>։ Ղեկավար ապարատում, ինչպես և

<sup>88</sup> E. Радусев, Место вооруженных сил в структуре османской феодальной системы на Балканах, Османская империя: государственная власть и социально-политическая структура, под ред. Орешковой С. (сборник статей), Москва, 1990, с. 112.

<sup>89</sup> Ը. Գեորգիևա, там же, с. 70.

<sup>90</sup> Սկանդեռեբզ (Գեորգի Կաստրիոտի, Սկինդեր Իվանովիչ)՝ մոտ 1405-1468, ալբանացի իշխան, թուրք զավթողների դեմ ալբանացի ժողովրդի պայքարի հայտնի ղեկավար։ Նա պատանի հասակից սուլթան Մուրադ I-ի ժամանակ ենիչերի էր վերցվել։

<sup>91</sup> A. Željazkova, The Balkan nations' armed resistance against the Ottomans at the end of XVII century and its place in the history of the

արքունիքում, ոչ մահմեդականներ նշանակելը նույնպես շարիաթի ոտնահարում էր<sup>92</sup>: Սակայն բանն այդ չէ. օսմանյան տիրակալները, ինչպես և այդ ժամանակների ամեն տիրակալ, բազմիցս հեշտությամբ խախտել են կրոնական նորմերը, եթե դա բխել է նրանց իշխանության շահերից: Բայց այս պարագայում, քանի որ քրիստոնյաներն ունեին քանակական գերակշռություն, նրանց ուղղակի ու զանգվածային ներմուծումը վարչական ապարատ ու արքունիք կարող էր հարցականի տակ դնել պետության մահմեդական բնույթը և արգելակել նրա զավթողական քաղաքականությունը:

Այս իրավիճակում, ելնելով պետական ու ռազմական ապարատում մարդկային ռեսուրսների խիստ կարիքից, օսմանյան իշխանությունը դիմեց քրիստոնյաների մի մասի նպատակային մահմեդականացման: Այն սկսեց բռնությամբ հավաքել քրիստոնյա բնակչության երեխաներին, որպեսզի մահմեդականացնի և դարձնի իր զինվորները: ]

Փաստագրված առաջին տղայահավաքի տարեթիվը համարվում է 1395թ.<sup>93</sup>, թեև հավանական է, որ նման հավաքներ տեղի են ունեցել նաև ավելի վաղ: Քրիստոնյա երիտասարդության սկզբնապես հազվադեպ և փոքրաքանակ հավաքները դարձան հաճախակի և զանգվածային ու ի վերջո օրինականացվեցին որպես պարտադիր հարկ:

Եվ ամեն անգամ, ամեն նվաճման հետ մեկտեղ կրկնվում էր փենջիքից դեվշիրմե անցման գործընթացը:

---

empire and the subordinate European provinces, *Études balkaniques*, 3, 1989, Sofia, p. 63.

<sup>92</sup> Ա. Георгиева, там же, с. 70.

<sup>93</sup> S. Vryonis, Jr., Isidore Glabas and the Turkish Devshirme, *Speculum*, XXXI, 1956, 433-443, մեջբերում ըստ V. Menage, Some notes on the devshirme, *Bulletin of the School of Oriental and African Studies*, London, XXIX, Part 1, 1966, p. 64.

Այսինքն՝ սկզբում նվաճված տարածքի բնակիչները համարվում էին ռազմագերի, և նրանցից հավաքում էին փենջիք: Ապա՝ այդ տարածքների ամրագրումից հետո, բնակիչները դառնում էին Օսմանյան կայսրության հպատակներ, ու նրանց հանդեպ արդեն կիրառվում էր դեվշիրմե համակարգը:<sup>94</sup>

Սակայն այժմ արդեն փենջիքը կիրառելով՝ օսմանցիներն, այնուամենայնիվ, գործում էին ընտրողաբար ու հավաքում էին միայն մանուկներ<sup>94</sup>: Դա վկայված է Կոնստանտին Միխայլովիչ ենիչերիի կողմից, համաձայն որի՝ Նովո Բոդոյի գրավման ժամանակ օսմանցիները վերցրել են 320 պատանի որպես փենջիք, ուղարկել Փոքր Ասիա՝ հետագայում ենիչերի դարձնելու համար<sup>95</sup>:

Այն, որ ը դեվշիրմեն սկզբնական փուլում օգտագործվում էր փենջիքի պակասը լրացնելու համար, երևում է նաև Յակով Պրոմոնտորիո դե Կամպիսի օսմանյան պետության մասին գրված գրքից, որը հրատարակվել է 1475թ. և նկարագրում է 2-3 տասնամյակ առաջ եղած իրադրությունը: Նա գրում է, որ ենիչերիական զորքը հավաքագրվում էր տարբեր տարածքներից գերված երեխաներից, իսկ երբ գերի չկար, սուլթանը համալրում էր ենիչերիական զորամասերն իր սեփական քրիստոնյա հպատակների երեխաներով<sup>96</sup>: Դե Կամպիսի այս տեղեկությունը, որը վերաբերում է Մուրադ II-ի (1421-1441) կառավարման (երբ հավանաբար օրենքի ուժ էր ստացել դեվշիրմեն) և Մեհմեդ II-ի (1451-1481) կառավարման սկզբի տարիներին, ցույց է տալիս, որ հիմնական նորակոչիկները փենջիքից էին, սակայն դեվշիրմեն բացառված չէր: Սրա օգտին է խոսում նաև այլ բնույթի մեկ սկզբնաղբյուր՝

<sup>94</sup> F. Köprülü, Osmanlı devleti'nin kuruluşu, Ankara, 1959, s. 108.

<sup>95</sup> Залиски янычара. Написаны Константином Михайловичем из Островицы. Введение, перевод и комментарии А. Роговой, М., 1978, с. 74.

<sup>96</sup> По следите на насилюето, Документи и материали за налагане на исляма, Съставител П. Петров, Част първа, София, 1987, с.216-217.

*թիմարական* տիրույթների 1455թ. ընդարձակ նկարագրությունը (աշխարհագիրը): Թիմարատերերի հետ մեկտեղ գրանցված են և մի քանի ենիչերի: Նրանց գրանցել են անվամբ և ծնված քաղաքով: Այնտեղ հանդիպում ենք ենիչերիներ Մեհմեդ Թրաբզոն, Այդըն Արափջի<sup>97</sup>, Ալի Ֆիլիբելի (այսինքն Պլովդիվցի), Յուսուֆ Ստանիմաքլու (այսօրվա Ասենովգրադ), Մուստաֆա Նեզդրիչանեցի, Յուսուֆ Ռադոմիրցի, Թիմուրթաշ Ստրումիցացի, ինչպես նաև Քարաջա Մաջար, Դողան Մաջար անուններով և այլն<sup>98</sup>:

Այն ժամանակ, երբ Մաջար անունը, որն, անկասկած, էթնիկական հատկանիշ է մատնանշում (մաջար՝ հունգարացի), ցույց է տալիս որ Միջին Եվրոպայում օսմանյան ազդեսիայի ընթացքում ենիչերի են հավաքել փենջիքի միջոցով, օսմանյան տիրույթների կենտրոնական քաղաքներից ծագումը հուշող անունները վկայում են դեվլչիրմեով ենիչերիական գորաբանակ մտցված երիտասարդության մասին:

Ալգբնական փուլում դեվլչիրմեն կիրառվում էր նաև որպես անհնազանդ ազգաբնակչությանը պատժելու միջոց<sup>99</sup>:

Երկպառակտչական պատերազմները, որոնք տեղի ունեցան XV դարի առաջին տասնամյակում, էական նշանակություն ունեցան տղայահավաքների զարգացման համար: Օսմանյան ժամանակագիրները տեղեկացնում են, որ Մուսայի գորքում ներառվել էին 7 հազար ենիչերի՝ ինքնին չափազանց մեծ թվաքանակ, որ դժվար թե

<sup>97</sup> İ. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., էջ 352.

<sup>98</sup> H. Sabanovic, Krajiste Isa-bega Ishakovica. Zbirni kadarstarski popisiz 1455 godine, Sarajevo, 1964, p. 29-31, 52-56, 60-64, մեջբերում ըստ Ա. Георгиева, там же, с. 73.

<sup>99</sup> Kanunname-i Sultani ber muceb-i örf-i osmani, II. Mehmed ve II. Bayezid devirlerine ait yasakname ve kanunnameler, Anhegger R., Inalcik H., Ankara, 1956, s.76.

հավաքագրված լինելը փենջիքի միջոցով<sup>100</sup>։ Շատ հավանական է, որ հենց այդ ժամանակ է սկիզբ առել ոչ մահմեդական երիտասարդության բռնի զանգվածային հավաքագրումը։ Չնայած այս դեպքում էլ այս բնակչությունը նույնպես հավաքագրվում էր, թերև, որպես ոչ թե հպատակներ, այլ ռազմագերիներ, քանի որ իրենց հողերը դարձել էին պատերազմական գործողությունների թատերաբեմ, և պատերազմող կողմերի զինվորներն իրենց վերաբերվում էին որպես նոր նվաճված տարածքների բնակիչների։

Փաստորեն, դեվչիրմեի լայն կիրառությունն ամենևին չէր նշանակում, որ օսմանցիները հրաժարվել են փենջիք հավաքելու սկզբունքից։

Սուլթանական հրամանագրքից, ինչպես նաև այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ փենջիք համակարգը կիրառվում էր նույնիսկ այն ժամանակ, երբ դեվչիրմեն արդեն լիովին արմատավորվել էր ու դուրս մղել ռազմագերիներին։ Այսպես, հիջրայի 966-968 թվականների (1558-1560թթ.) հրամանագրքի թիվ 1461 հրամանում կարդում ենք, որ Քաֆայում վերջացել են փենջիքները, որից պարզ է դառնում, որ այստեղից հավաքել են այդ հարկատեսակը<sup>101</sup>։

Նույն հրամանագրքի թիվ 1478 հրամանը Քաֆայի բեյին ու քաղիին խստիվ արգելում է այդ կողմերից որպես փենջիք վերցնել թաթարներ, որոնք մահմեդական են<sup>102</sup>։

Օսմանցիների՝ մարդկային ռեսուրսների առումով այդ տարիների սուր պահանջարկը ցույց է տալիս հատկապես նույն հրամանագրքի 1560 թվականով թվագրված թիվ 742 հրամանը, որն ուղղված է Բոսնիայի

<sup>100</sup> М. Нешри, Огледало на света. История на османския двор. Съставителство и превод от османотурски език М. Калицин. С., 1984, с. 190, մեջբերում ըստ Ա. Георгиева, там же, с. 71.

<sup>101</sup> 3 numaralı mühimme defteri (966-968 / 1558-1560), с.1, Ankara, 1993, Osmanlı Arşiv Daire Başkanlığı, 570+(LIX+816) s., s. 634.

<sup>102</sup> Նույն տեղում, с. 640.

քեյին և փենջիքով տղաներ հավաքելու ու ուղարկելու մասին է: Ընդ որում, խստիվ հրամայվում է տղաների փոխարեն դրամ չհավաքել: Իսկ եթե, այնուամենայնիվ, որոշ դրամ էլ հավաքվի, ապա այդ դրամով ևս հրամայվում է տղաներ զնել և ուղարկել<sup>103</sup>:

\*\*\*

Վերոշարադրյալը ցույց է տալիս, որ դեվչիրմե համակարգն ամենևին էլ օսմանյան սուլթանների միանվագ հորինվածքը չէ:

Դեվչիրմեի երևան գալն ու գործադրումը պայմանավորված էին պատճառների բարդ համակարգով, որը ծագում էր օսմանյան պետության հասարակական, կրոնական ու ազգային պայմանների յուրահատկություններից: Այն հակասում էր շարիաթին<sup>104</sup>, բայց հաջող կերպով լուծում էր ազդեսիայի ընթացքում բանակում ու ղեկավար ապարատում մարդկային ռեսուրսների տեսակետից անհետաձգելի խնդիրները: ]

[ Հարցն այն է, որ համաձայն շարիաթի, «գրքի մարդիկ»՝ ախլ-ալ քիթաբ, այն ժողովուրդները, որոնք ծանոթ էին Սուրբ գրքին նախքան Դուրանի ի հայտ գալը, սահմանափակվում են միայն ջիզե-գլխահարկի վճարմամբ. նրանք կոչվում են *զհմմի*, և նրանց չի կարելի բռնի մահմեդականացնել, ] քանի որ նրանք կրապաշտ չեն: Այսպիսով, համաձայն շարիաթի՝ զհմմի ազգաբնակչության բռնի մահմեդականացումը, մեր դեպքում՝ զհմմի

<sup>103</sup> Նույն տեղում, ս. 334.

<sup>104</sup> P. Wittek, *Devshirme and sharia*, Bulletin of the School of Oriental and African Studies, 1955, XVII/2, p.271-278. H. Inalcik, *Studies in Ottoman Social and Economic History*, VII, *Servile labor in the Ottoman Empire*, London, 1985, p. 25-52.

\* Չհմմիներից տարբերակվում էին նաև հարբիները (*harbi*), որոնք ունեին նույն կրոնը, սակայն ապրում էին տարածքներում, որոնք դեռ մահմեդականության տակ չէին, այսինքն՝ գտնվում էին «դար ալ-հարբի»՝ պատերազմի աշխարհում (*The Encyclopedia of Islam*, edited by B. Lewis, Ch. Pellat and J. Schacht, Leiden, 1991, Vol. II, p. 227):

հպատակների որդիների բռնի մահմեղականացումը, հակասում է շարիաթի այս սկզբունքին:

Որոշ պատմաբաններ պնդում են, որ օսմանցիներն ամենևին չեն խախտել շարիաթը, քանի որ այնտեղ հստակորեն ասված է. «Ժողովուրդներ, որոնք ծանոթ են եղել Սուրբ գրքին նախքան Ղուրանի ի հայտ գալը», իսկ սերբերը, ալբանացիները և բուլղարները քրիստոնեություն են ընդունել Ղուրանի ի հայտ գալուց ավելի ուշ, ուստի նրանք, համաձայն մահմեղական աստվածաբանների, չեն կարող համարվել «(Սուրբ) գրքի մարդիկ», քանի որ ընդունել են Աստվածաշունչը «միակ իրապես ճշմարիտ» Ղուրանի արդեն աշխարհին հայտնի լինելուց հետո:

Այսպիսով, փորձ է կատարվում արդարացում գտնել օսմանցիների՝ դեվչիրմե համակարգն իրականացնելու և դրա ընթացքում քրիստոնյա տղաներին բռնի մահմեղականացնելու հարցում: Սակայն այս դեպքում անտեսվում է այն, որ հայերն ու հույները քրիստոնեություն են ընդունել շատ ավելի վաղ ու իրապես համարվում են «աիլ ալ-քիթաբ»: Բայցևայնպես, այս ժողովուրդների մեջ ևս անցկացվում էին տղայահավաքներ, որոնք հետագայում բռնի մահմեղականացվում էին:

Շարիաթն այս անգամ էլ անտեսվեց՝ օսմանյան պետության ուղղակի շահերը բավարարելու համար:

Ժողովրդագրական հաշվարկները կայսրերի ու սուլթանների ռազմական ու տնտեսական քաղաքականությունների վրա մեծագույն ազդեցությունն ունեցող հիմնական գործոններից էին: Թե՛ բյուզանդացիների, թե՛ սելջուկների և թե՛ օսմանցիների մտահոգությունների կարևոր տարր էր կազմում ռազմական ու վարչական մարդուժի մատակարարումը: Վերոհիշյալ երեք համակարգն էլ, ըստ էության, գործածում էին նույն լծակը՝ բաժանելով *պրոնիա*, *իքթա կամ թիմար*։ Տարբերություն կար աշխարհագրական առումով. սելջուկներն, օրինակ, մարդկային ռեսուրս էին ստանում Փոքր Ասիայի թյուրքերից, հույներից, հայերից, քրդերից ու վրացիներից, մինչդեռ



օսմանյան մուտքը Եվրոպա հնարավոր դարձրեց օգտագործել մարդուժի նոր ու կարևոր աղբյուր՝ բալկանյան ազգաբնակչությունը: Օսմանյան հաղթանակներն ու պետության ընդարձակումը այս առումով կրկնակի ազդեցություն ունեին. մի կողմից՝ դրանք սահմանափակում էին բյուզանդացիների մարդուժի աղբյուրները, մյուս կողմից՝ ստանում արագորեն աճող մարդուժ, որը հիմք էր ծառայում օսմանյան ռազմական, վարչական, կրոնական ու գյուղատնտեսական ինստիտուտների համար: Նախ բալկանյան, ապա նաև փոքրասիական (այդ թվում հայ) ազգաբնակչությունը, ներգրավվելով օսմանյան համակարգի մեջ, մեծ ուժ հաղորդեց նրան:

Բյուզանդական ու թյուրքական պետությունների միջև մարդուժի ձեռքբերման տարբերությունն էր ղուլամ-դեվչիրմե համակարգը: Բյուզանդական ռազմական տեքստերը բացահայտում են բյուզանդական բանակներում երիտասարդների մի դասի գոյությունը, որոնք կոչվում էին «աղուպե», «պայդես», «պալլիկասպիա», «բասիլիկուի աղուպե»: Սակայն այս եզրերն ընդհանրապես կիրառվում էին այն երիտասարդների հանդեպ, որոնք հոգ էին տանում բեռների մասին կամ կեր հավաքում կենդանիների համար, չնայած նրանց մի մասը զենք վերցնում էր ու իրապես մասնակցում մարտերի: Սակայն չկա ոչ մի նշում այն մասին, որ այս երիտասարդների ու ղուլամ-դեվչիրմե համակարգի միջև կարելի է տանել ռազմավարչական կարևորության գույզահեռ կամ որ նրանք հավաքագրվում էին նույն կերպ<sup>105</sup>: Օսմանցիները, շնորհիվ դեվչիրմեի ու իշխանության ավելի արդյունավետ կենտրոնացման, բյուզանդացիներից ավելի հաջողակ եղան բալկանյան ազգաբնակչությանը ձուլելու գործում:

*Ղուլամ* ու դեվչիրմե տարրերի դեպքում մենք ծուլման գործընթացի ուսումնասիրման կարևոր հնարա-

<sup>105</sup> S. Vryonis, Byzantine and Turkish societies and their sources of manpower, p. 141-142, in War, Technology and Society in the Middle East, edited by Parry V. J. and Yapp M. E., London, 1975.



վորություն ունենք, քանի որ այդ անհատները դառնում էին բուրջ-մահմեդական հասարակության նշանավոր անձինք: Կասկած չկա, որ շատ դեպքերում նրանց կապերը քրիստոնեական հիշողություններին ամբողջապես չէին անհետանում: Ամենավառ օրինակներից կարող է լինել Սկանդերբեգի վերոհիշյալ պատմությունը: Կան մի շարք օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ ընտանեկան կապերը նաև պահպանվում էին: Այսպես, դեվժիրմեով պալատ բերված և հետագայում մեծ վեզիր դարձած Մեհմեդ Սոքուլուն վերականգնեց սերբական պատրիարքարանն ու հանձնեց այն իր ազգակցին:

Համաձայն XVI դարի ժամանակագիր Բարթոլոմեուս Գեորգիևիցի՝ շատ ենիչերիներ որպես չարի խափանման միջոց իրենց հետ էին կրում Հովհաննեսի կտակարանի հունական կամ արաբական տեքստեր<sup>106</sup>:

Տրապիզոնցի *դուլամները*, որոնցով Մեհմեդ II-ը լցրեց պալատն այդ քաղաքը գրավելուց հետո, դարձան այնքան հզոր ու ազդեցիկ, որ իրենց քրիստոնյա ազգականները կարողանում էին նրանց միջոցով ազդել պատրիարքների ընտրությունների վրա<sup>107</sup>: Թերևս, սրա պատճառով էլ «Ենիչերիական զորաբանակի օրենքների սկզբնավորման պատմությունը» ձեռագրում նշվում է, թե «տրապզոնցիներին, չնայած նրանք անհավատների որդիներ են, չեն վերցնում: ...Նրանք միայն խաբեություն ու ավազակություն են արել»<sup>108</sup>: Այդպես շարունակվել էր մինչև սուլթան Սելիմ Ահեդի ժամանակները: Վերջինիս ժամանակ վերսկսվում է նրանց հավաքը, չնայած ժամանակի մեծ վեզիր Փիրի փաշան նախազգուշացնում է սուլթանին չհավաքել տղա Տրապիզոնից. «Այդ մարդիկ ավազակներ

<sup>106</sup> S. Vryonis, *Seljuk Gulams and...*, p. 246-147.

<sup>107</sup> S. Vryonis, *Byzantine and Turkish societies...*, p. 152.

<sup>108</sup> Мебде-и канун-и йеничери оджагы тарихи (История происхождения законов янычарского корпуса), Издание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели И. Петросян, Москва, 1987, с. 55.

են: Եթե դուք նրանց միջև հավաք կազմակերպեք ու թողնեք մինչև օջախ, ապա սկզբից նրանք կխանգարեն ենիչերիների ապստամբություններին... հետո նրանք ևս այդպիսին կդառնան»<sup>109</sup>:

Համենայն դեպս, օսմանյան պետությունը տղայա-հավաքի անցկացման վերաբերյալ որոշումները չէր ընդունում այս կամ այն պաշտոնյայի խորհրդով, այլ ելնում էր իր առաջնային կարիքներից. ընդհանուր իրավիճակից: Խիստ անհրաժեշտության դեպքում, երբ դեվչիրմեն չէր բավարարում, պետությունը ծառայության էր կանչում գյուղեր հանձնված տղաներին, ինչպես նաև դիմում փենջիքի կամ նույնիսկ շուկաներից ստրուկներ գնում, չնայած, ինչպես կտեսնենք հաջորդ գլուխներում, հենց պետությունն էր այդ շուկաների գլխավոր մատակարարներից մեկը:

Այսպիսով, որպես փենջիքի շարունակություն՝ դեվչիրմեն, ըստ էության, մահմեդական աշխարհում ստրկական ինստիտուտի նմանօրինակ շարունակություն էր, կենտրոնական իշխանության կարիքներն ապահովելու համար ստրուկների հավաքման ձև, որը տեղի էր ունեցել յուրահատուկ պատմական պարագաներում՝ սկիզբ առնելով Եվրոպայի հարավ-արևելքում XIV դարի վերջին և XV դարի սկզբին օսմանյան իշխանության հաստատման արդյունքում և ապա տարածվելով քրիստոնյա բոլոր հպատակների վրա:

<sup>109</sup> Նույն տեղում, Կ. 56-57.

ԴԵՎՇԻՐՄԵ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՈՐՈՇ  
ԱՍՊԵԿՏՆԵՐ

*Դեվշիրմե հավաքների անցկացման մեխանիզմը*

Օսմանյան իշխանությունը մանկահավաքն անց էր կացնում խիստ մեթոդաբար ու մանրակրկիտ: Սակայն սուլթանական հրովարտակաները, որոնք հրապարակվում էին այդ կանյակցությամբ, չեն հայտնում մանրամասներ տղայահավաքների նախապատրաստման ու անցկացման վերաբերյալ: Մեզ հայտնի հրովարտականերից առաջինը թվագրվում է 1576թ., իսկ վերջինը՝ 1705թ., այսինքն՝ ընդգրկում են դեվշիրմեի անցկացման վերջին 130 տարին, երբ այն հասել էր իր ավարտուն տեսքին<sup>110</sup>:

✓ Ինչպես պարզ է դառնում մեզ հասած փաստաթղթերից, տղայահավաքի հայտարարումը տեղի էր ունենում ենիչերիական գորաբանակի աղայի պահանջով<sup>111</sup>, որը հատուկ նամակով խնդրում էր սկսել դեվշիրմեի նախապատրաստումը: Դրա հիման վրա սուլթանի գրասենյակը հրապարակում էր համապատասխան հրովարտակ՝ հյուքմ- որը գորահավաք հռչակող փաստաթղթին համարժեք նշանակություն ուներ: —

Մինչև XVI դարի առաջին կեսը տղայահավաքներ իրականացնում էին *բեյերբեյիները*, *սանջաքբեյիները* կամ *քադիները*, սակայն նրանց կաշառակերության հետևանքով գործը հանձնվում է հետագայում ենիչերիական սպաներին<sup>112</sup>:

«Ենիչերիական գորախմբի օրենքների ծագման պատմություն» («Մերդե-ի քանուն-ի յենիչերի օջաղը թարիխի») ձեռագրի անանուն հեղինակը խորհուրդ է տալիս «չգրել *դուլամների* հավաքի վերաբերյալ սուլթանական

<sup>110</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 80.

<sup>111</sup> İ. H. Uzunçarşılı, Karıkulu ocakları..., s.14.

<sup>112</sup> Նույն տեղում, s. 15:

հրովարտակը վիլայեթի բեյերի ու *քաղիների* անվան վրա, որպեսզի նրանց չդիմեն հովանավորության համար, երբ հավաքողը գտնի որևէ մեկ գեղեցիկ տղայի կամ ազնվական մարդու որդու ու ուզենա տանել նրան<sup>113</sup>»:

Պատմաբան Յ.Վազդրավելիի կողմից հրատարակվել է մի սուլթանական հրովարտակ, որը թվագրված է 1601թ. ու հասցեագրված է *Ռումելիի բեյերբեյիին*, որին տեղեկացվում է առաջիկա հավաքի վերաբերյալ ու հրամայվում ուղարկել բնակավայրեր հատուկ տեսուչների՝ ընտրված իր ենթակայության տակ գտնվող սպաներից, որոնք պետք է օժանդակեն տղայահավաքի անցկացմանը<sup>114</sup>:

Մի քանի այլ հրովարտակներ ուղղված են շրջանների *քաղիներին* և վերաբերում են հավաքների անցկացմանը: Նրանցից պահանջվում էր տեղեկացնել հպատակներին հավաքների անցկացման մասին և ապահովել բոլոր տղաների ներկայությունն իրենց հայրերի հետ միասին:

Հրովարտակների երրորդ տիպը, որոնք նույնպես ուղարկվում էին շրջանների *քաղիներին*, վերաբերում էր տղայահավաքների ժամանակ պահակախմբերին: Նրանք պետք է ապահովեին ճանապարհների ու կայանումների պաշտպանությունը, որպեսզի երիտասարդները չկարողանան խուսափել հավաքից ու փախչել հարազատ գյուղերը:

✓ Հավաքի նախապատրաստության և անցկացման համար կենտրոնական իշխանությունը գործի էր դնում ինչպես նահանգային զինված ուժերը, այդպես էլ տեղական վարչական մարմինները: ✓ Նրանց խնդիրներն ունեին օժանդակ բնույթ. ապահովել հավաքի ենթակա

<sup>113</sup> Мебде-и канун-и йеничери оджагы тарихи..., с. 51.

<sup>114</sup> По следите на насилието, Документи и материали за налагане на исляма, Съставител П. Петров, Част първа, София, 1987, с. 236-237.

երիտասարդների առավելագույն ներկայությունն ու նրանց անարգել ուղևորությունը մինչև ենիչերիական զորանոցներ:

✓ Իսկ տղաների բուն ընտրությունն ու բռնի հավաքն ամբողջապես տրամադրված էին ենիչերիական զորաբանակին: Որքանով հասկանալի է դառնում սուլթանական հրովարտակներից, հավաքի կազմակերպման աշխատանքներին մասնակցում էին օսմանյան նահանգային բեյլերբեյիության զորքերը: Օրինակ, Ռումելիի բեյլերբեյիությունը, որում ընդգրկված էին նաև բուլղարական հողերը, բաժանված էր երեք զուգահեռ մասի արևելքից արևմուտք, որոնք անվանվում էին թևեր, ինչը ծագել է օղուզական ռազմական կազմակերպությունից<sup>115</sup>: Չախ թևն ընդգրկում էր թերակղզու հարավային շրջանները, միջինը՝ անկունագծային ճանապարհին հարող տարածքները, աջը՝ հյուսիսային տարածքները: Դեվչիրմեի հավաքման ժամանակ ամեն թև ուղարկվում էր մեկ ենիչերիական զորախումբ՝ ավագ սպա թուրանջիբաշիի, յայաբաշիի, գազըրջիբաշիի և կամ այլոց ղեկավարությամբ<sup>116</sup>: Արքեպիսկոպոս Մ.Բիդիի նամակում, որում տեղեկացվում է Չիպրովեց քաղաքի շրջանում 1610-1611թ. դեվչիրմեի հավաքի մասին<sup>117</sup>, ասվում է, որ այդ դեպքում ենիչերիական մեկ զորախումբ ընդգրկում էր շուրջ 200 զինվոր: Սուլթանական հրամաններում բազմիցս ընդգծվում է ենիչերիական զորախմբի հրամանատարի իշխանության ամբողջականությունը<sup>118</sup>:

✓ Տեղական ռազմական ու վարչական մարմիններից պահանջվում էր տեղեկացնել իրենց ենթակա շրջանների բոլոր գյուղերի բնակիչների մասին: Ճշգրտված մարդահամար էին անցկացնում գյուղերում, ավաններում,

<sup>115</sup> В. Мутафчиева, Аграрните отношения в Османската империя през 15-16в., София, 1962, с.27-28.

<sup>116</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 81.

<sup>117</sup> А. Новичев, К истории рабства в Османской империи, Тюркологический сборник 1976, М. 1978, с. 95.

<sup>118</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 81.

քաղաքներում, թիմարական տիրույթներում, վաքուֆային գյուղերում, զեամեթներում, չիֆթլիքներում և այլուր: Նրանք պետք է նաև խստորեն նախազգուշացնեին հայրերին, որպեսզի վերջիններս հավաքեն և ներկայացնեն ենիչերիական զորախմբին իրենց բոլոր երեխաներին ու չթաքցնեն և ոչ մեկին: Պարզ է, որ իշխանությունների հիմնական մտահոգության առարկա էր բոլոր տղաների ներկայությունն ապահովելը: Նրանք օգտագործում էին տեղական վարչական մարմինները, որոնց միջոցով զարգացում էր ստանում բոլոր գյուղաբնակներին, ներառյալ աճող սերնդին, անհատապես ճանաչելու մեխանիզմը: Բեյլերբեյիներն իրենց ենթակա սիպահիական ուժերն օգտագործում էին որպես հավելյալ միջոց ոչ մահմեդական հպատակների վրա ճնշում գործադրելու համար: —

✓ Ղեվչիլմե համակարգը ամբողջությամբ հիմնված էր բռնության վրա: — Սուլթանական հրովարտականերում կրկնվում էին ենիչերիական սպային ենթարկվելու հրամանները ուղղված թե՛ տեղական վարչությանը, թե՛ ազգաբնակչությանը: Այն ծնողներին, որոնք հրաժարվում էին հանձնել իրենց տղաներին, անհապաղ կախում էին սեփական դարպասների շեմին<sup>119</sup>: Պատժվում էին նաև տեղացի մահմեդականները, սիպահիներն ու այլ ավատատերերը՝ տղաների թաքուստի կամ նրանց փոխարեն այլ անձանց ներկայացնելու համար: Ենիչերիներն անողոք էին բոլորի հանդեպ:

Տղայահավաքներն անցկացվում էին զրեթե բոլոր քաղաքներում ու գյուղերում, հերթով: Համապատասխան ենիչերիական զորախումբն այցելում էր գյուղ առ գյուղ, քաղաք առ քաղաք: Այսպես նվազագույնի էին հասցվում հնարավոր խուսափումը, երեխաներին թաքցնելը: Սուլթանական հրովարտակաները հենց ծնողներին էին հրամայում ներկայացնել իրենց երեխաներին՝ ահաբեկելով մահապատժով:

<sup>119</sup> Mustafa Ali, Counsel for sultans, 1581, Edition, translation, notes by A. Tietze, Wien, 1982, Part II, p. 147-148.

✓ Տղաների ընտրությունն անց էր կացնում անձնապես հրամանատար սպան, որը, բացի սուլթանական հրովարտակից, ուներ նաև ենիչերիական աղայի կնիքով հատուկ նամակ, որտեղ գրված էր, թե որ շրջանից քանի տղա է պետք հավաքագրել: Սպայի մոտ առաջին հերթին ներկայանում էր բնակավայրի քահանան՝ իր հետ բերելով գրանցամատյանը<sup>120</sup>: Ապա կանչվում էին հայրերը՝ իրենց արու զավակներով:

✓ Օսմանյան որոշ աղբյուրներում ընդգծվում է, որ տղայահավաքներն անցկացվում էին 15-20 տարեկանների շրջանում, իսկ ենիչերիական մի օրենքում շեշտվում է, որ լավագույն տարիքը 17-ն է: Մեզ հասած բոլոր փաստաթղթերում ասվում է, որ ընտրում էին «ամենալավերին», «ամենապիտանիներին», «ամենագեղեցիկներին»<sup>121</sup>: Ինչը խոսում է ընտրության որոշակիորեն բարձր ու հաստատուն չափանիշների մասին: Պահանջվում էր զգուշություն ինչպես ենիչերիական սպայից, այնպես էլ տեղական վարչական մարմիններից, որոնք ներկա էին հավաքներին, որպեսզի թույլ չտրվեր, որ տղաներին թաքցնեն կամ նրանց փոխարեն ներկայացնեն այլ անձանց:

✓ Խստիվ արգելվում էր հավաքագրել թուրքերի որդիներին: «Ենիչերիական կորպուսի օրենքների ծագման պատմություն» ձեռագրում՝ սա պատճառաբանվում է նրանով, որ թուրքերի զավակների մեծ մասը անտոհմ է ու կրոնի համար թույլ հիմք: Բացի դրանից, որևէ պաշտոնի հասնելով՝ նրանք ձգտում են հովանավորել իրենց ազգականներին: Իսկ երբ հավաքում են անհավատների տղաներին, ապա դրա օգուտն այն է, որ մահմեդականացվելով՝ նրանց մեջ ծնունդ է առնում կրոնական ջերմեռանդությունն ու նրանք դառնում են իրենց ազգակիցների թշնամիները: Ինչ պաշտոնի էլ որ իրենք հասնեն, միևնույն է, չեն խիզախի հրամայել հարկ չհավաքել իրենց ազգականներից, քանի որ վերջիններս անհավատներ են<sup>121</sup>:

<sup>120</sup> J. H. Uzunçarşılı, Karıkulu ocakları..., s. 16.

<sup>121</sup> Мебде-и канун-и йеничери оджагы тарихи..., с. 53.



✓ Դեվչիրմե չէր հավաքվում նաև զնչուներից ու հրեաներից<sup>122</sup>: Նրանց մուտքը այս համակարգ արգելված էր նաև փենջիքի ուղով: Չնայած, բնականաբար, այս օրենքը երբեմն խախտվել է: Այսպես, Ջոզեֆ Հաքերը բերում է նամակներ՝ գրված այս կամ այն օսմանյան նվաճմանը ենթարկված հրեաների ճակատագրի մասին: Դրանցից մեկում, որը գրված էր 1470 թվականից առաջ, կա հրեական մի համայնքի ճակատագրի նկարագրություն: Նամակը գրված է Հռոդոսում և ուղարկված Կրետե: Ըստ դրա հրեաների ճակատագիրն այդքան էլ չէր տարբերվում քրիստոնյաներից: Շատերը սպանվել են, մյուսները՝ գերեվարվել, երեխաները տարվել են դեվչիրմե<sup>123</sup>: Սա ցայտն հայտնի միակ աղբյուրն է, որը նշում է հրեա երեխաների գերեվարումը ենիչերիական զորքերի համար, չնայած նկարագրությունն ավելի շատ հիշեցնում է նվաճման ժամանակ փենջիքի գանձման, քան դեվչիրմեի: —

Թեև դեվչիրմե համակարգ մահմեդականների մուտքն արգելված էր, մահմեդական բոսնիացիներից դեվչիրմե հավաքվում էր: Նրանց կոչում էին «փոթուր-օղուլլարը» և ծառայեցնում միայն պալատում կամ այգում: Համաձայն ավանդույթի՝ Մեհմեդ II-ը, իր գոհունակությունը հայտնելով բոսնիացիների մահմեդականությունը ընդունելու կապակցությամբ, խոստացել է կատարել վերջիններիս՝ միապետին ծառայելու ցանկությունը<sup>124</sup>: «Փոթուր-օղուլլարը» նրանք կոչվում էին, քանի որ մահմեդականացված բոսնիացիներն անվանվում էին փոթուրնաք: Ուստի փոթուր-օղուլլարը նշանակում է փոթուրների՝ կրոնափոխ բոսնիացիների որդիներ, որոնք նաև բնութագրվում էին որպես «թլպատված, բայց թուրքերեն չիմացող»: Այդպես էլ

<sup>122</sup> A. Özcan, Devşirme, İslam Ansiklopedisi, Ankara, 1994, cilt 9, s. 255.

<sup>123</sup> J. Hacker, Ottoman policy toward the Jews and Jewish attitudes toward the Ottomans during the fifteenth century, Christians & Jews in the Ottoman Empire, p. 120.

<sup>124</sup> İ. H. Uzunçarşılı, Devşirme, İslam Ansiklopedisi, İstanbul, 1940, cilt 3, s. 564.



նրանք տարբերվում էին բուն թուրքերից՝ թուրքերեն չիմանալու պարագայով: Այդ հատկանիշն էր հենց նկատի առնվում թուրքերի մուտքը դեվչիրմե համակարգ կանխելու նպատակով<sup>125</sup>:

### *Հավաքվող տղաների տարիքը և դեվչիրմե հավաքի որակական կողմը*

Ընտրության ու հավաքի մեխանիզմի մեջ կա երկու կարևոր կետ: Առաջինը հավաքվող տղաների տարիքն է: Եվրոպական աղբյուրներն ընդհանրապես տեղեկացնում են 7 – 12 տարեկան մանուկներին հավաքելու մասին, իսկ սուլթանական հրովարտակները խոսում են ավելի շատ պատանիների՝ 15 – 20 տարեկանների մասին: Հակասությունը բացատրելի է: Իշխանության հրահանգները ցույց են տալիս նորմը, իսկ եվրոպական աղբյուրները՝ կիրառությունը, պրակտիկան, որը զգալիորեն տարբեր էր: Նախընտրում էին արդեն մեծացած տղաների, սակայն հավաքագրում էին նաև փոքրերին: Կարևորություն էր տրվում ոչ թե իրական, այլ կենսաբանական տարիքին՝ 14 – 20 ընկած միջակայքում, որը ընդհանուր առմամբ կարող ենք սահմանել որպես պատանեկություն<sup>126</sup>: Սա նշանակում է, որ հավաքում էին արդեն ամուր ֆիզիկական տվյալներով տղաներին, որոնց հոգեբանությունը միաժամանակ դեռ ճկուն էր ու համեմատաբար հեշտ էր ենթարկվում ազդեցության, դեռ չէր ձևավորվել բարոյական արժեքների համակարգը:

Նույն սկզբունքով էին գործում նաև արաբական սուլթանությունները *մամլուքների* հավաքագրման գործընթացում: Այսպես, որպես մամլուք-ստրուկ հավաքագրելու տարիք՝ սեռական հասունության տարիքը թվում էր ամենից հարմարը, որովհետև այդ տարիքում պատանիներն արդեն ունեին իրենց առանձնահատուկ

<sup>125</sup> V. Ménage, *Devşirme*, The Encyclopedia of Islam, edited by B. Lewis, Ch. Pellat and J. Schacht, Leiden, 1991, Vol. II, p. 211.

<sup>126</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 83.

որակները, սակայն դեռ նրանց կարելի էր ուսուցանել ու վարժեցնել այնպես, ինչպես դա պետք էր իրենց տերերին<sup>127</sup>:

Հենց այս յուրահատկություններն էին օգտագործում օսմանցիները քրիստոնյա զավակներին իրենց զենքը դարձնելու ժամանակ: Կարող ենք նաև պատկերացնել դեվչիքի մեջ ժամանակ ծնողների զգացմունքային վիճակը իրենց որդիներին հանձնելիս. հիշենք այն դժվարությունները, որոնք նրանք հաղթահարել էին ծնունդից մինչև պատանեկություն նրանց հասցնելու համար:

Միջնադարի կենսապայմաններում մինչև մեկ տարեկան հասակը մահանում էր նորածինների քառորդ մասը: Հետագա տարիներին մանուկների մահացության թիվը նվազում էր, սակայն մահանում էր մնացածի ևս մեկ երրորդը<sup>128</sup>: Մահացածության բարձր աստիճանը պայմանավորված էր համաճարակներով, որոնք արագորեն ամայացնում էին մեծ տարածություններ, և սովով, որը ևս մեկ կարևոր գործոն էր, որ ազդում էր մահացության ցուցանիշի աշխարհագրության վրա: Չնայած մեծ քաղաքները մատակարարման առումով կախում ունեին լայնատարած գյուղատնտեսական հիմքերից, սակայն նախաինդուստրիալ ժամանակաշրջանում նրանք սովից համեմատաբար ավելի պաշտպանված էին, քանի որ գործում էր բնամթերքների ժողովման ազդեցիկ համակարգ: Եթե մեկ տարածաշրջանում վատ բերք էր հավաքվում, ապա դրա պակասորդը քաղաքը լրացնում էր մեկ այլ տարածաշրջանից բերված բնամթերքի հաշվին: Վատ բերքից ավելի շատ տուժում էին գյուղերը<sup>129</sup>:

<sup>127</sup> D. Ayalon, Preliminary remarks on the Mamlūk Military Institution in Islam..., p. 56, n. 1.

<sup>128</sup> Ц. Георгиева, Развитие и характер на кръвния данък в болгарските земи. Годишник на Софийския университет, Историко-филологически факултет, 61, 1967, с.53.

<sup>129</sup> L. Erder, The measurement of preindustrial population changes: the Ottoman Empire from the 15<sup>th</sup> to the 17<sup>th</sup> century, Middle East Studies, Vol. XI, #3, 1975, London, p. 287.

Միայն տասնհինգ տարեկանից հետո մարդ կարող էր հույս ունենալ, որ իր որդին համեմատաբար զերծ է հիվանդություններից մահանալու վտանգից: Եվ այս ժամանակ, երբ որդին դիմացել էր ծաղկախտին, ժանտախտին, դժբախտ պատահարներին, սովին, հայրը պարտավոր էր հանձնել նրան ենիչերիական զորամասին:

\*\*\*

Հավաքի ժամանակ երկրորդ կարևոր կողմը տղայաժողովի որակական չափանիշն է: Սուլթանական հրովարտակներում սա ձևակերպված է ածականների գերադրական աստիճանի օգտագործմամբ, ամենաառողջ, ամենապիտանի, ամենագեղեցիկ: Իշխանություններն արգելում էին հավաքագրել տղաներին, որոնց ծնողները մահացած էին, քանի որ նրանք անդաստիարակ էին ու աչքածակ, տղաներին, որոնք ունեին թերություններ՝ անմորուս էին, ունեին մաշկային հիվանդություններ, շատ էին բարձրահասակ կամ ընդհակառակը՝ կարճ էին, շատ էին գեր կամ նիհար, ունեին այնպիսի թերություններ, որի պատճառով դառնում էին ծիծաղի առարկա: Օսմանցիներն ընտրում էին առողջ ու նորմալ տղաների: Հին հավաքում նրանց, ովքեր ամուսնացած<sup>130</sup> էին, թլպատված կամ գիտեին թուրքերեն: Երբեմն արգելում էին հավաքել նաև տղաների, որոնք բնակվում էին քաղաքում կամ էլ արհեստի էին տիրապետում: Ինչպես ասվում է վերոհիշյալ ձեռագրում. «...Թող չվերցնեն տղային, որն արհեստ ունի, քանի որ արհեստավորը չի տանի զինվորական ծառայության զրկանքները: Պետք չէ վերցնել նաև Ստամբուլ այցելածի, քանի որ նա անամոթ կլինի<sup>131</sup>»:

<sup>130</sup> Ամուսնացածների չհավաքելու փաստը թուրք պատմաբան Ուզունչարչըլըն բացատրում է նրանով, որ նրանք բազմացնում են կայսրության բնակչությունը՝ հաջորդ դեվչիրմե հավաքների համար հավաքագրյալներ նախապատրաստելով (Uzunçarşılı, I., *Ուլյն տեղում*, էջ 16):

<sup>131</sup> Мебде-и канун-и йеничери оджагы тарихи, с. 52.

Քաղաքաբնակներին չհավաքագրելու կետը միշտ չէ, որ կիրառվում էր, քանի որ տեղեկություններ կան, որ տղայահավաքներ անց են կացվել նաև Սոֆիայում, Չիպրովցիում ու այլ բուլղարական քաղաքներում<sup>132</sup>, ինչը փաստում է այդ չափանիշի միայն տեսական և ոչ մշտական լինելու մասին:

Սակայն, այնուամենայնիվ, ժամանակակից պատմագրության մեջ երբեմն պնդում են, թե քաղաքային ազգաբնակչությունն ազատված էր դեվչիրմեից<sup>133</sup>: Եվրոպացի ճանապարհորդները, ինչպես նաև օսմանյան որոշ փաստաթղթեր կտրականապես մերժում են քաղաքային ազգաբնակչության՝ դեվչիրմեից ազատված լինելու կարծիքը, քանի որ նրանք որպես հավաքին ենթակա երբեմն հիշատակում են նաև քաղաքատիպ բնակավայրերը: Այս պարտավորությունից ազատվելը վերաբերում է միայն որոշ քաղաքների կենտրոնական մասերին: Համաձայն եվրոպացի ճանապարհորդ Հ.Ներնշվամի՝ տղաներ չէին հավաքում Ստամբուլից, Գալաթայից, Բրուսայից և ևս 4 քաղաքներից<sup>134</sup>, իսկ ճանապարհորդ Ստեֆան Գերլայնսն իր հուշերում գրում է, որ դեվչիրմեից ազատված էին միայն մայրաքաղաքն ու Գալաթան<sup>135</sup>: Քաղաքաբնակների՝ դեվչիրմեից ազատված չլինելու մտքին համակարծիք է նաև բուլղար հետազոտող Յվետանա Գեորգիևան, որը բերում Սոֆիայի քաղիի 1614թ. մեկ փաստաթուղթ: Այն վկայում է, որ դեվչիրմեից չէր ազատված նույնիսկ այնպիսի նշանակալի քաղաք, ինչպիսին էր XVI դարում Սոֆիան: Այդ փաստաթղթում գրանցված է քրիստոնյա Անդրուշայի ու իր հորեղբայր, ենիչերի Ահմեդի որդի Մուստաֆայի՝

<sup>132</sup> Ц. Георгиева, Развитие и характер... с.53.

<sup>133</sup> Y. Ercan, Devşirme sorunu, devşirmenin Anadolu ve Balkanlardaki türkleşme ve islamlaşma etkisi, Belleten, 1986 Aralık, 1987, Ankara, s. 721.

<sup>134</sup> По следите на насилено..., с. 222.

<sup>135</sup> Стефан Герлах. Дневник на едно пътуване до Османската порта в Цариград, Подбор, превод, увод и коментар М. Киселинчева, Предговор и редакция Б. Цветкова, София, 1976, с. 62.

ժառանգության վերաբերյալ վեճը: Վեճի առարկան այն էր, որ Ահմեդին էր (որը մահմեդական էր ու ենիչերի) պատկանում իր հայր Նիկոլայի ժառանգությունը: Փաստաթղթի համեմատաբար վաղ տարբերիվը Գեորգիային հիմք է տալիս պնդելու, որ վերոհիշյալ ենիչերի Ահմեդը մահմեդականացվել է դեվչիրմեի միջոցով<sup>136</sup>:

Բացի այս փաստաթղթից, Սոֆիայում XVI դարի երկրորդ կեսին դեվչիրմեի հավաքման մասին է խոսում նաև ֆրանսիացի Ժ.Փ.Ֆորեզիենը: Նա պատմում է այն դաժանության մասին, որով օսմանցիները վերաբերվել են մի սոֆիաբնակ կնոջ, որին ինքը ականատես է եղել: Կինը թաքցրել էր իր որդուն դեվչիրմեից նախորդ տարի (1581թ.), ու պատժվել էր բացառապես դաժան կերպով. օսմանցիները շիկացած երկաթով այրել էին նրա կաթնագեղձերը<sup>137</sup>:

Գոյություն ունեն նաև փաստեր XVI դարի կեսերին Աթենքում դեվչիրմե հավաքի պարբերական անցկացման վերաբերյալ<sup>138</sup>:

Ժամանակակից թուրք պատմագրության մեջ տարածված է այն կարծիքը, թե դեվչիրմեն շատ սահմանափակ դեր է կատարել Օսմանյան կայսրության քրիստոնյա ազգաբնակչության մահմեդականացման ու թուրքացման գործում<sup>139</sup>: Որպես փաստարկ բերվում է այն տեսակետը, թե մանկահավաքը սահմանափակված է եղել մի շարք կետերով. քրիստոնյա հպատակների մի զգալի մաս ազատված է եղել դեվչիրմեից, իսկ արտոնությունների թվում նշվում են, մասնավորապես, քաղաքում բնակվելը, պետության համար կարևոր աշխատանք կատարելը:

Բուլղարիայում լույս ընծայված օսմանյան փաստաթղթերի ժողովածուների, ինչպես նաև եվրոպացի

<sup>136</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 85-86.

<sup>137</sup> По следите на насилнето..., с. 234.

<sup>138</sup> V. Menage, Devşirme, Encyclopedia of Islam, 1991, Leiden, Vol. II, p.211.

<sup>139</sup> Y. Ercan, Devşirme sorunu..., s. 716.

Հանապարհորդների նարատիվ նյութերի հիման վրա ժխտվում է այդ արտոնությունների համատարած, երկարա-  
ժամկետ և հուսալի, հետևաբար նաև ազդեցիկ լինելը:

Քաղաքներում բնակությունը որպես դեվչիրմեից  
ազատող արտոնություն չլինելու վերաբերյալ արդեն  
խոսվեց:

Ինչ վերաբերվում է հատուկ մասնագիտությունների  
տեր մարդկանց ընտանիքներին, ապա, իրոք, դեվչիրմեից  
ազատված էին բնակչության փոքրաթիվ կատեգորիաներ,  
որոնք ունեին հատուկ պարտավորություններ, սակայն այդ  
արտոնությունները երկարատև չէին: 1621թ. հավաքի  
ֆերմանը ցույց է տալիս, թե որքան եթերային էին այդ  
ժամանակավոր արտոնությունները<sup>140</sup>: Այնտեղ հստակորեն  
ու կտրականապես նշվում է, որ եթե որոշ *վաքուֆների*  
*ռայաթներ* և կամ հանքափորությամբ զբաղվող  
բնակչությունը ցույց տան փաստաթուղթ, որով նրանք  
ազատված էին դեվչիրմեից, ապա դա այլևս չպետք է  
համարել վավեր: Ավելին, հրամայվում էր այդ  
փաստաթուղթը վերցնել և ուղարկել Ստամբուլ, իսկ  
տղաներին հավաքել ընդհանուր հիմունքներով: Այստեղ  
տեղին է ընդգծել երկու հանգամանք: Ակնհայտ է  
ավատատերերի ցանկությունը՝ ապահովել աշխատող  
ծեռքի մշտական թվաքանակ, որի համար նրանք երբեմն  
հասցնում էին դեվչիրմեից ազատել իրենց ենթակա  
բնակչությանը: Սակայն դա տևում էր շատ կարճ, քանի դեռ  
հակասում էր կենտրոնական իշխանության շահերին:  
Այսպիսով, հստակ երևում է, որ այս հավաքից ազատվելն  
ավելի շուտ բացառություն էր, քան կանոն<sup>141</sup>: Դեվչիրմեից  
ազատվելը վերաբերում էր առաջին հերթին *վաքուֆային* ու  
սուլթանապատկան հողերի բնակչությանը<sup>142</sup>:

Օսմանյան կայսրությունում կային նաև  
տարածքներ, որոնց ազգաբնակչությունն ազատված էր

<sup>140</sup> По следите на насилието..., с. 239-240.

<sup>141</sup> В. Мутафчиева, Аграрните отношения ....., с. 140.

<sup>142</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 86.

դեվչիրմեից՝ շնորհիվ իրենց կատարած գործի կամ պարտականության:

Մաքսավորները, հանքավորները, կամուրջների ու ամրոցների վերանորոգման վրա աշխատողներն ու նման բոլոր պետական ծառայության մեջ գտնվողները ժամանակ առ ժամանակ ազատվում էին դեվչիրմեից<sup>143</sup>:

Այսպես, հրամաններից մեկում (1578թ.) ասվում է Սիրեմ սանջաքի քաղաքներից մեկի շրջակա տարածքի ռայաթների՝ դեվչիրմեից ազատման մասին, քանի որ վերջիններս զբաղված էին կամրջի վերանորոգման աշխատանքներով<sup>144</sup>, իսկ մեկ այլ հրամանով (1578թ.) ազատվում են հավաքից Բիգա սանջաքի ռայաթները, որոնք պետական նավերի վրա թիավարություն էին անում:

1569թ. սուլթանական հրամանով դեվչիրմեից ազատվում են Շարքը Քարահիսար քաղաքի շրջակայքի չորս հանքավայրերում աշխատող քսաներեք գյուղերի գյուղացիները, որոնք նաև ազատվում են այլ հարկերից<sup>145</sup>:

Հանքավորների բնակավայրերի ռայաթների ազատումը դեվչիրմեից կապված էր աշխատուժի ապահովման հետ, որը բխում էր արդեն կենտրոնական իշխանությունների հատուկ շահերից: Մետաղների, մասնավորապես՝ երկաթի հանույթը XV դարից սկսած հատկապես մեծ նշանակություն ուներ օսմանյան տնտեսության մեջ, քանի որ ծախսվում էր տարբեր տեսակի հրազենի պատրաստման վրա:

Երկաթի արտադրությունը պետության մենատիրությունն էր, որով նա ապահովում էր հրանոթների ու թեթև հրազենի արտադրությանն անհրաժեշտ մետաղը: Երկաթի հանույթի ոլորտում անհրաժեշտ որակավորման պահպանման համար պետության կողմից կիրառվում էին հատուկ կարգավիճակներ: Դա ամրագրված է դեվչիրմեից ազատման մասին 1536թ. սուլթանական հատուկ

<sup>143</sup> Y. Ercan, Devşirme sorunu..., s. 716.

<sup>144</sup> İ. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s.110, 113.

<sup>145</sup> Նույն տեղում, s.110.



հրովարտակով: Սակայն դրա երկարաժամկետ ուժը հույժ կասկածելի է: 1621թ. հիշատակված սուլթանական հրովարտակը վկայում է, որ կենտրոնական իշխանությունը հակասում էր սեփական որոշումներին ու պահանջում էր անցկացնել նաև հանքափորների հավաք:

Նմանատիպ սուլթանական մի հրաման կա նաև հիջրայի 975թ. (1567-1568թթ.) հավաքի ժամանակ տեղի ունեցած մի դեպքի վերաբերյալ, որով հրամայվում է դեվչիքմե անցկացնել նաև Մարմարա ծովի Միրալի ու Մարմարա կղզիներում՝ առանց ուշադրություն դարձնելու կղզու՝ հավաքից ազատման մասին հրամանին<sup>146</sup>:

1558թ. սուլթանական հրամանից տեղեկանում ենք, որ Ենիփազարի շրջակայքի հանքափորները, ազատված լինելով դեվչիքմեից, հրաժարվել են հանձնել իրենց որդիներին: Սակայն սուլթան Սուլեյման II Քանունին չեղյալ է հայտարարել սույն արտոնությունը և հրամայել պաշտոնյաներին հավաքել տղաներին ըստ համընդհանուր կանոնների<sup>147</sup>:

Այսպես, ազատման թղթի անտեսման մասին տեղեկություն ենք քաղում նաև XV դարի մի հայերեն ձեռագրի հիշատակարանից. «...Իսկ անաւրէն արքայն Տաճկաց ժողովեաց գըրիստոնէից մանկունսն և եբեր Ըստամաթոյ. իսկ եպիսկոպոսն եկեալ ի հետ մանկանցն և եբեր գթութ զաատութեան Հայոց, իսկ անաւրէն արքայն ոչինչ համարեցաւ գթութն...»<sup>148</sup>:

Առանձին դեպքերում դեվչիքմե հարկից ազատվում էին *թայաթները*, որոնք աշխատում էին սուլթանապատկան հողերում կամ նրա ընտանիքի կողմից հիմնված *վաքուֆների* տարածքներում: Այսպես, Մուրադ III-ի մորը

<sup>146</sup> 7 numaralı mühimme defteri (975-976 / 1567-1569), c.1, Ankara, 1998, Osmanlı Arşiv Daire Başkanlığı, s. 18.

<sup>147</sup> İ. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s.100.

<sup>148</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480թթ.), կազմեց Լ. Նաչիկյան, Երևան, 1958, էջ 216:



պատկանող *խասսերի քաղիներին* հրամայվում է ազատել դեվչիրմեից խասսերում գրանցված քրիստոնյաներին, քանի որ այդ *խասսերը* վերափոխվել էին *վաքուֆի* Սկյուտարիի մզկիթի կառուցումն ապահովելու նպատակով<sup>149</sup>:

Կարելի է բերել շատ նման օրինակներ, սակայն պետք է ընդգծել, որ ընդհանուր առմամբ դեվչիրմեից ազատված քրիստոնյաների թիվը խիստ աննշան էր, բացի այդ ազատումն անկայուն էր ու հաճախ չեղյալ էր հայտարարվում:

Այսպես, 1610թ. արքեպիսկոպոս Մարինո Բիդին կոնգրեգացիա ուղղած իր նամակում տեղեկացնում է Չիպրովեցի բնակչությունից դեվչիրմեի հավաքման մասին<sup>150</sup>: Իսկ ինչպես տեսնում ենք բուլղարերենով լույս ընծայված օսմանյան փաստաթղթերի ժողովածուի հատորներից մեկում տեղ գտած Կիսուկա ու Ջնեպուե *թիմարների* ցուցակից, վերոհիշյալ բնակավայրը դեռ XV դարից ոչ միայն հանքափորային էր, այլև ընդգրկված էր սուլթանական *խասսի* մեջ<sup>151</sup>: Հետևաբար, կարող ենք պնդել, որ ո՛չ հանքափորային, ո՛չ էլ սուլթանապատկան համայնքի անդամ լինելու կարգավիճակը չէր երաշխավորում ազատում տղայաժողովներից:

Այսպիսով, համոզվում ենք, որ հնարավոր չէ խոսել քրիստոնյա հպատակների համար որևէ արտոնության (արտոնություն ասելով՝ նկատի ունենք նաև որոշակի օրենքներ ու կանոնակարգեր) մասին Օսմանյան կայսրության նման պետությունում, որտեղ ծաղկում էին ամեն տեսակի կամայականություններն ու կաշառակերությունը՝ սուլթանից մինչև ամենաստորին պաշտոնյան:

<sup>149</sup> İ. H. Uzunçarşılı, Karıkulu ocakları..., s.113-114.

<sup>150</sup> А. Новичев, К истории рабства..., с. 95-96.

<sup>151</sup> Турски извори за българската история, III, С., (XV - XVI в.). Съставила и коментирала Б. Цветкова, под ред. на Б.Цветкова и А. Разбойников, С., 1972, с. 387 цит. по Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 87.

Ավելորդ է նշել, որ դեվչիրմեի ժամանակ արտոնությունների երկարաժամկետ գործածման մասին կարծիքը սին էր:

Մանրամասն ուսումնասիրության ժամանակ պարզ է դառնում, որ այս հավաքներն ու դրանց ժամանակ կիրառվող չափանիշներն ունեն որոշակի նպատակներ: Օսմանցիները հավաքում էին ոչ թե պարզապես առողջ ու նորմալ տղաների, այլ նրանց, ովքեր իրենց տարեկիցներին գերազանցում էին ֆիզիկապես ու խելքով<sup>152</sup>: Նրանք ընտրում էին սերնդի սերուցքը: Դեվչիրմեի միջոցով օսմանյան պետությունը թուլացնում էր ենթակա ժողովուրդների ներուժը, վերցնում այն տղաներին, որոնք կարող էին հետագայում դառնալ առաջնորդ: Նույնիսկ եթե դա չօգտագործեր իր կարիքների ու ծրագրերի համար, դեվչիրմեի ազդեցությունն այն էր, որ նվազեցվում էր հնարավոր դիմադրության հավանականությունը:

Այսպես, մանկահավաքի ժամանակ նախընտրում էին ազնվականների ու կղերականների երեխաներին<sup>153</sup>: Փաստորեն, նախընտրելով ազնվականների տղաներին՝ այսպիսով փորձում էին կտրել քրիստոնյա ազնվականության արմատները: Սա կարելի է համարել ռազմավարական քայլ առաջիկա հնարավոր ապստամբություններն ու ընդվզումները կանխելու ուղղությամբ, քանի որ հենց ազնվականներն էին մեծավ մասամբ առաջնորդում ժողովրդական շարժումները: Կղերականներից որդի հավաքելը կարելի է բացատրել նույն տրամաբանությամբ. այս դեպքում պարզապես թիրախը կրոնն էր՝ քրիստոնեությունը, որն այն ժամանակ, պետության բացակայության պայմաններում, կատարում էր ժողովրդին միավորողի ու առաջնորդի դերը: Գյուլի քահանան շատ հաճախ իր գործը փոխանցում էր որդուն, ինչպես ասենք, հանքափորն էր իր արհեստը սովորեցնում զավակին: Այսպիսով, խնայելով հանքափորի որդուն, քանի որ դա բարդ ու կայսրության համար արժեքավոր մասնագիտություն էր, վերցվում էր

<sup>152</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 84.

<sup>153</sup> Y. Ercan, Devşirme sorunu..., s. 717.

կրոնավորի որդին՝ ևս մեկ հարված հասցնելով քրիստոնեությանը և տվյալ ազգին:

Հպատակ քրիստոնյաների ավելի քան տասնհինգ սերունդ դեվչիրմեի մեխանիզմի միջոցով օտարվել է իր ազգից: Սակայն չենք էլ կարող ասել, որ օսմանցիները հասել են իրենց նպատակին, քանի որ նրանք չկարողացան վերացնել հայ, բուլղարացի, սերբ և այլ հպատակ քրիստոնյա ժողովուրդների ինքնությունը և ծուլել իրենց մեջ: Բայց փաստ է, որ այդ ժողովուրդների նշանակալի մասը տարանջատվում էր ազգից և շարունակական ու համակարգված պատրաստության արդյունքում դառնում օսմանյան իշխանության պահպանման գործիք:

*Դեվչիրմե հավաքների ժամանակ իրականացվող չարաշահումները և բնակչության խուսափումը հավաքներից*

Արդեն բավական դաժան «արյան հարկը», գործնականում դառնում էր էլ ավելի ծանր կենտրոնի պաշտոնյաների ու տեղական իշխանությունների չարաշահումների արդյունքում: Իրենց գործողություններով՝ նրանք վնաս էին հասցնում նաև կառավարությանը, դրա հետևանքով կառավարությունն ստիպված էր լինում արծագանքել դրանց ու ժամանակ առ ժամանակ նույնիսկ պատժել մեղավորներին: Դրա մասին են վկայում սուլթանական հրամանները:

Այսպես, 1565թ. նոյեմբերով թվագրված սուլթանական հրամանում Օհրիի *քաղիին* տեղեկացվում է, որ աջեմի օլյաններ հավաքելու առաքելությամբ տարածք մեկնած *յայարաշի* Մեհմեդը երկու տեղաբնակների օգնությամբ ժողովրդից շորթումներ է կատարել և, պետության պիտանի աջեմի օլյաններին չհավաքագրելով, կաշառք է վերցրել<sup>154</sup>:

1566թ. հունվարով թվագրված մեկ այլ հրամանում հավաքի պատասխանատուն մեղադրվում էր շորթման, բնակչության ապօրինի հարկման, 5-10 տարեկան

<sup>154</sup> 5 numaralı mülhimme defteri (973 / 1565-1566), c.1, Ankara, 1994, s. 83.

երեխաներին ստիպողաբար ռայաթներից հավաքելու և այլնի մեջ<sup>155</sup>։

Լայն տարածում գտած կաշառակերության, շորթման մասին գրում են նաև եվրոպական աղբյուրները։ Այսպես, Ղերնշվամն իր օրագրում գրում է, որ եթե հայրերից մեկը սակարկել գիտի, ապա նա կարող է գաղտնի կերպով ազատել, հետ գնել իր զավակին՝ վճարելով մի քանի հարյուր *ասպեր*։ «Այսպիսով, տասանորդ հավաքողները գաղտնի կերպով շատ փող են ստանում»<sup>156</sup>։

Նույնի մասին է հայտնում նաև գերմանացի ճանապարհորդ Ստեֆան Գերլախը, որը Օսմանյան կայսրությունում է եղել 1575-1578թթ., այսինքն՝ Ղերնշվամից մոտ քառորդ դար անց։ Նա գրում է իր «Օրագրում», որ բոլոր քրիստոնյա ընտանիքները պարտավոր էին բերել հավաքատեղի «իրենց բոլոր որդիներին, որոնցից թուրքերը վերցնում են ում ուզեն, այնպես որ հաճախ մեկ հայրը կորցնում է երկու-երեք որդի, իսկ մյուսը՝ և ոչ մեկին»։ Եվ ապա. «Հարուստ քրիստոնյաները հետ են գնում իրենց զավակներին»<sup>157</sup>։ Հետ գնված երեխաների տեղը զբաղեցնում էին որբերը, գնչուները, հրեաները և նույնիսկ թուրքերը։ Հատկապես խոշոր չարաշահումներ էին տեղի ունենում XVI դարում<sup>158</sup>։

Այսպես, կաշառքի օգնությամբ տղաներին դեվշիր-մեից ազատելու մասին է գրում նաև հայ ժամանակագիր Երեմիա (Չելեբի) Քյոմուրճյանը.

«...Ի տյն ամի տյն թագաւորս  
ըզտեօյշիւրմէն է արարեալ,  
ՅԱնատօլի մարդ ուլարկէ՝  
զՀայոց մանկունսն ժողովեալ։

<sup>155</sup> J. H. Uzunçarşılı, Karıkulu osakları..., s.16, 18.

<sup>156</sup> А. Новичев, К истории рабства..., с. 94.

<sup>157</sup> Стефан Герлах, Дневник на едно пътуване..., с. 62.

<sup>158</sup> J. Mordtmann, Dewshirme.- Enzyklopedie des Islams. Bd 1, Leiden - Leipzig, 1908, s. 992.

...Թէպէտ մեծատունք շատ ոսկուով  
զորդիսն հազիւ են զերծուցեալ<sup>159</sup>»:

\*\*\*

Թուրքալեզու արքայութիւնները տեղեկութիւններ են պարունակում նաև տեղական իշխանութիւնների չարաշահումների վերաբերյալ. նրանք չէին հանում զրանցամատչաններից դեվչիրմեով վերցված տղաներին ու շարունակում էին նրանց համար *քիզլե* պահանջել նրանց հայրերից: Լինում էր, որ հավաքագրված տղաներն արդեն ենիչերի էին դարձել, իսկ տեղական իշխանութիւնները դեռ շարունակում էին պահանջել հարկ նրանց համար<sup>160</sup>:

Այսամպրայի *քադիին* ուղղված հետևյալ հրամանից պարզ է դառնում, որ Քարլուիլի և Իներաթլը *սանջաքները* վերահսկող Բալը անունով *զաիմը* աջեմի օղլաններ հավաքելու եկած *յայաբաշիի* վերադարձից հետո հայտարարել է, որ նա իրեն է փոխանցել դեվչիրմե անցկացնելու առաքելութիւնը և գլուղից փող է շորթել<sup>161</sup>:

Ինչպես վերը նշեցինք, տղայահավաք անցկացնողների չարաշահումները, որոնք հաճախ տեղի էին ունենում տեղական իշխանութիւնների հետ պայմանավորվածությամբ, վնաս էին հասցնում կառավարությանը: Այդ կապակցությամբ հրապարակված հրամաններում, որոնք ուղղված են *քադիներին* կամ պետության այլ ներկայացուցիչներին, չարաշահումները դատապարտվում էին որպէս «հակասութիւն շարիաթին ու օրենքին» (*hilaf-i şer' ve kanun*)<sup>162</sup>: Բարձր Դուռը պահանջում էր տեղական իշխանութիւններից՝ թույլ չտալ կրոնական ու աշխարհիկ օրենքների խախտում, իսկ մեղավորներին ուղարկել Ստամբուլ:

<sup>159</sup> *Երեմիա Քեովիլըմեան*, Պատմութիւն համառոտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն, աշխատասիրութեամբ՝ Ժ.Ավետիսյանի, Եր., 1969, էջ 145:

<sup>160</sup> İ. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s.27, 28.

<sup>161</sup> 5 numaralı mühimme defteri..., s. 216.

<sup>162</sup> İ. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s.102.

Այսպես, օրինակ, Սեմենդիրեի ու Օզիչեի *քաղի-ներին* մեկ այլ հրամանով տեղեկացվում է, որ ժողովրդից ապօրինի փող վերցնող ու հավաքված երեխաներին կրկին ընտանիքներին վաճառող անձը ձերբակալվել է. նրա ունեցվածքը՝ բռնագրավվել, իսկ դեվչիոմեն շարունակելու համար՝ նշանակվել նոր պաշտոնյա<sup>163</sup>:

Սակայն չարաշահումների դեմ պայքարում մեծ հաջողությունների հնարավորություն չկար: Դեվչիոմեն համակարգն այնպիսին էր, որ չարաշահումների լայն հնարավորություններ էր տալիս:

Մրա հետ կապված հատուկ ուշադրության է արժանի Ստ. Գերլախի մեկ հաղորդում. «Կոստանդնուպոլսում շատերը փաշայից որոշակի տեղանքից քրիստոնյա երեխաների տասանորդ հավաքելու իրավունքը գնելու հնարավորության են սպասում: Այսպիսի մարդիկ արագ հարստանում են, որովհետև քրիստոնյաներից ոմանք միայն մեկ որդի ունեն: Նրան պահպանելու համար նա պատրաստ է տալ 60-70 *դուկատ*»<sup>164</sup>: Հատկանշական է, որ Ստ. Գերլախը գրում է բազում մարդկանց մասին, որոնք դեվչիոմեն հավաք անցկացնելու իրավունք էին գնում: Հետևաբար այս ոլորտում ևս կապալառու համակարգը լայնորեն տարածված էր այն ժամանակ, երբ Գերլախը գտնվում էր Օսմանյան կայսրությունում:

Կապալառու համակարգն (*iltizam sistemi*) Օսմանյան կայսրությունում հարկահավաքության յուրահատուկ մեթոդ էր: Պետական պաշտոնյաները հարկ հավաքելու իրավունքը հիմնականում վաճառում էին մեծահարուստներին կամ պարզապես ձեռներեց մարդկանց՝ ստանալով մեկ տարվա մեջ հավաքվելիք հարկը միանգամից, ինչը ձեռնտու էր այդ պաշտոնյային, որը կամ այդ տարվա ընթացքում դրամը տալիս էր վաշխառուներին, կամ էլ ծանր պատերազմի դեպքում այդ գումարը շտապ պետք էր լինում պետությանը: Կապալով հարկ հավաքելու իրավունքը գնած կապալառուն

<sup>163</sup> 5 numaralı mühimme defteri..., s. 138.

<sup>164</sup> Стефан Герлах, Дневник на едно пътуване..., с. 179.

իր հերթին այդքան մեծ գումար հաճախ չէր ունենում և տոկոսով էր վերցնում (ի դեպ, շատ դեպքերում հայ սեղանավորներից): Մեծ տոկոսները վճարելու, ինչպես նաև ներդրած փողից եկամուտ ստանալու համար կապալառուները կրկնակի և եռակի հարկեր էին հավաքում ազգաբնակչությունից: Դեվձիմեի դեպքում նրանք, անտեսելով բոլոր գրված ու չգրված կանոններն ու նորմերը, ձգտում էին հավաքել որքան հնարավոր է շատ մանուկ կամ գանձել հնարավորինս շատ կաշառք: Կասկած չկա, որ կապալառու համակարգի կիրառումը օժանդակում էր քրիստոնյա երեխաների որսի ուժգնացմանը: Ակնհայտ է նաև այն, որ չարաշահումներն անպայմանորեն հարում էին կաշառքին:

Այսպիսով, ընդհանուր առմամբ դեվձիմե համակարգը, որը իշխանության ներկայացուցիչների համար արագ հարստանալու հնարավորություններ էր ստեղծում, նրանք դրդում էր հավաքել հնարավորինս շատ քրիստոնյա տղաներ: Համաձայն Մորդտմանի հաջող որակման այս համակարգը «ստրուկների աֆրիկյան որսի» տեսք էր ստացել<sup>165</sup>:

\*\*\*

Բնականաբար, քրիստոնյա ընտանիքների միայն մի մասն էր ի վիճակի կաշառքների օգնությամբ ազատել իրենց որդիներին հավաքից: Քրիստոնյաների ճնշող մեծամասնությունը աղքատության մեջ էր: Մինչդեռ նրանք չէին ցանկանում հրաժեշտ տալ իրենց որդիներին ու տալ նրանց ստրկության: Այդ պատճառով նրանք դիմում էին դեվձիմեի դեմ պայքարելու ամեն մի միջոցի՝ օրինական ու ապօրինի:

Օրինական միջոցների շարքին են պատկանում առաջին հերթին փոքրահասակ տղաների ամուսնությունները: Գերլախը գրում է. «Տղաները ամուսնանում են 9-10 տարեկան հասակում, որպեսզի մնան ազատ ու

<sup>165</sup> J. Mordtmann, Dewshirme..., s. 992.



չհավաքվեն»<sup>166</sup>: Ամուսնացածներին զրանցում էին հարկատուների ցուցակի մեջ: Որոշ մայրեր հուսահատությունից հաշմանդամ էին դարձնում իրենց որդիներին, որպեսզի նրանց չկորցնեն առհավետ<sup>167</sup>:

Ավելի հաճախ ծնողները թաքցնում էին իրենց զավակներին, երբ հայտնվում էին դեվչիոմե հավաքող պաշտոնյաները ենիչերիների ուղեկցությամբ: Նրանց թաքցնում էին անտառներում, լեռներում, քարանձավներում և այլուր<sup>168</sup>: Դրա մասին վկայում են թե՛ եվրոպական, թե՛ օսմանական աղբյուրները, օրինակ՝ սուլթանական հրահանգները, որտեղ տեղական իշխանություններին հրամայվում է պայքարել թաքցնելու դեմ ու պատժել մեղավորներին<sup>169</sup>: Իշխանությունները ջանասիրաբար ի կատար էին ածում այսօրինակ հրամանները: Դաժանության վառ օրինակ է բերում արքեպիսկոպոս Մարինո Բիդին, որն այցելել է բուլղարական գյուղեր ու քաղաքներ 1610-1611թթ.: Կոնգրեգացիային իր զեկույցում նա տեղեկացնում է, որ 1610թ. Չիպրովեց քաղաքում էր գտնվում Սոֆիայի կաթոլիկ եպիսկոպոս Պետր Սոլինատը, որը թաքցրել էր քրիստոնյա երեխաներին հավաքողներից: Քաղաք ժամանած սանջաքբեյը երդվել էր սպանել նախ եպիսկոպոսին, ապա՝ բռնված քրիստոնյաներին ու բուլոբին էլ զրկել սեփականությունից: Թուրքերն արդեն սկսել էին պատրաստել ցցերը, սակայն ժողովրդին հաջողվեց կաշառքի օգնությամբ զլուխն ազատել<sup>170</sup>:

XVI դարի կեսով թվագրված մի հրամանում, որն ուղղված է Նիդդեի բեյին ու *քաղիին*, պատվիրվում է հավաքել եվթանի գյուղի *զիմնի* բնակիչներին, որոնք լքել են

<sup>166</sup> Стефан Герлах, Дневник на едно пътуване..., с. 179.

<sup>167</sup> Ц. Георгиева, Развитие и характер на кръвния данък, с. 65, մեջբերում ըստ Новичев А., К истории рабства..., с. 95.

<sup>168</sup> 7 numaralı mühimme defteri (975-976 / 1567-1569), c.1, Ankara, 1998, s. 18.

<sup>169</sup> I. H. Uzunçarşılı, Karıkulu ocakları..., s. 105.

<sup>170</sup> А. Новичев, К истории рабства..., с. 95-96



գյուղը տղայաժողովից խուսափելու համար. «Թող վերադարձվեն գյուղ ու հավաքվեն հավաքի ենթակա տղաները»<sup>171</sup>:

Կան շատ դեպքեր, երբ քրիստոնյա ընտանիքները դիմադրել են դեվչիրմե հավաքին: Այսպես, 1580թ. Հերցեգովինայի *Սանջաքի նահիյեներից* մեկում գյուղացիները զենքը ձեռքին դուրս են եկել սուլթանական պաշտոնյաների դեմ, որոնք դեվչիրմե հավաք էին անցկացնում: *Սանջաքի* ղեկավարին ուղղված հրամանում հրամայվում էր ձերբակալել սադրիչներին ու դատապարտել թիապարտության<sup>172</sup>:

Հիջրայով 973թ. (1565-1566թթ.) թվագրված Իլբասանի բեյին ուղղված սուլթանական հրամանը պահանջում է՝ որպես խրատ մյուսներին, պատժել Բեզրեշթե գյուղի բնակչությանը աջեմի օղլանների հավաքից վերադարձող ենիչերիների վրա հարձակում կատարելու համար<sup>173</sup>:

Իսքենդերիեի բեյին ուղղված հրամանից պարզ է դառնում, որ Իփեք *քազայում* դեվչիրմե հավաքելու եկած պաշտոնյային տեղի բնակչությունը չի ենթարկվել ու հարձակվել է նրան ուղեկցող ենիչերիների վրա<sup>174</sup>:

Մի շարք հրամաններում Բարձր Դուռը արտահայտում է իր դժգոհությունը *դեվչիրմենների* փախուստի կապակցությամբ, որոնք փախուստի էին դիմում արդեն հավաքողների ձեռքն անցնելուց հետո<sup>175</sup>: Օրինակ, Քայսերի քաղաքի բեյին ու *քադիին* ուղղված հրամանում նշվում է, որ փախուստի են դիմել *դեվչիրմեններն* արդեն այն բանից հետո, երբ նրանց տարել են Ստամբուլ ու մահմեդականաց-

<sup>171</sup> 3 numaralı mühimme defteri (966-968 / 1558-1560), c.1, Ankara, 1993, s. 113.

<sup>172</sup> İ. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s. 21, 104.

<sup>173</sup> 5 numaralı mühimme defteri..., s. 161.

<sup>174</sup> Նույն տեղում, s. 159.

<sup>175</sup> *Stu* Документи за историята на българския народ, XV-XIX век, София, Държавно Издателство "Народна просвета", 1986, с. 20.

րել<sup>176</sup>: Որպեսզի բարդացնեն փախուստը, հրաման է տրվում Փոքր Ասիայում հավաքվող տղաներին ուղարկել *Ռումելիա* և հակառակը<sup>177</sup>: Ենթադրվում էր, որ քրիստոնյա տղաները, որոնք, որպես կանոն, չէին տիրապետում թուրքերենին (հիշեցնենք նաև, որ թուրքերենի իմացությամբ տղաներին չէին էլ հավաքում), պետք է ջանան տուն գնալ, սակայն կհանդիպեն ճանապարհին մի դժվար անցանելի արգելքի՝ ծովին, ուստի նրանց հեշտ կլինի բռնել: Սակայն, ի հեճուկս սպասվող վտանգների, շատ *դեվչիրմեներ* փախչում էին և այդ գործում հաջողածները կրկին դառնում էին քրիստոնյա: Իշխանությունները պահանջում էին ծնողներից վերադարձնել *դեվչիրմեներին*: Այդ հրամանին չանսալու հետևանքով ծնողներին դաժանորեն պատժում էին ու նույնիսկ վաճառում ստրկության<sup>178</sup>:

Այսպես, 1564թ. Սիս քաղաքի *քաղիին* ուղղված հրամանում ասվում է, որ Ֆեքե գյուղի հավաքվածների ազգականները, գաղտնի կերպով Ստամբուլում *դեվչիրմեների* շրթերը փոխելով, հետ են բերել արդեն մահմեդականացման ծեսն անցած 7 տղաների ու եկեղեցում քրիստոնեությանը վերադարձնելու ծես կատարել: Այս անգամ ևս Բարձր Դուռը պահանջում էր խստագույնս պատժել «մեղավորներին»<sup>179</sup>:

Չնայած դաժան ճնշումներին, գերյալներն, այնուամենայնիվ, փորձում էին դիմել փախուստի: Փախչողները հիմնականում 15-20 տարեկան տղաներն էին: «Ամեն տարի *քեթխուդաները* բռնում էին այդ *դեվչիրմեներին Ռումելիայում ու Անատոլիայում*»<sup>180</sup>, սակայն փախուստները չէին դադարում: Դրա մասին են վկայում սուլթանների

<sup>176</sup> 6 numaralı mühimme defteri (972 / 1564-1565), c.1, Ankara, 1995, s. 314, 138.

<sup>177</sup> İ. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s.26. İ. H. Uzunçarşılı, İslam Ansiklopedisi, Devşirme, s. 565

<sup>178</sup> А. Новичев, К истории рабства..., с. 96.

<sup>179</sup> 5 numaralı mühimme defteri..., s. 302. А. Новичев, К истории рабства..., с. 96

<sup>180</sup> İ. H. Uzunçarşılı, İslam Ansiklopedisi, Devşirme, s. 565

բազում հրամանները՝ ուղղված տեղական իշխանություններին<sup>181</sup>։

Հայրենիք փախչելու երիտասարդ *ղեվչիրմենների* հույսը դեռ երկար տարիներ չէր մարում։ Նրանց մի մասը նույնիսկ մի քանի տարի հետո հնարավորության դեպքում չէր վարանում փախչել հայրենիք<sup>182</sup>։ Այսպես, Ենիշեհիրի *քարհին* ուղղված հրամանից պարզ է դառնում, որ Տըռնուվա գյուղից Իյասի որդի Շիրյանն ու Քուրդի որդի Նիկոն, լինելով արդեն աջեմի օղլան, փախել են հայրենիք կերպասագործի մոտից, որին տրվել էին որպես օգնական՝ շակիրդ<sup>183</sup>։ Իսկ մեկ այլ սուլթանական հրամանից տեղեկանում ենք, որ աջեմի օղլանը հայրենիք է փախել, վերադարձել քրիստոնեությանը, ամուսնացել ու զավակներ ունեցել՝ հավաքագրվելուց արդեն 7 տարի հետո<sup>184</sup>։

Ղեվչիրմե համակարգի մասին վերոշարադրյալը բերում է այն համոզման, որ այս համակարգով հարազատ միջավայրից կտրված երեխաները ջայաթների դասակարգից անցում էին կատարում ստրուկների դասակարգ։ Ղեվչիրմե հավաքողների ձեռքն ընկնելով՝ նրանք դառնում էին սուլթանի ստրուկները, լիովին կորցնում տեղաշարժման ազատությունը ու գրեթե չէին կարողանում գործել ըստ ցանկության։

*Ղեվչիրմե հավաքների անցկացման պարբերականությունը և քանակական չափաբաժինը*

Ղեվչիրմեի երեքդարյա ընթացքում հավաքման պարբերականությունը փոփոխվում էր։ Դա պայմանավորված էր մի շարք կոնկրետ պարագաներով. օսմանյան պե-

<sup>181</sup> İ. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s.125-128. 12 numaralı mühimme defteri (978-979 / 1570-1572), c.3, Ankara, 1996, s. 143, 165.

<sup>182</sup> 7 numaralı mühimme defteri (975-976 / 1567-1569), c.1, Ankara, 1998, s. 463. 12 numaralı mühimme defteri..., s. 45.

<sup>183</sup> 3 numaralı mühimme defteri (966-968 / 1558-1560), c.1, Ankara, 1993, s. 654.

<sup>184</sup> 12 numaralı mühimme defteri..., s. 156.

տության մեջ ռազմական ու կառավարման համակարգերի փոփոխություններով, բանակում մարդաքանակի պահանջարկի փոփոխություններով, ինչը կախված էր արտաքին ու ներքին քաղաքական իրավիճակից:

Եվրոպական աղբյուրներից առաջինը դոմինիկյան միաբանության վանական Ֆ.Ջորջիուսն է, որ հայտնում է դեվձիրմեի հնգամյա պարբերականության մասին<sup>185</sup>: Այդ տեղեկությունները վերաբերում են XV դարի կեսերին (1458թ.): Հաջորդ հարյուրամյակի առաջին տասնամյակի ընթացքում այդ պարբերականությունը պահպանվում է: Բ.Կուրիպեշիչը, որը օսմանյան տարածքներում է գտնվել 1530թ., բավականին անբոշ կերպով հայտնում է, որ տղայաժողովները կատարվում էին մի քանի տարին մեկ<sup>186</sup>: Մոտ երկու տասնամյակ անց՝ XVI դարի 50-ական թվականներին, դեվձիրմեները զգալիորեն հաճախակիացան: Այդ փաստը նշում է ժամանակակից Ա.Վրանչիչը, որը հստակորեն գրում է, որ եթե նախկինում դեվձիրմեն կատարվում էր հինգ տարին մեկ, ապա ժամանակային կտրվածքը նեղացել է մինչև երեք տարի<sup>187</sup>: Այս պարագան հաստատում է նաև Հ.Դերնշվամը<sup>188</sup>: Թեև, դեռ 1516թ. Պետենցիուսը հայտնում էր եռամյա միջակայքի մասին<sup>189</sup>:

Հավաքների պարբերականությունում փոփոխություն տեղի է ունեցել XVI դարի կեսին, Սուլեյման I-ի կառավարման տարիներին օսմանյան նվաճողական քաղաքականության զագաթնակետին, երբ կայսրությունը լարում էր ամբողջ ուժերը Միջին Եվրոպայում հաստատվելու համար և ստանում լուրջ դիմադրություն Հարսուրդյան կայսրության կողմից: Նույն ժամանակ շարունակվում էր օսմանյան հաղթարշավը Միջերկրական

<sup>185</sup> J.A.B. Palmer, The Origins of the Janissaries, Bulletin of John Rylands Library, V, XXV, 1953, 2, p.467.

<sup>186</sup> По следите на насилнето..., с. 219.

<sup>187</sup> Նույն տեղում, с. 221.

<sup>188</sup> Նույն տեղում, с. 221-227.

<sup>189</sup> J.A.B. Palmer, The Origins of the Janissaries..., p. 467.

ծովի ասիական ու աֆրիկյան առափնյա շրջաններում: Թե՛ ռազմական արշավանքների, թե՛ նոր գրավված շրջաններում օսմանյան իշխանությանը օժանդակելու համար մարդկանց մեծ պահանջ կար, և քանի որ դեվչիրմեն էր մարդկային ռեսուրսների լրացման աղբյուրը, կենտրոնական իշխանությունը խտացրեց հավաքների միջև ընկած ժամանակը մինչև հնարավոր նվազագույն ժամկետները: Արվում էր ամեն ինչ, որպեսզի նոր մահմեդականացվածներն արագորեն ինտեգրվեն օսմանյան բանակում ու վարչական ապարատում: Հաջորդ տասնամյակներին, սակայն, չնայած շարունակվող ռազմական լարվածությանը, մանկահավաքների հաճախականությունը սկսեց համեմատաբար նվազել: Որպես սրա մեկ պատճառ կարելի է դիտել այն, որ ի հայտ եկավ մի միտում, համաձայն որի՝ ենիչերիությունը դառնում էր ժառանգական մասնագիտություն, ու ենիչերիների որդիներին թույլատրվում էր մտնել զորաբանակ: XVI դարում հավաքները երբեմն տեղի էին ունենում նույնիսկ ամեն տարի: Այնուհայտ է, որ հավաքների հաճախակիացումը XVI դարում կապված էր այն բանի հետ, որ թուրքերը նվաճողական պատերազմներ էին վարում հսկայական տարածության վրա. Վիեննայից՝ արևմուտքում մինչև Թավրիզ՝ արևելքում ու Կահիրե՝ հարավում<sup>190</sup>:

Այդ իրավիճակը շարունակվեց մինչև XVII դարի կեսերը, երբ արդեն Օսմանյան կայսրությունը սկսեց ապրել ներքին անկում, իսկ նրա եվրոպացի հակառակորդներն ավելի ու ավելի էին զարգանում: Այդ ժամանակ նոր նվաճումների մասին խոսք անգամ լինել չէր կարող: Նույն ժամանակ փոփոխություններ տեղի ունեցան ենիչերիական զորաբանակի անձնակազմում. այն սկսվեց համալրվել ենիչերիների որդիներով ու թուրքերով: Դրա հետ կապված՝ դեվչիրմեն հավաքների պարբերականությունն անկում ապրեց<sup>191</sup>:

<sup>190</sup> А. Новичев, К истории рабства..., с. 92-93.

<sup>191</sup> V. Menage, Devshirme, Encyclopedia of Islam, Leiden, 1991, Vol. II, p. 212.

Բալկաններում դեվչիրմենների պարբերականության մասին տեղեկատվությունը մեզ է հասել եվրոպական աղբյուրներից: Օսմանյան աղբյուրներն այդ առումով հստակ տեղեկություններ չեն պարունակում: Պահպանված ու հրատարակված մի քանի սուլթանական *ֆերմանները*, որոնք հռչակված են տղայաժողովների ամեն առանձին դեպքի համար, մատնանշում են, որ այդ պրակտիկան գալիս է հին ժամանակներից և որ այդ պահին հասունացել է ժամանակը տղաների նոր հավաք կազմակերպելու համար, սակայն դրանք չեն հայտնում որևէ հստակ դրդապատճառ կամ չեն սահմանում որևէ հստակ պարբերականություն: Ակնհայտ է, որ օսմանյան իշխանությունը չէր դեկավարվում որոշակի կանոնակարգված ժամանակով, այլ դեվչիրմենները կատարում էր համաձայն իր կարիքների՝ Այսպիսով, հիմք ընդունելով եվրոպացի ճանապարհորդների հայտնած պարբերականությունը՝ կարող ենք նշել, որ բուլղարական հողերում դեվչիրմենի դեպքեր են գրանցվել 1536, 1553, 1556-1557, 1573, 1601, 1610, 1622, 1638, 1646, 1666, 1705, 1711թթ.: Տեղեկությունները շատ հավաքական են, ինչը թույլ է տալիս ասել, որ մեր իմացածն ամբողջական չէ: Այսպես, մենք տեղեկություններ ունենք XVI դարակեսի մոտ չորս տասնամյակի ընթացքում հիշատակված չորս, XVII դարի առաջին 65 տարվա ընթացքում գրանցված վեց ու XVIII դարի առաջին տասնամյակի ընթացքում երկու մանկահավաքների մասին:

Ըստ հայ ժամանակագիրների տվյալների՝ հայկական նահանգներում մանկահավաքներ կատարվել են 1464, 1519, 1531, 1536, 1543, 1547, 1550, 1590 և 1622 թվականներին<sup>192</sup>: Այսպիսով, տեսնում ենք, որ հայկական տարածքներում անցկացված մեզ հայտնի մանկահավաքները խտացված են հիմնականում XVI դարում՝ 9-ից 7-ը: Ընդ որում, կա տարեթվերի երկու համընկնում՝ 1536թ. և 1622թ.:

<sup>192</sup> Վ. Նալբաթյան, Մասեր ժամանակագրություններ, հատ. Ա, Երևան, 1951, էջ 169-171:

Սահմանափակ այս տվյալներին կարելի է զումարել նաև այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ընդհանրապես օսմանյան բոլոր տարածքներին, ինչից հետո կարելի է հաստատապես պնդել, որ դեվչիրմե հավաքներում ժողովվում էին բոլոր ժողովրդագրական սերունդների (դեմոգրաֆիական զենեքացիաների) անդամներից լավագույնները: ~

\*\*\*

Մեկ այլ էական հարց ևս կարևոր է դեվչիրմեի նշանակության ուսումնասիրման խնդրում. տղայահավաքների քանակական չափաբաժինը: Սուրբ Ֆրանցիզկոսի միաբանության վանական Բարթոլոմեո դե Յանոն հարկն անվանում է տղաների տասանորդ<sup>193</sup>, չնայած դա կարող է դիտվել որպես հանրահայտ հարկային եզրի օգտագործում եվրոպացու համար անսովոր հարկը նկարագրելիս:

XV դարի երկրորդ կեսին եվրոպացիները սկսեցին որակել հարկը որպես *quinquinal*, այսինքն մեկ հինգերորդ: Սա նշանակում է հարկային չափաբաժնի կրկնակի աճ ու համապատասխանաբար՝ կրկնակի հարված ոչ մահմեդական ազգաբնակչության ժողովրդագրական պոտենցիալին: XVI դարի երկրորդ կեսով թվագրված դեվչիրմեի վերաբերյալ օսմանյան մի օրենքի համաձայն՝ ամեն 40 տնտեսությունից պետք է ժողովվեր մեկ տղա<sup>194</sup>: Սակայն այս նվազագույն նորմը հերքվում է գրեթե բոլոր եվրոպացիների կողմից, որոնք նկարագրել են իրավիճակն Օսմանյան կայսրությունում: Համաձայն Վ.Կուրիպեշիչի Բոսնիայի բնակիչների մասին տվյալների, արյան հարկը հավաքվում էր ամեն

<sup>193</sup> По следите на насилието..., с. 215.

<sup>194</sup> Г. Гълъбов, Един закон и други държавни документи по собирането на момчета за еничари, Годишник на Софийския университет, Историко-филологически факултет, Т.35, Кн.6, София, 1939, с. 24 մեջբերում ըստ А. Новичев, К истории рабства..., с. 93.



երրորդ, չորրորդ կամ հինգերորդ երեխայից<sup>195</sup>: Ֆ.Ջադլիցը 1559թ. գրում է, որ վերցվում էր 4-5 տղաներից մեկը<sup>196</sup>: Բսաներեք տարի հետո ֆրանսիացի Ժ.Պ.Ֆորեզիենը պնդում է, որ օսմանցիները շարունակում են վերցնել երեք երեխայից մեկին<sup>197</sup>: Սուրբ Գևորգ (Գեորգ) Նոր Սոֆիացու վարքը, որը գրվել է ռուս վանական Իլիայի (Եղիա) կողմից 1559թ., հիմնված է բուլղարական սկզբնաղբյուրի վրա և նկարագրում է Սելիմ I-ի ժամանակաշրջանը, ասվում է, որ եթե գտնում է (օսմանցին) որևէ քրիստոնյայի մոտ երեք որդի, ապա վերցնում է երկուսին կայսրի (սուլթանի) համար, իսկ մեկին թողնում է ծնողներին: Իսկ եթե որևէ քրիստոնյայի մոտ մեկ որդի է գտնում, բռնությամբ նրան էլ է վերցնում կայսրի համար<sup>198</sup>:

Շատ հավանական է, որ բազմիցս հաստատված տեղեկությունն արտացոլի հասարակական պրակտիկան ու ցույց տա հարկի քանակական նորմը, որը կիրառվում էր ոչ մահմեդական բնակչության հանդեպ: Գուցե և օսմանյան իշխանությունը չուներ ոչ մի հստակորեն ամրագրված հարաբերակցություն դեվչիրմեի ընթացքում: Ընդունելի կարելի է համարել այն ենթադրությունը, թե հավաքման ընթացքում սահմանվում էր տվյալ պահին կարիքները բավարարելու համար անհրաժեշտ մարդկանց ընդհանուր թիվը: 1705թ. դեվչիրմեի վերաբերյալ սուլթանական հրովարտակը Նեգուշից ու շրջակա գյուղերից պահանջում էր 50 տղա<sup>199</sup>: Բ.Միլլերը պնդում է, որ մեկ մանկահավաքից հավաքում էին միջին շուրջ 3000 տղա: Սրան հակասում է Ստ. Գերլախը, որը գրում է, թե 1574 թվականին Ստամբուլ որպես դեվչիրմե բերվել էին 8000 երիտասարդ: 1623թ. մի

<sup>195</sup> Немски и австрийски пътеписи за Балканите, XV-XVI в. Увод, подбор и коментар Йонов, М., С., 1979, с. 141 մեջբերում ըստ Լ. Գեորգիևա, Еничарите в българските земи..., с. 78-79.

<sup>196</sup> Նույն տեղում, с. 79.

<sup>197</sup> По следите на насилието..., с. 233.

<sup>198</sup> А. Новичев, К истории рабства..., с. 93.

<sup>199</sup> Լ. Գեորգիևա, Еничарите в българските земи..., с. 79.



բուլղարերեն հիշատակարանում տեղեկացվում է, որ տղայաժողովի համար կազմված մի խումբ, որի ղեկավարն էր ոմն Սկլավ, հավաքել է 8013 երեխա<sup>200</sup>:

Ներկայացված թվերը խիստ սակավ են, որպեսզի հնարավոր լինի համեմատաբար լիարժեք պատկերացում ստանալ որևէ երկրում հավաքագրման քանակի ու, հետևաբար, հավաքագրման համամասնության վերաբերյալ: Անշուշտ, դա որոշվում էր համաձայն վարչական ապարատում ու օսմանյան բանակում մարդաքանակի կոնկրետ պահանջարկի, սակայն կային նաև այլ գործոններ: Տեղեկությունների առկա ծավալով հնարավոր չէ լիաժեք կերպով դա սահմանել: Հ.Ինալչիքը, որն ընդունել է Բ.Միլլերի առաջարկած մեկ մանկաժողովի ժամանակ 3000 հոգի հավաքելու չափաբաժինը, ինքն իրեն հակասում է, քանի որ ցույց է տվել մեծ տարբերություններ աջեմի օղլանների հաշվարկների մեջ. 1568թ.՝ 7745 հոգի, 1609թ.՝ 9406 ու 1670թ.՝ 4372: Այս թվերը բացահայտում են հավաքների մի մասը, սակայն ոչ թե մեկ, այլ մի քանի, քանի որ աջեմի օղլանների կորպուսները թարմացվում էին ամեն նոր հավաքից հետո<sup>201</sup>:

Այս ամենը ցույց է տալիս, որ անհնար է հաստատունել, թե որքան քրիստոնյա է առանձնացվել իր ազգային միջավայրից ղեվձիրմեի միջոցով: Ղեվձիրմեի երեքդարյա ժամանակաշրջանի ընթացքում փոփոխվել է հավաքի պարբերականությունը, չի հաստատագրվել մեկ հավաքի առավելագույն չափաբաժինը, ինչը մեծ տարբերությունների տեղիք էր տալիս: Այս ամենը կասկածի տակ է առնում բոլոր հաշվարկների ստույգ լինելը:

<sup>200</sup> Стоянов, М., Хр. Кадов. Опис на славянските ръкописи в Софийската народна библиотека, III, С., 1964, с. 43-44, մեջբերում ըստ Ա. Георгиева, Еничарите в българските земи..., с. 79.

<sup>201</sup> H. Inalcik, The Ottoman Empire. The Classical Age, 1300-1600, London, 1975, p. 83.

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարող ենք պնդել, որ դեվչիոմե համակարգը ներառել է իր ժամանակի բոլոր սերունդներին: Ընդ որում, ընտրվել են սերնդի լավագույն անդամները:

Սերնդի լավագույն անդամների ընտրությունը պայմանավորված է եղել մի շարք հանգամանքներով: Նախ, կայսրությանն անհրաժեշտ էր բարձրորակ մարդուժ, որը լավագույնս կծառայեր բանակում, արքունիքում և կամ որպես հասարակ աշխատուժ: Ապա, սերնդի լավագույն ներկայացուցիչներին անջատելով հարազատ միջավայրից, զատելով նրանց հարազատ ժողովրդից՝ թուլացվում էր քրիստոնյա համայնքը, այն զրկվում էր իրեն առաջնորդելու ներունակ ուժից: Աղքատացվում էր հպատակ ժողովրդի գեներֆոնդը՝ հզորացնելով իշխողինը: Սա մի գործընթաց է, որը չի տալիս արագ պտուղ, բայց ունի երկարաժամկետ ազդեցություն:

Այնուամենայնիվ, միայն այս լավագույններից լավագույններն են հասնում կայսրությունում ինչ-ինչ դիրքերի ու ծառայում հանուն բռնակալ պետության բարգավաճման, մնացածները կամ օգտագործվում են որպես ծրի աշխատուժ, կամ էլ թնդանոթային միս ռազմադաշտում՝ հանուն օտար պետության, օտար կրոնի: Վերջին կետը հաստատվում է այն պարագայով, որ մանկաժողովների պարբերականությունը հաճախակիանում էր հենց այն տարիներին, երբ օսմանյան պետությունը ծանր պատերազմներ էր մղում արտաքին թշնամիների դեմ:

Մանկահավաքներն անց են կացվել խիստ մանրակրկիտ, համակարգված կերպով. բարդ է եղել խուսափել հավաքից: Այդուհանդերձ, հավաքը ոչ թե մեքենայական, այլ բավականին հաշվարկված է եղել: Պատերազմական առումով համեմատաբար թեթև տարիներին պետությունը դեվչիոմեից ազատել է այն խավերին, որոնք իրեն օգուտ են բերել՝ հանքափորներին, պետական հողատարածքներում կամ շինարարություններում աշխա-

տողներին և այլն: Այնուամենայնիվ, այս ազատումները ժամանակավոր բնույթ են կրել ու չեղյալ հայտարարվել համապատասխան պարագաներում:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ դեվչիրմեից ազատված են եղել արական սեռի ամուսնացած ներկայացուցիչները: Այստեղ ևս երևակվում է պետության հեռատեսությունը, անասնապահական հարուստ անցյալ, մտածելակերպ ունեցող քոչվորի ենթագիտակցությունը հուշել է խնայել ամուսնացածներին հետագա սերունդ ապահովելու համար, այլապես դեվչիրմեից ստացված օգուտները տարեցտարի կնվազեին:

Ուշադրության արժանի է նաև հավաքվող տղաների տարիքային ցենզը. միջինը սեռական հասունության շրջանն է: Հենց այս տարիքն է ամենից հարմարը, որովհետև այդ տարիքում պատանիներն արդեն ունեն իրենց առանձնահատուկ որակները՝ խելք, ուժ, գեղեցկություն և այլն, սակայն նրանց բարոյական արժեքների համակարգը դեռ ամբողջապես ձևավորված չէ. դեռ կարելի է ուսուցանել ու վարժեցնել այնպես, ինչպես դա պետք է իրենց ապագա տերերին՝ տալ գիտելիք, հաղորդել կրոնամոլություն, դարձնել հմուտ զինվոր կամ պարզապես անմիտ մեքենա և ուղարկել ռազմադաշտ:

Դեվչիրմեից խուսափելու մասին վկայությունները թույլ են տալիս անել մեկ այլ կարևոր մտահանգում, որը հերքում է որոշ արևմտյան, հիմնականում թուրք պատմաբանների այն տեսակետը, թե հպատակ ժողովուրդը «երջանիկ էր», որ դեվչիրմեի միջոցով պետությունն իրենց որդիներին «հնարավորություն էր ընձեռում» դուրս գալ գավառային արատավոր շրջանից, հասնել պաշտոնի, հարստության, փառքի: Նրանք մանկաժողովի ինստիտուտով հավաքագրումը հավասարեցնում են մեր օրերի հեղինակավոր համալսարանների կրթաթոշակ ստանալուն: Դեվչիրմե անցկացնող պաշտոնյաների դեմ զինված քայլերը, հավաքներից խուսափումները, հավաքներն անցկացնող պաշտոնյաներին կաշառելու դեպքերը, արդեն հավաքա-

գրված, մահմեդականացված տղաների փախուստները և նման կարգի տեղեկություններն ապացուցում են հակառակը. քրիստոնյա հպատակների համար մանկահավաքը շատ ծանր պարտավորություն էր, որից նրանք ամեն գնով ձգտում էին խուսափել: Մեծ մասամբ այս համակարգով հարազատ միջավայրից զատված երեխաները ռայաթների դասակարգից անցում էին կատարում ավելի ցածր ստրուկների դասակարգ: Դեվչիրմե հավաքողների ձեռքն ընկնելով՝ նրանք դառնում էին սուլթանի ստրուկները, լիովին կորցնում տեղաշարժման ազատությունն ու զրեթե էին կարողանում գործել ըստ ցանկության:

ԴԵՎՇԻՐՄԵՆՎ ՀԱՎԱՔՎԱԾ ՏՂԱՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ  
ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

*Կրոնավիոյություն և անվանավիոյություն*

Տղաներ հավաքելու համար ենիչերիական գորախմբերի մուտքը գյուղեր ու քաղաքներ միայն սկիզբն էր այն երկար գործընթացի, որով պետք է անցնեին քրիստոնյա մանուկները՝ օսմանյան իշխանության ամենանվիրյալ ծառաներ դառնալու համար: Հավաքն առաջին փուլն էր: Ընտրված երիտասարդներին հավաքում էին խմբերի մեջ: Տղաները ցուցակագրվում էին ու նկարագրվում լիարժեք անհատական նկարագրությամբ՝ անուն, ծնողների, հավաքված գյուղի տվյալներ, աչքերի ու մազերի գույնը, հատուկ նշանները, ունակությունները և կարողությունները: Սա ուղղված էր նրան, որ ճանապարհին անհնարին լինել փախուստը կամ նրանց փոխումն այլ պատանիներով<sup>202</sup>: Ցուցակը կոչվում էր էշքալ դեֆթերի (բռց. «ձևամատյան»), որը հետագայում ծառայում էր որպես հիմնական փաստաթուղթ և որի հիման վրա ստուգում էին ծառայության մտնող աջեմի օղլաններին<sup>203</sup>: Փաստաթուղթը կազմվում էր երկու օրինակով. մի օրինակը մնում էր մանկահավաքի պաշտոնակատարի մոտ, իսկ մյուսը՝ «սյուրյուջյու»-ի (բռց. «հոտը կաթավարող») մոտ, որը նոր հավաքած երեխաներին տանում էր Ստամբուլ:

*Քյաթիրը.* որը ենիչերիական կորպուսի աղաների հետ գնում էր աջեմի օղլանների հավաք անցկացնելու, կազմում էր թեզքերե՝ փաստաթուղթ, որը հաստատում էր որևէ գյուղում հավաքի անցկացումը: Այն կազմվում էր նրա համար, որ հավաքը նույն գյուղում կրկնակի չանցկացվեր մինչև հաջորդ ընդհանուր հավաքը: Այդպիսի թեզքերե

<sup>202</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 82.

<sup>203</sup> Мебде-и канун-и йеничери оджагы тарихи..., с. 221.

կազմելու համար գյուղի բնակիչները *քյաթիրին* դրամ էին վճարում՝ թեզքերե աքչեսի, որը կազմում էր 10-20 *աքչե*<sup>204</sup>։

Երբ տղաների խումբը հասնում էր 100-200 հոգու, նրանց ուղարկում էին մայրաքաղաք ենիչերիների խիստ հսկողության ներքո։ Որոշ դեպքերում նահանգային իշխանությունները պահանջում էին պահակախմբերը կազմել տեղացի մահմեդականներից ու *սիպահիներից*։ Խմբերն ընթանում էին որոշակի երթուղիներով։ Ստամբուլում նրանք տեղակայվում էին ենիչերիական զորամասերում։ Համաձայն սուլթանական հրամանների՝ այն բնակիչները, որոնցից «արյան հարկ» են հավաքել, պարտավոր էին վճարել որոշակի գումար տղաների սափրման ու կարմիր կտորի համար, որից կարում էին հագուստներ նրանց համար։ Այդ ծախսերը հոգալու համար բնակիչները պարտավոր էին վճարել խըլաթ բահասը<sup>205</sup> (բռց. «շորի գինը»)՝ գումար, որը հավաքում էին այն գյուղի բնակիչներից, որտեղից տղաներ էին տանում ենիչերիական կորպուս<sup>206</sup>։

Այս տեղեկությունների հիման վրա կարող ենք ենթադրել, որ հարազատ միջավայրից նրանց կտրելը զուգակցվում էր ծիսական սափրմամբ ու հատուկ հագուստներ հագցնելով, ինչը նախորդում էր կրոնափոխու-

<sup>204</sup> Նույն տեղում, շ. 59.

<sup>205</sup> Որոշ մասնագետներ՝ Ի.Յ.Ուզունչարշըլըն (Kapıkulu ocakları..., s.16-17), իսկ նրանից հետո էլ Ա.Դ.Նովիչևը (К сонрочы о рабстве..., էջ 97) սխալմամբ խըլաթ աքչեսին նույնացրել են քուլ աքչեսի հարկի հետ։ Քուլ աքչեսին գումար է, որը հավաքում էր սյուրյուզին (հավաքի ղեկավարը) գյուղից, որտեղ տղաների հավաք էր անցկացվում։ Այդ գումարի չափը տարբեր էր՝ կախված գյուղի բնակիչների քանակից։ «Ենիչերիական կորպուսի օրենքների ծագման պատմություն» ձեռագրի ամանուն հեղինակի շարադրության տեքստից պարզ է դառնում, որ խըլաթ բահասը հարկը գանձվում էր գյուղի բնակիչներից՝ կախված հավաքված տղաների քանակից, մինչդեռ քուլ աքչեսին՝ «կախված գյուղից», այսինքն՝ գյուղի բնակչության քանակից։ Այդ գումարը գանձվում էր հոգուտ հենց սյուրյուզիի, ինչպես թեզքերե աքչեսին՝ *քյաթիրի* (տե՛ս. Мебде-и канун-и йеничери оджагы тарихи..., շ. 53)։

<sup>206</sup> Мебде-и канун-и йеничери оджагы тарихи..., շ. 53.

թյանը, որի արարողությունը թեկուզ և կարճ էր տևում, սակայն ուներ էական նշանակություն: Այն տեղի էր ունենում ենիչերիական գործասերում, ուր քշում-քերում էին քրիստոնյա տղաներին բոլոր շրջաններից: Այստեղ նրանց ստիպում էին պաշտոնապես հրաժարվել քրիստոնեությունից ու ընդունել մահմեդականություն:

Օսմանյան տիրույթներում կրոնափոխությունը վերին աստիճանի պարզ, սակայն անհետադարձ գործողություն էր, իսկ էությունը բազմանշանակ էր: Տղաներն ասում էին անհրաժեշտ բանաձևը՝ «Չկա Աստված, բացի Ալլահից, ու Մուհամեդն է նրա մարգարեն», թլպատվում և ստանում էին նոր անուն՝ դառնում էին Մեհմեդ, Ահմեդ, Հասան, Հալիլ և այլն<sup>207</sup>:

Վաղնջական ժամանակներից սկսած ողջ աշխարհում համարում էին, որ մարդը ճակատագրային կապ ունի իր անվան հետ: Նրանք համոզված էին, որ ամեն անուն իր մոզական իմաստն ունի. հենց անվան ստուգաբանության մեջ պարփակված է նրա կրողի անձն ու բնավորությունը: Ուղղափառ քրիստոնեությունն ունի նույնիսկ անվանացանկ, որտեղ ամեն անուն համապատասխանում է նրա կրողին հովանավորող սրբին: Իսկ մահմեդականացված տղաներին իրենց նոր անունները ոչ մի բան չէին ասում: Նոր անունը պարզապես որոշ հնչյունների միասնություն էր:

Մարդկանց, հատկապես միջնադարի homo religicus-ի ենթագիտակցության մեջ արմատավորված է անվան մոզական իմաստ ունենալու գաղափարը: Անունը պարփակում է այն ամենը, ինչ արտահայտված է անձի մեջ: Անվանափոխությունը վերոփոխում է մարդուն, դարձնում ուրիշ *ես*: Դրանով կարելի է հրաժարվել անցյալից, հին աշխարհից, արժեքային հին համակարգից: Դեռ նախնադարի մարդը, որ չէր կարողանում հստակ տարանջատում անցկացնել խոսքի և իրի միջև, որպես կանոն, պատկերացնում էր, թե անվան և անձի կամ իրի միջև կապը պատահա-

<sup>207</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 88.

կան չէ, այլ իրական, նյութական. այնպես որ՝ անվան միջոցով մարդու վրա ազդեցություն գործել կարելի է նույնքան դյուրին, ինչպես մարմնի մասերի միջոցով: Այսպես, հին եգիպտացիները զավակներին տալիս էին երկու անուն՝ փոքր և մեծ՝ իրական: Առաջինը հայտնի էր բոլորին, իսկ իրական անունը պահվում էր խիստ գաղտնի<sup>208</sup>: Այսպիսով, անուն փոխելը հավասարագոր է ճակատագրի փոփոխությանը:

Սակայն տղաների անվանափոխությունը շատ բան էր նշանակում նաև հասարակության հոգեբանության տեսակետից: Ոչ միայն այն տեսակետից, որ անունը փոխելով՝ տղան զրկվում էր համապատասխան սրբի պաշտպանությունից: Դա կապված էր նաև հարազատ միջավայրից կտրվելու հետ, քանի որ այստեղ մուտք էր գործում հոգեբանությունը: Այսպես, օսմանյան պետությունում, ինչպես բոլոր միջնադարյան պետություններում, մարդը՝ լինի քրիստոնյա, մահմեդական կամ հրեա, հասարակապես ներկայանում էր իր անուն-հայրանունով: Օրինակ՝ Հովհաննես որդի Պետրոսի, Իվան որդի Պետկոյի կամ Ալի որդի Հուսեյնի: Երբ այս կամ այլ պատճառով Իվանը մահմեդական էր դառնում ու հարմար չէր լինում ամեն անգամ այլակրոն հայրանունով հիշեցնել կրոնափոխության փաստը, ապա օգտագործվում էր «որդի Աբդուլլահի» բանաձևը: Այսպիսով, Իվան որդի Նիկոլայի դառնում էր Հյուսեին որդի Աբդուլլահի: Իսկ դեվչիմենով հավաքված տղաները, որոնց անունները որպես կրոնափոխության հետևանք փոխվում էին, ընդհանրապես զրկվում հայրանունից: Նրանք այլևս չէին որդի Իվանի, Հովհաննեսի կամ Դմիտրիի, ոչ էլ որդի Աբդուլլահի: Նրանք պարզապես Մեհմեդ էին, պարզապես Համզա, պարզապես Հյուսեին: Սա էր տարբերանշանը, որը նրանց առանձնացնում էր մյուսներից. նրանք մարդիկ էին առանց արմատների, առանց ծնողների, առանց տոհմի:

<sup>208</sup> А. Цуладзе, Политическая мифология, М., 2003 г., с.104-107.

\* Աբդուլլահ նշանակում է Աստծո մարդ:



Երրորդ փուլն ավելի երկար էր տևում: Մահմեդականացված տղաներին ցրում էին *Անատոլիայի* գյուղերով ու քաղաքներով մեկ: Օսմանյան ժամանակագիրները պնդում են, որ պահանջվում էր նրանց սովորեցնել թուրքերեն լեզուն ու ավանդույթները: Ավելացնենք, որ պահանջվում էր նաև պատվաստել մահմեդական կրոնական վարքի դոգմաներն ու նորմերը: Սա նշանակում էր, որ նրանք պետք է մոռանային ու մերժեին քրիստոնեական բարոյականության կանոնները, որոնք ներառում էին նաև բարու ու չարի մասին պատկերացումները: Պահանջվում էր պատանեկան հիշողությունից ջնջել հայրենի շրջապատը, տունը և այլն:

Մ. Ֆոն Ջայդլիցը տեղեկացնում է, որ անատոլիական գյուղեր ուղարկված երեխաներն օգտագործվում էին ծանր ֆիզիկական աշխատանքներում: Փաստորեն, նրանք տրվում էին ժամանակավոր օգտագործման՝ մասնավոր անձանց: Իսկ եթե երեխաներից մեկը չէր դիմանում ու մահանում էր, այդ անձի միակ պարտավորությունն էր տեղեկացնել տեղական *քաղիին*: Այլապես նա պետք է վճարեր դրա գինը: Ցավոք, ոչ մի աղբյուր չի պահպանել տեղեկություն, թե հստակորեն քանի տարի էր պահանջվում, որ տղան մնար մասնավոր անձի մոտ որպես ստրուկ<sup>209</sup>:

### *Իչ օղլաններ*

Հավաքագրված տղաներից գեղեցիկներն ու խելացիներն ուղարկվում էին *իչ օղլանների*՝ պալատական ծառաների մոտ: Իչ օղլանները կատարում էին ամեն տեսակի աշխատանքներ երեք սուլթանական պալատներում՝ Ստամբուլում, Օդրինում ու Բուսայում:

Սուլթանն ուներ 24 երիտասարդներից բաղկացած շքախումբ, որոնցից էլ հաճախ իր ամենամոտիկներին նշանակում էր ղեկավար պաշտոնների:

<sup>209</sup> Տե՛ս Ա. Георгиева, Еничарите в българските земи..., с. 89.

Իչ օղլանների հաստատությունը բազմամարդ չէր: Համաձայն Հ.Ինալչիքի՝ 1510թ. այնտեղ կային ընդհանուր առմամբ 600 հոգի, իսկ 1534թ.՝ 700<sup>210</sup>: Նրանց պատրաստում էին ամեն տեսակի ծառայության ու պահակության արքունիքում, ուսուցանում և քանիցս ընտրում: Մեհմեդ II-ի կառավարման տարիներից մինչև XVII դարի կեսերը սա էր կառավարչական ընտրանու հիմնական ռեզերվը: Այսպես օսմանյան իշխող դինաստիան փորձում էր խուսափել ավատատիրական հասարակության մեկ օրինաչափությունից՝ ժառանգական արիստոկրատիայի ձևավորումից: Գտնվելով մշտական կապի մեջ տիրակալի ու այլ անձանց հետ, որոնք բացահայտ կամ գաղտնի կերպով իրենց ձեռքն էին վերցրել իշխանության դեկը, այս տղաներն աստիճանաբար դառնում էին կառավարման ու քաղաքական խարդավանքներում փորձ ունեցող այրեր: Նրանց սովորեցնում էին թե՛ սիրաշահել, թե՛ սպանել: Վարպետացնում էին արքունի ասեկոսների և որոգայթներ լարելու մեջ<sup>211</sup>: Նրանք կարողանում էին նաև օգտագործել սուլթանի թուլություններն ու հարեմի ուժը: Ժամանակի ընթացքում տարբեր պաշտոններ էին գրավում կառավարչական ապարատում ու հասնում օսմանյան զինվորական և բյուրոկրատական համակարգի ամենաբարձր կետերին: Այս փոքր խմբում՝ գրեթե բոլոր ծառաների կամ հասարակ զինվորների շարքում, կար մի երազանք, թե կարող են երջանիկ աստղի դեպքում դառնալ եթե ոչ մեծ վեզիր, ապա արքունի գանձարանապետ:

\*\*\*

Համաձայն առասպելի՝ օսմանյան պալատներում իչ օղլաններ սկսել են ծառայեցնել Բայազեդ Յըլդըրըմի ժամանակներից: Երբ *դեվլիթները* բերվում էին պետական կենտրոն, նրանց նախ ուղարկում էին վերին դիվան, որտեղ փաղիշափի ներկայացման սենյակում նրանց հատ-

<sup>210</sup> H. Inalcik, L'Empire Ottoman. - I Congres International des Etudes Balkaniques et Sud-Est Europeens. S., 1965, p.18-19.

<sup>211</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 90.

հատ ընտրում էին ու ապա քաղաքացիներին (բոց. «պալատի ղեկավար») փառաբանող հրամանով ամեն հուտից ընտրյալներին ուղարկում էր եղիրնե, Գալաթա և կամ Աթենյանը, այսինքն՝ Իբրահիմ փաշա պալատները, իսկ մնացած տղաներին ուղարկում էր ենիչերի աղային՝ աջեմի օղլանների զորաբանակի համար:

Պալատի համար առանձնացված *ղեվչիրմեների* քննումն անցկացնում էր պալատի աղան, որին ընկերակցում էր պալատի զխավոր ուսուցիչը (saray-ı âmiré hocası): Առաջին պայմանն էր, որ երեխաները լինեին բարեկազմ ու զեղեցիկ: Որպես պալատական ծառայության համար թեկնածու առանձնացված այս երեխաներից բացի, պալատ էին առնվում նաև Բոսնիայում հավաքվող ու Փոթուր օղլաններ (Potur oğlanları) կոչվող մահմեդական բոսնիացիների տղաները:

Այսպես առանձնացվող երեխաները պետք է որոշ ժամանակ կրթություն ստանային եղիրնեի, Գալաթայի ու Իբրահիմ փաշա պալատներում: Այստեղ ծառայելիս բարձր կարողություններ ցուցաբերածները «չըքմա»-նշանակումներում (çikmalar) տարվում էին Ենիսարայ պալատ, մյուսներն էլ, համապատասխան իրենց կարողությունների, տրվում էին քաղաքացու հեծելազորային զորախմբեր:

### *Եղիրնե պալատի իչ օղլանները*

Եղիրնեում կար երկու պալատ՝ Նոր ու Հին. ղեվչիրմենով բերվածները տեղավորվում էին եսքիսարայում (բոց. Հին պալատ): Նոր պալատը (Ենիսարայ) սուլթանի ընդունելության համար էր առանձնացված<sup>212</sup>:

Երբ օսմանյան սուլթանները մայրաքաղաքը դարձավ Ստամբուլը, եղիթենի եսքիսարայի կազմակերպությունը և բոսթանջը (այգեպանների) զորամասը նույնը թողեցին ու ղեվչիրմեից առանձնացված անձանց մի մասն ուղարկում էին այստեղ: Հին պալատում դաստիարակվող

<sup>212</sup> İ.H. Uzunçarşılı, Saray teşkilâtı.... s. 301.

աջեմիները միևնույն ժամանակ կրթվում էին պալատական ուսուցիչների կողմից: Համաձայն կարողությունների ու շնորհքի՝ նրանց ուսուցանվում էր նաև գինավարժություն ու ձիավարություն:

Այս պալատի աջեմիներից փորձառուները, համաձայն անհրաժեշտության ու կարիքի, երկու, երեք և վերջապես յոթ տարին մեկ կատարվող *չըքմաների* կամ էլ սուլթանների գահ բարձրանալու ժամանակ կազմակերպվող *Մեծ չըքմաների* ժամանակ նշանակվում էին քափըքուլու հեծելազորի ցածր զորախմբերում, իսկ նրանց մեջ ամենաունակները նշանակվում էին ծառայության Ստամբուլի պալատի մեծ ու փոքր օղաներում :

#### *Գալաթասարայի իչ օղլանները*

Գալաթա պալատը (Գալաթասարայ) կառուցվել է Բայազեդ II-ի օրոք: Ուներ երկու հարյուրական հոգի ներառող երեք մասնաբաժին: Այստեղ էին կրթություն ստանում ենիսարայում ծառայության թեկնածու աջեմիները:

Գալաթա պալատը, նման էդիրների պալատին, ենիսարայ ուղարկելու ու քափըքուլու հեծելազորին տալու համար տղաներ պատրաստող վայր էր. *չըքմաների* ժամանակ սուլթանական պալատ չընդունվողներն ուղարկվում էին քափըքուլու հեծելազոր:

Գալաթասարայը, այլ պալատների համեմատ, ավելի հարգված էր, և այստեղի տղաների նշանակալի մասը ենիսարայում ազատված տեղերը համալրելու համար էր վերցվում. նվազագույնը նշանակվում էին մեծ ու փոքր օղաներում, իսկ երբեմն էլ՝ ընդգրկվում գանձարանում, անձնական օղաներում ևն<sup>213</sup>:

Թե՛ Գալաթա պալատ ընդունվելիք, թե՛ այդտեղ ծառայող տղաների հետ կապված բոլոր գործողությունները ներկայացվում էին սուլթանին ու կատարվում նրա թույլտվությամբ և հավանությամբ:

<sup>213</sup> Նույն տեղում, s. 303.

Գալաթա պալատի անձնակազմը բացի նրանից, որ բաժանված էր տարբեր դասերի ու ծառայում էր, նաև դասեր էր ստանում նշանակված ուսուցիչներից. XVI դարի կեսերին Գալաթա պալատում հինգ ուսուցիչ կար: Այստեղ նշանակված ուսուցիչն առաջխաղացման դեպքում տեղափոխվում էր ուսուցչության Ենիսարայ, իսկ այստեղ նշանակում էին դրսից մեկին կամ *ուլեմաների* շարքից:

Գալաթա պալատի տղաների *չըքմաների* ժամանակ նշանակվում էին Ենիսարայի մեծ ու փոքր օդաներ կամ էլ հեծելագորային գունդ:

1675թ. ենիչերիների ու *սիպահիների* խռովությունների հետևանքով վերացվեցին իչ օլլանների կազմակերպությունները, ինչի արդյունքում փակվեցին Գալաթա պալատը, ինչպես նաև այլ նման օջախները<sup>214</sup>:

### *Աթ Մեյդանը կամ Իբրահիմ փաշա պալատի տղաները*

Ինչպես և մյուս պալատներում, այստեղի տղաները ևս լավ ուսում ստանալուց հետո՝ ժամանակը հասնելուն պես, ըստ իրենց կարողությունների կամ ուղարկվում էին արքունիք, կամ քափըքուլու հեծելագոր:

Աթ Մեյդանը պալատը կառուցվել է Քանունի Սուլթան Սուլեյմանի մեծ վեզիր Իբրահիմ փաշայի՝ սուլթանի քրոջ հետ ամուսնության կապակցությամբ, և փաշայի սպանությունից հետո այս վայրը պալատի համար իչ օլլաններ նախապատրաստելու համար զորանոցի ու դպրոցի է վերածվել:

Համաձայն Յ.Համմերի նշումների՝ այս պալատ են բերել Բոսնիայից ու Ալբանիայից հավաքված դեվչիրմե-

<sup>214</sup> Նույն տեղում, ս. 304. Գալաթա պալատը որպես իչ օլլանների պատրաստման վայր կրկին վերաբացվել է քառասուն տարի հետո՝ 1715թ., մեծ վեզիր Շեհիթ Ալի փաշայի հովանու ներքո: Այն կրկին ուներ Ենիսարայի համար իչ օլլաններ նախապատրաստելու առաքելությունը:

ներից ընտրվածներին, սակայն կան տվյալներ, որ այստեղ բերել են նաև ազնվատոհմիկ գերված երեխաների<sup>215</sup>:

Ինչպես և այլ պալատներում, այստեղ նույնպես *չըքմաների* ժամանակ ավագներն ուղարկվում էին Ենիսարայ կամ հեծելազոր:

Բացի այդ, իչ օլլաններից նրանք, ովքեր զբաղվում էին ներպալատական ծառայությամբ (կացնակիրները, խոհարարները, լվացարարներն ու հացագործները), մինչև XVII դարի կեսերը *չըքմաների* ժամանակ տրվում էին ենիչերիական գորամասերին:

### *Ենիսարայի իչ օլլանները*

Ենիսարայի (Թոփքափը պալատ) իչ օլլանները, որոնց անվանում էին *Gilmanan-ı Enderun*, կապված աստիճանների ու ծառայությունների հետ, բաժանված էին տարբեր օդաների, որոնք էին (ցածրից բարձր).

1. Մեծ ու փոքր օդաներ (büyük ve küçük odalar);
2. Բազեպանի խուց (doğancı koğuşu);
3. Արշավային օդա (seferli odası);
4. Տնտեսվարի օդա (kiler odası);
5. Գանձարանի օդա (hazine odası);
6. Անձնական օդա (has oda):

Ենիսարայի իչ օլլանները բաժանվում էին երկու դասի՝ *դոլամայը* և *քաֆթանը*, առաջինները հագնում էին *դոլամա* ու պատկանում մեծ ու փոքր օդաներին, իսկ երկրորդները՝ *քաֆթան* ու պատկանում արշավային, տնտեսվարի, գանձարանի ու անձնական օդաներին:

Այս վեց օդաների իչ օլլանների աստիճանն ու դիրքերը տարբեր էին, ըստ այդմ՝ տարբեր էին նրանց ծառայություններն ու աշխատավարձերը: Նրանք բոլորն էլ ծառայում էին պալատի հատուկ մասնաբաժիններում, և

<sup>215</sup> Տե՛ս նույն տեղում, s. 306.

բոլոր ներքին ու արտաքին նշանակումները կատարվում էին սուլթանի կողմից<sup>216</sup>:

### *Մեծ ու փոքր օղաներ*

Այս օղաներ բերվում էին եղիրների, Գալաթայի ու Իբրահիմ փաշա պալատներից ընտրված փորձառու ու շնորհալի աջեմիներ: Վերջիններիս ուսուցանում էին բազմաթիվ ուսուցիչներ, որոնք պատվաստում էին թուրքական մշակույթ ու մահմեդական հավատը: Նրանք փոքր էին, ուստի կրոնական դասերի, Ղուրանի ընթերցանության ու թուրքերեն, արաբերեն, պարսկերեն լեզուների հետ մեկտեղ զբաղվում էին միայն ըմբռնարարով, ցատկով, վազքով, նետաձգությամբ, նիզականետությամբ ևն: Սրանցից բացի, տասնչորս տարեկանները և ավելի մեծերն ավելի մեծ ուշադրություն էին դարձնում մարզական վարժություններին, հմտանում զենքի օգտագործման, ծիսավարության մեջ:

Hâne-i kebir և Hâne-i sagir (համապատասխանաբար՝ «մեծ սենյակ» և «փոքր սենյակ») կոչվող այս երկու օղաների անձնակազմը հազնում էր յուրահատուկ բաճկոն կամ թիկնոց, որ կոչվում էր *դոլամա*, ինչի պատճառով էլ նրանց անվանում էին *դոլամալը՝ դոլամա* հազած: Այս օղաների անձնակազմում ամենամեծահասակների տարիքը չէր գերազանցում 15-ը: Մեծ ու փոքր օղաներում ղեկավար պաշտոններ էին զբաղեցնում արդեն տարիքով համեմատաբար մեծ տղաները, որոնք նշանակվում էին սուլթանի հրամանով:

### *Բազեպանի խուց*

Hâne-i Bâzyân կոչվող բազեպանի խուցը քառասուն հոգանոց համայնք էր: Որսորդ Մեհմեդ սուլթանը վերացրեց այս խուցը, որից հետո մատյաններում այն այլևս չի հիշատակվում, սակայն դեռ վաղ ժամանակներից բազե-

<sup>216</sup> Նույն տեղում, s. 308.

պանների ղեկավարի ենթակայության տակ կար այսպիսի մի անձնակազմ:

### *Արշավային օդա*

Hâne-i Seferli կոչվող այս օդան հիմնվել է Մուրադ IV-ի կողմից երևանյան արշավանքի ժամանակ (1653թ.), երբ մեծ օդայից որոշ քանակությամբ իչ օղլան վերցվեց: Այստեղ էլ շարունակվում էր տղաների կրթությունը: Այս օդայի իչ օղլանների պարտականությունների մեջ էր մտնում լվանալ պալատի ժողովրդի լվացքն ու կարգի բերել այն: Սակայն հետագայում այս օդան ավելի լայն կազմակերպություն դարձավ՝ վերափոխվելով արհեստների դպրոցի, ու այլևս արշավային օդայում էին պատրաստվում երաժշտագետները, ջութակահարները, երգիչները, փափուկները, վարսավիրները, բաղնիքպանները, ինչպես նաև ծաղրածուները: Այստեղ են պատրաստվել բավականին հայտնի երաժիշտներ, գիտնականներ ու բանաստեղծներ:

### *Տնտեսվարի օդա*

Հիմնվել է Մեհմեդ Նվաճողի կողմից: Այս օդայի ղեկավարը քիլերջիբաշըն էր (serkilâri hassa / Kilercibaşı), որը նշանակվում էր սպիտակամորթ աղաներից կամ իչ օղլաններից: XVI դարի վերջին կեսին նրա աշխատավարձը հավասար էր գլխավոր գանձապահի աշխատավարձին: Նրա պարտականությունների մեջ էին մտնում սուլթանի նախաճաշի ու ընթրիքի պատրաստումը, դրա տեղափոխումը սուլթանի մոտ ու ճաշկերույթի սեղանի նախապատրաստումը, ինչպես նաև պալատի մուրաբաների ու օշարակների պատրաստումը: Եթե քիլերջիբաշըն պալատում առաջընթաց էր ունենում, ապա նա նշանակվում էր գլխավոր գանձապահ, իսկ մայրաքաղաքից դուրս նշանակման դեպքում նրան տրվում էր բեյլերբեյի պաշտոն<sup>217</sup>:

<sup>217</sup> Նույն տեղում, s. 313.



### *Գանձարանի օդա*

Այս օդան մեկ աստիճանով բարձր էր նախորդից ու նույնպես հիմնվել է Մեհմեդ Նվաճողի կողմից: Դրա ծառայողները պահպանում էին պալատի գանձարանը<sup>218</sup>, իսկ օդայի ղեկավարները արշավանքների ժամանակ չէին հեռանում սուլթանի մոտից<sup>219</sup>:

### *Անձնական օդա*

Անձնական օդան ստեղծել է Մեհմեդ Նվաճողը՝ այս օդայում նշանակելով 32 իջ օդլան<sup>220</sup>: Հետագայում այդ թիվը հաստատուն եղել է 40 հոգի<sup>221</sup>:

Այս օդան պահպանել է իր կարևորությունը մինչև փակումը<sup>222</sup>: Այստեղ ազատ տեղ լինելու դեպքում ծառայության էին բերում գանձարանային օդայի ամենաավագին: Սակայն տնտեսվարային ու արշավային օդաներից, ինչպես նաև մյուս օդաներից, նույնիսկ ամենանորերից մեկը, եթե դուր գար սուլթանին, ապա անմիջապես տեղափոխվում էր այս օդա<sup>223</sup>: Երբ նրանք տեղափոխվում էին այս օդա, ապա իրավունք չունեին ազատորեն գրոսնել, մինչև որ սուլթանն անձամբ չգար ու չծանոթանար<sup>224</sup>:

Այս օդայի իջ օդլանների հիմնական պարտականություններն էին սուլթանի հատուկ մասնաբաժինն ավելել, այնտեղ գտնվող դուրանների ու այլ գրքերի փոշին մաքրելը, օրինյալ օրերին հատուկ փայտ վառելը, վարդաջուր շաղտալը, վանդակաճաղերը, մոմակալներն ու այլ իրեր փայլեցնելը և այլն<sup>225</sup>:

<sup>218</sup> Koçu R.E., Osmanlı Sarayında Enderun Teşkilâtı..., s. 33.

<sup>219</sup> Նույն տեղում, s. 318.

<sup>220</sup> Նույն տեղում, s. 322.

<sup>221</sup> Koçu R.E., Osmanlı Sarayında Enderun Teşkilâtı..., s. 33.

<sup>222</sup> İ.H. Uzunçarşılı, Saray teşkilâtı..., s. 323.

<sup>223</sup> Koçu R.E., Osmanlı Sarayında Enderun Teşkilâtı..., s. 33. Y. Kömürçyan, İstanbul Tarihi, XVII. Asırda İstanbul, İstanbul, 1984, s. 13.

<sup>224</sup> Նույն տեղում, s. 324.

<sup>225</sup> Նույն տեղում, s. 325.

Այս օղայից որոշ իչ օղլաններ նշանակվել են սանջաք բեյության պաշտոնի<sup>226</sup>:

### *Իչ օղլանների մասին*

Իչ օղլանների օղաները մոտ էին սուլթանի հատուկ անձնակազմի սենյակին, որտեղ նա շատ ժամանակ էր անցկացնում: Ամեն օղայի անձնակազմի յուրաքանչյուր անդամ քնում էր առանձին մի խցում, որը պատված էր երկաթե վանդակաձաղով: Սուլթանը երբեմն այցելում էր նրանց պարզևատրելու համար, ունկնդրում նրանց զրույցները բարոյականության ու իմաստաբանության մասին, դիտում իչ օղլանների խաղերը և այլն: Պալատում ոչ մի աղա կամ իչ օղլան ամուսնացած չէր<sup>227</sup>:

2-8 տարին մեկ իչ օղլանների միջև ստուգում էր անցկացվում, և առանձնացվում էին տարիքով մեծերը: Նրանց փոխարեն օղաներ էին բերվում մեկ աստիճան ցածր գտնվող երիտասարդներ<sup>228</sup>:

Քանի որ որպես իչ օղլաններ ընտրում էին ամենազեղեցիկ տղաներին, շատ է խոսվում այն մասին, թե սուլթաններն ու բարձրաստիճան պալատականները արվամուլական նպատակներ էին հետապնդում:

Այսպես, կա մի ավանդույթ իչ օղլանների ստեղծման մասին, որտեղ ասվում է, թե Չանդարլը Ալի փաշան «հավաքեց զեղեցիկ տղաներ իր շուրջը և կոչեց նրանց իչ օղլան: Որոշ ժամանակ նրանց ոչ նպատակային կերպով օգտագործելուց հետո նա նրանց պաշտոններ տվեց<sup>229</sup>»:

<sup>226</sup> Նույն տեղում, s. 329.

<sup>227</sup> Նույն տեղում, s. 332.

<sup>228</sup> Նույն տեղում, s. 334.

<sup>229</sup> Kafadar, Cemal, *Between two worlds. The construction of the Ottoman state*, Berkley, University of California Press, 1995, p. 112. *Islam from the prophet Muhammed to the capture of Constantinople*, edited and translated by Bernard Lewis, New York, Evanston, San Francisco, London, 1971, Volume 1: *Politics and War*, p. 139.

Իչ օղլաններից սուլթանն ընտրում էր սիրելիների մի փոքր խումբ, որը ստանում էր մուսահիբ կամ «մուտիկ զուզընկեր» անունը, և խմբի անդամները դառնում էին նրա ձիապանները, անձնական քարտուղարները կամ պարզապես նրա ժամանակ անցկացնելու շրջապատը<sup>230</sup>:

Իչ օղլանների ինստիտուտն ունեցել է վճռորոշ դեր պետության զարգացման ու հզորացման գործում: Պալատական դպրոցը մեծ ներդրում է ունեցել ունակ վարչական աշխատուժ պատրաստելու գործում. այստեղից դուրս եկած վարչական մեծ ու փոքր միավորների ղեկավարները թե՛ գիտակ էին իրենց գործում, թե՛ հնազանդ ու հավատարիմ իրենց միակ տեր, ինչպես նաև մոտ «ընկեր» սուլթանին, թե՛ ճանաչում էին իրար, ինչը նույնպես փոքր դեր չէր խաղում կայսրության կառավարման մեջ: Իչ օղլանների դպրոցի նշանակությունը հատկապես զգացվեց դեվչիրմեն համակարգի դուրս մղվելուց հետո, երբ պաշտոնների էին բերվում մարդիկ, որոնք այստեղ հասել էին կաշառքի կամ ծանոթության միջոցով և չէին ստացել հին օրերի կրթությունը:

Հիմնականում հենց իչ օղլանների համակարգի ընծեռած հնարավորություններն են վերագրվում ողջ դեվչիրմեն համակարգին, և որոշ պատմաբաններ պնդում են, թե դեվչիրմեն թույլ էր տալիս հասարակ քրիստոնյային դառնալ նույնիսկ մեծ վեզիր: Սակայն շեշտենք, որ դրա հարաբերակցությունն է միայն մեկն ընդդեմ տասնյակ հազարավոր կյանքերի:

Այսպես, դեվչիրմենով մեծ վեզիր դառնալու վառ օրինակ է Մեհմեդ Սոքուլուի կյանքը:

Սպագա մեծ վեզիրը ծնվել է մոտ 1500 թվականին Բոսնիայում՝ Վիշեգրադ քաղաքի մերձակայքում գտնվող Սոկուլովիչի գյուղում, որտեղից և առաջացել է նրա մականունը Սոքուլու: Մկրտվել է Բայո անվամբ: 18 տարեկան հասակում հավաքագրվում է դեվչիրմեն «արյան

<sup>230</sup> Pallis A., In the days of the janissaires: old Turkish life as depicted in the 'Travel - book' of Evliya Chelebi, London, New York, Melbourne, Sydney, Cape Town, 1951. p. 106-107.

հարկով» ու դառնում Մեհմեդ: Երիտասարդն առաջ է գնում ծառայությամբ ու ամուսնանում ապագա սուլթան Սելիմ II-ի դստեր հետ: XVI դարի 40-ական թվականներին նա արդեն կայսրության բարձրաստիճան պալատականների շարքում է, 1551թ. նա նշանակվում է *Ռումելի բեյլերբեյի*, իսկ 1565թ.՝ մեծ վեզիր: Հետաքրքիր է այն, որ նա մոռացության չի մատնում իր ազգականներին. իր եղբայր Մուսթաֆափաշան (որը փաստորեն նույնպես դարձել էր մահմեդական) ստանում է Բուդայի բեյի պաշտոն, որը կարևոր նշանակություն ուներ կայսրության համար, այլ ազգականներ ստանում են տիրույթներ Բոսնիայում և Հերցեգովինայում, իսկ կրտսեր եղբայրը նույնպես պալատում առաջընթաց է ունենում և 1604 թվականին դառնում է մեծ վեզիր: Սակայն Մեհմեդ փաշայի ամենից ակնառու հաջողությունն այն է, որ Սոկոլովիչներից մեկին, որը մնացել էր քրիստոնյա, նա նշանակում է 1557թ. Փեչ քաղաքում վերականգնված սերբական պատրիարքության գլուխ: Մեհմեդ փաշայի ձեռքբերում էր կենտրոնացած անասելի իշխանություն՝ իր ղեկավարման տարիները համընկան Սելիմ II-ի սուլթանությանը, որը հայտնի էր որպես անկամ ու արբեցող մարդ: Սոքոլլուն էր իրականում կառավարում ողջ երկիրը, իր ձեռքբերով էին անցնում բոլոր կարևոր գործերը, նա էր բաժանում տիրույթներն ու կոչումները<sup>231</sup>:

Այսպիսով, իրապես դեվձիրմե համակարգն ընտրում էր առավել մեծ ներուժ ունեցող երիտասարդների ու նրանցից ոմանց, շատ քչերին օգտագործում էր ավելի բարձր պաշտոններում աշխատելու համար:

Սակայն վերջիններիս բարեկեցիկ կյանքն ու աշխատանքը ամեկին էլ չէին ազդում ողջ ժողովրդի բեռի թեթևացման վրա, այլ սահմանափակվում էին լավագույն դեպքում իրենց ընտանիքով:

Ամեն դեպքում նրանք նույնպես աշխատում էին հանուն օսմանյան պետության, հանուն իրենց ժողովրդին

<sup>231</sup> М. Фрейденберг, Дубровник и Османская империя, М., 1989, с. 118-119.

ճնշող համակարգի և, ի վերջո, անում էին այդ ուղղությամբ գուցե նույնիսկ ավելի մեծ բան, քան թուրք ընտանիքների մոտ ստրկությունն անող իրենց եղբայրները:

Կրկին ու կրկին շեշտենք, որ այսօրինակ վերընթացների սպորադիկ դեպքերը կազմում էին հավաքված ու իրենց ժողովրդի, ընտանիքների համար անտեղի կորած տղաների շատ չնչին տոկոս, ինչը ամենևին էլ իրավունք չի տալիս մեզ պնդելու, թե դեվշիրմեն օսմանյան պետության կողմից շնորհ էր քրիստոնյա հպատակներին, որոնք ունեին իրենց ազգի ներուժը զարգացնելու այնպիսի հնարավորություններ, որոնցից զրկված էին եղել նույնիսկ կայսրության մահմեդական հպատակները:

### *Աջեմի օղլաններ*

Երիտասարդների մեծ մասն ուղարկվում էր աջեմի օղլանների կորպուսներ: Դրանք ապագայի զինվորներն են: Այստեղ նրանց սպասում էր հատուկ զինվորական կրթություն և նպատակաուղղված կրոնական դաստիարակություն, որն իրականացվում էր բեքթաշիական միաբանության կողմից: XV-XVIդդ. զինվորական նախապատրաստումն ու համակարգային կրոնական մշակումը օսմանցիների տեսակետից շատ դրական արդյունքներ է ունեցել: Աջեմի օղլանների զորայնմբի միջոցով օսմանյան ռազմական մեքենան հպատակ ժողովուրդների երեխաներին դարձնում էր իր ամենահավատարիմ և ինքնամոռաց զինվորները: Շատ եվրոպացի դիտորդներ են վկայել, որ աջեմի օղլանների մոտ հոգեբանական փոխակերպումն արդեն ավարտված էր լինում: 1582թ. Ժ.Փ.Ֆորեզիենը գրում է. «...աջեմի օղլանները ամենաչար ու վատ տեսակն են ... նրանք չեն ճանաչում ո՛չ հայր, ո՛չ մայր, և այնպիսի մտքեր ու գործեր ունեն, կարծես Քրիստոսի անվան մահացու թշնամիներ լինեն...»<sup>232</sup>: Մի քանի տարի ուսուցումից հետո

<sup>232</sup> Из пътеписа на французина Жан Палери Форезиен от 1582г. – Вж. Френски пътеписи, I, с. 164, цит. по По следите на насилнето, ... с. 234.

այս հասուն, ուժեղ դաժան ու անողոք տղամարդիկ հատուկ ծիսակատարությամբ դառնում են ենիչերի:

Մուրադ I սուլթանի ժամանակ աջեմի զորախումբ առաջին անգամ հիմնվում է Գելիբոլուում: Առաջին աջեմիները փենջիքով հավաքված տղաներն էին: Սրանք ծառայեցվում էին նեղուցները միացնող նավերի վրա, այստեղ էլ հենց սովորում էին թուրքերեն ու թուրքական սովորույթները, իսկ հինգ-տասը տարի ծառայությունից հետո գրանցվում էին ենիչերիական զորախմբում: Աջեմի օղլանները հազնում էին դեղին սրածայր գդակ, իսկ զորախմբի (օջախի) ղեկավարն անվանվում էր Աջեմի Օջախի Աղա: Ստամբուլի գրավումից հետո այնտեղ ևս հիմնվում է աջեմի զորախումբ, և այդուհետ Գելիբոլուի աղան նշանակվում էր Ստամբուլի զորախմբի սպաներից մեկը, իսկ օրավարձերը բերվում էին կրկին Ստամբուլից:

Գելիբոլուի տղաների թիվը 400-500 մարդ էր: Ենիչերիական զորախումբ կամ այլուր նշանակվելու ժամանակ տեղի էին ունենում վերագրանցումային գործընթացներ, իսկ ենիչերիական աղային սուլթանի կողմից հրաման էր գրվում, համաձայն որի՝ տեղափոխվող աջեմիների տեղը լրացնելու համար հրամայվում էր գյուղերում աշխատանքի տրված տղաներով լրացնել ստեղծված պակասորդը<sup>233</sup>:

Մինչև XVII դարասկիզբը աջեմի զորախումբ ընդունվող տղան պետք է անպայմանորեն տրված լիներ գյուղ՝ ծառայելու թուրքերին: Երբ պետությունը նոր աջեմի տղաների կարիք էր զգում, ապա դիվանի հրամանով *Անատոլիայի* կամ *Ռումելիայի* աղաների միջոցով հավաքում էին *Անատոլիայի* և կամ *Ռումելիայի* գյուղերից ամենից երկար ծառայած աջեմիների անհրաժեշտ քանակություն ու ուղարկում Ստամբուլ: Այստեղ քննվում էր գրանցամատյանը՝ էջքալ դեֆթերի, ստուգվում, որ հանկարծ օտար մեկը չխառնվեր նրանց, ինչից հետո ուղարկվում էին աջեմի

<sup>233</sup> I. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s. 35.

օջախ: Այնտեղ նրանք բաժանվում էին ըստ *օղաների* և գրանցվում վարձամատյանում: Նրանց ծառայության մեջ էին մտնում պալատների, մզկիթների, աղբյուրների, կամուրջների, հիվանդանոցների, դպրոցների և նման այլ շինությունների կառուցումը, զանազան այլ աշխատանքներ, ինչպես փայտահատություն կամ քարակրություն<sup>234</sup>:

Աջեմի օջախը, ըստ էության, ենիչերիական աղայի ենթակայության տակ էր, սակայն վերջինիս խիստ զբաղվածության հետևանքով օջախի կառավարումը հիմնականում իրականացնում էր աջեմի օջախի աղա Ստամբուլի աղան, որը նաև պատասխանատու էր Ստամբուլի պաշտպանության համար այն ժամանակ, երբ ենիչերի աղան և այլոք մասնակցում էին արշավանքների<sup>235</sup>: Ստամբուլի աղայից հետո աստիճանակարգով գալիս էր *Անատոլիայի* աղան, ապա՝ *Ռումելիայի*: Այս երկու աղաները պատասխանատու էին դեվշիրմեի կազմակերպման համար: Դրանից հետո նրանք վերցնում էին հավաքված տղաների մատյաններն ու ներկայանում ենիչերի աղային: Հավաքված տղաները վերաբաշխվում էին *Անատոլիայի* ու *Ռումելիայի* միջև: Հետագայում կրկին նրանց միջոցով էին անհրաժեշտության դեպքում տղաներին հետ բերում թուրք գյուղացիների մոտից ու նշանակում աջեմի օջախ:

*Ռումելիայի* աղան պաշտոնական առաջխաղացման դեպքում նշանակվում էր *Անատոլիայի* աղա: Սակայն, փաստորեն, ինչպես տեսանք, թե՛ *Ռումելիայի*, թե՛ *Անատոլիայի* աղաները հիմնականում չէին զբաղվում աջեմի օջախի գործերով:

Չնայած, համաձայն օրենքի, աջեմի օջախից ենիչերի էին նշանակում միայն յոթից ութ տարի ծառայությունից հետո, սակայն գործնականում դա տեղի էր ունենում ըստ պահանջի: Պատերազմների հետևանքով շատ հաճախ ենիչերիական օջախների մեծ կորուստները լրացնելու համար աջեմի օջախից վերցնում էին նաև ավելի քիչ

<sup>234</sup> Նույն տեղում, s. 38-40.

<sup>235</sup> Նույն տեղում, s. 43.



ծառայած տղաների: Օրինակ, հիջրայով 1042 թվականին (1631թ.) չորս հազարից ավելի աջեմի օղլան է անցում կատարել ենիչերիական զորախումբ: Իսկ արդեն հիջրայով 1047 թվականին (1637թ.) կրկին նույն քանակությամբ աջեմի օղլան է դարձել ենիչերի<sup>236</sup>:

Ենիչերիական օջախի հաճախ սուր կարիքների մասին է խոսում այն փաստը, որ պատահում էին նույնիսկ այնպիսի ենիչերիներ, որոնք դեռ թուրքերեն վատ էին խոսում, այսինքն՝ բավական ժամանակ դեռ չէր անցել, որպեսզի նրանք լիովին թուրքացվեին: Այսպիսի դեպքեր առավել հաճախ են գրանցվել Սելիմ Երկրորդի օրոք<sup>237</sup>:

Ենիչերիական օջախի զինուժի կարիքը ներկայացնում էր արքունիքին ենիչերի աղան, որի խնդրանքին ի պատասխան արձակվում էր հրաման, համաձայն որի և հավաքվում էին անհրաժեշտ քանակությամբ աջեմի օղլաններ: Այդուհետ կազմվում էր առաջխաղացման թեկնածուների ցուցակ, որն ապա հաստատվում էր մեծ վեզիրի կողմից:

Ենիչերիական օջախ միայն աջեմի օղլաններից վերցնելու օրենքը ժամանակի ընթացքում խախտվեց, և արդեն մոտ XVII դարի կեսերից ենիչերիական սպաները կաշառքի դիմաց օջախ էին ընդունում օտար տարրեր:

Աջեմի զորաբանակը շարունակվել է մինչև 1826թ.՝ ենիչերիական զորաբանակի ցրումը, սակայն ենիչերիության համար դեվչիրմե հավաքները մինչև դա արդեն դադարեցվել էին: Նույնիսկ եթե գտնվում են փաստաթղթեր, որտեղ երևում է, որ 1804թ. որոշ զավառակներում ենիչերիների հետ մեկտեղ ծառայել են նաև աջեմի օղլաններ, դրանք հավաքված չեն եղել դեվչիրմեով կամ փենջիքով, այլ այստեղ ընդունվել են թուրքեր կամ այլ մահմեդականներ<sup>238</sup>:

<sup>236</sup> Նույն տեղում, s. 61-62.

<sup>237</sup> Նույն տեղում, s. 362.

<sup>238</sup> Նույն տեղում, s. 66-68.



Ենիչերիական գորաբանակը ռազմական, ինչպես նաև պետության ամրապնդման առումով մեծ կարևորություն ուներ: Միջնադարյան եվրոպական պետությունները չստեղծեցին կանոնավոր հետևակ: Դրա դերը կատարում էին օտարերկրյա վարձկանները: Մինչդեռ ենիչերիներն արհեստավարժ մշտական զորք էին, որն ստանում էր ջոճիկ, ապրում զորանոցներում, ազատ էր տնտեսական կամ ընտանեկան հոգսերից: Նրանց արգելված էր ամուսնանալ կամ առևտրով զբաղվել: Ռոճիկը, սուլթանների նվերները, բարձր զինվորական կամ վարչական պաշտոններ ստանալու հավանականությունը ևս նպաստում էին, որ ենիչերիները դառնան սուլթանական գահի նախանձախնդիր զինվորներ և հուսալի հենարան<sup>239</sup>:

Ենիչերիական գորաբանակը հետզհետե դարձավ կենտրոնական իշխանության գլխավոր հենարանը: Սուլթանն այդ զորքն օգտագործում էր թե՛ արտաքին, թե՛ ներքին թշնամիների դեմ արշավանքներում: Ենիչերիական գորաբանակը սկզբում կատարում էր միայն սուլթանի թիկնազորի պարտականությունները, հետագայում, սակայն, այն դարձավ պետության բանակի հիմնական տարրերից մեկը: Սա բերեց պետության երկատվածության, *սիպահիությունն* ու հին օսմանաթուրքական արիստոկրատիան, որոնք հենվում էին զգալի հողային տիրույթների՝ *մյուլքերի* ու *վաքուֆների* վրա, աստիճանաբար դուրս մղվեցին կառավարման համակարգից: Այսինքն՝ ստրկական («քուլ»-երի) համակարգը պետք է ծառայեր իրենց ձեռքերում ղեկավարման բոլոր լծակները կենտրոնացնել ձգտող սուլթաններին: Այդ համակարգը սկսեց զարգանալ ենիչերիական գորաբանակի ձևավորմամբ, իսկ 1453 թվականին քաղըքույուններից (karikulu՝ բոց. «պալատի ստրուկ») առաջին անգամ մեծ վեզիր նշանակվեց<sup>240</sup>:

<sup>239</sup> А. Миллер, Мустафа паша Байрактар, М., 1947, с. 31.

<sup>240</sup> Р. Градуева, О некоторых проблемах формирования османской системы управления (XIV - начало XV века), Османская империя:

Այսպես, ի սկզբանե նահանգային կառավարիչներն առաջ էին քաշվում հենց ավատատիրական դասակարգից: Հնարավոր է նույնիսկ, որ յուրաքանչյուրը նշանակվում էր այնտեղ, որտեղ ժառանգական ավատ ուներ, և որոշ դեպքերում պաշտոնը ժառանգելի էր դառնում: Ինչևէ, դեվչիրմե համակարգի կիրառումից հետո սուլթանները նահանգներն ավելի վերահսկելի ու արխատոկրատիային իշխանությունից հեռու պահելու համար այդ պաշտոններում սկսեցին նշանակել քաղաքացույունների<sup>241</sup>:

Բնականաբար, հին ընտրանին չէր կարող հանգիստ վերաբերվել իր դիրքերի զիջմանը և դիմում էր բացահայտ կամ թաքնված դիմադրության:

Կենտրոնացման քաղաքականությանը դիմակայելու մեջ է պետք փնտրել Բայազեթ I-ի՝ Անկարայի ճակատամարտում պարտվելու պատճառներից մեկը: Մ.Նեշրին նշում է, որ Թեմուրի հետ ճակատամարտից առաջ սուլթանին լքել են իր կողմից գրավված բելլիքների զորաջոկատները, և հավատարիմ են մնացել միայն անձնական ստրուկները, մասնավորապես ենիչերիները, ինչպես նաև քրիստոնյա վասալների զորքերը<sup>242</sup>:

Ինչպես նշեցինք, սկզբում ենիչերիներն առանձնա՛նում էին նրանով, որ նախապես անցնում էին ռազմական կրթություն, ընդ որում՝ ըստ հրամանների ենիչերի պետք է դառնային միայն ռազմագերիներից ու դեվչիրմեներից ընտրյալները, լավագույններից լավագույնները: Ենիչերիներն ստանում էին ռոճիկ պետական գանձարանից, այսինքն՝ կարիք չունեին մտածել արհեստով կամ առևտրով զբաղվելու մասին: Սրանով ապահովվում էր այն, որ իրենք

---

государственная власть и социально-политическая структура (под ред. Орешковой С.), Сборник статей, М., 1990, с. 49.

<sup>241</sup> H.A.R. Gibb, H. Bowen, Islamic Society and the West. A Study of the Impact of Western Civilization on Moslem Culture in the Near East, Volume One, Part I, London, New York, Toronto, 1951, p. 145.

<sup>242</sup> Р. Градуева, О некоторых проблемах формирования османской системы управления (XIV - начало XV века)..., с. 48.

ամբողջապես կենտրոնացած լինելն ռազմարվեստի վրա: Նրանք արգելված էր ամուսնանալ, իսկ ծնողներին նրանք արդեն վաղուց մոռացել էին, այսինքն՝ ենիչերին, զնալով մարտի դաշտ, իր հետևում ընտանիք չէր թողնում, նա մտածում էր միայն իր միակ տեր սուլթանի, ինչպես նաև իր կրոնը հանդիսացող մահմեդականության փառքի ու հաղթանակի մասին: Ինչևիցե, բազում փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ենիչերիական զորաբանակի հզորությունը պայմանավորված էր ոչ միայն վերոնշյալ որակական, այլ նաև քանակային ասպեկտներով: Այսինքն՝ բազում ճակատամարտերում օսմանցիները հաղթանակ էին տանում ոչ միայն ավելի նոր զենքերի ու մարտավարության, ավելի պատրաստված ու ինքնամոռաց զինվորներ լինելու շնորհիվ, այլև զուտ քանակապես շատ լինելու հետևանքով: Ի տարբերություն եվրոպացի թագավորների, իշխանների և այլոց, որոնք ունեին մարդուժի համեմատաբար սահմանափակ պաշար, օսմանյան պետությունը, նաև ի դեմս իր անծայրածիր տարածքներում հպատակ քրիստոնյաներից հավաքվող տղայահարկի, մասնավորապես՝ արդեն թուրքերի մոտ ծառայող աջեմի օղլանների, ուներ ռազմուժի մեծ ռեսուրս, որին ամեն պահ կարող էր զորակոչել և ուղղել ընդդեմ իր թշնամիների:

Ստրկական համակարգն ընդհանրապես, իսկ ենիչերիական համակարգը՝ մասնավորապես, օսմանյան պետության զարգացման հետ մեկտեղ հզորացան և նույնիսկ հասան այն մակարդակի, որ որոշիչ դեր էին խաղում սուլթանների գահակալման հարցում: Հատկապես թույլ սուլթանների ժամանակ քափըջուլու համակարգի ներկայացուցիչները, փաստորեն, հանդիսանում էին ողջ պետության դե-ֆակտո ղեկավարները:

Ենիչերիները նաև կարևոր դեր էին խաղում հպատակ քրիստոնյաների ծուլման քաղաքականության մեջ: XVI դարից սկսած ենիչերիական զորանոցներ տեղադրվում

էին կայսրության ողջ տարածքով մեկ<sup>243</sup>: Մուրադ IV սուլթանին ուղղված իր զեկույցում Քոչիբեյ Գյումուրջինացին ասում է, թե «չկա ոչ մի ավան կամ քաղաք, որտեղ չլինի ենիչերի»<sup>244</sup>: Գավառակում տեղակայված ենիչերիական զորանոցն իր երկարատև ազդեցությունն էր թողնում շրջակա բոլոր գյուղերի ազգաբնակչության վրա: «Եռու լինելով մայրաքաղաքից՝ ենիչերիները հեռու էին նաև լուրջ վերահսկողությունից, ուստի դիմում էին բազում կամայականությունների, սակայն նրանք գտնվում էին իրար բավական մոտ տարածության վրա, որպեսզի կարիքի դեպքում միմյանց օգնության հասնեին: Այսպիսով, ենիչերիներն անտեսում էին, մասնավորապես, չամուսնանալու արգելքը և գյուղերում անց էին կացնում այս անգամ աղջկահավաքներ՝ տանելով տարածքի ամենազեղեցիկ սերունդը: Այդ ահարկու դեպքերին մեր ժողովուրդը տալիս էր «աղջկայ աի» անունը<sup>245</sup>: Աղջկահավաքի մի դեպք է հիշատակում նաև 1569թ. Դավիթ Բաղիշեցին, թե «աղջիկ ժողովեցին ի քրիստոնեից»<sup>246</sup>:

Ամենուր ենիչերիներն իրենցից հետո թողնում էին մահմեդական հետք, որը հետագայում մեծ դեր էր ունենում տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի ձևավորման գործընթացի մեջ:

Այնուամենայնիվ, օսմանյան պետության թուլացման հետ մեկտեղ քայքայվեց նաև ենիչերիական համակարգը: Օսմանյան պետությունն իր վարած սխալ քաղաքականու-

<sup>243</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 116-125.

<sup>244</sup> Тверетинава, А., Второй трактат Кочибея. Ученые записки Института Востоковедения, VI, М.-Л., 1953, с. 63-66.

<sup>245</sup> Գրիգոր Կամախեցի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, էջ 6, մեջբերում ըստ Յ.Անասեան, Թուրքական ֆուրուվվաթը եւ հայերը, առանձնատիպ, արտատպուած՝ «Հասկ» հայագիտական տարեգրքի նոր շրջանի Զ տարի հատորէն, 1994թ., Անթիլիաս, էջ 222:

<sup>246</sup> Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը, Դիվան հայոց պատմության, կազմեց Աղանցյան Գ., գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 47:

թյան հետևանքով պարտություններ էր կրում թե մարտի դաշտերում, թե դիվանագիտության ասպարեզում: Լեպանտոյի ծովամարտը<sup>247</sup> ցույց տվեց եվրոպացիներին, որ օսմանցիներն ամենևին էլ անպարտելի չեն, իսկ դա արդեն ամրագրվեց Կառլովիցեի 1699 թվականի պայմանագրով, ինչն ի ցույց դրեց արդեն մի քանի տասնամյակ Օսմանյան կայսրությունում սկսված անկումնային գործընթացի արդյունքները<sup>248</sup>:

Օսմանյան պետության համար այլևս չափազանց բարդ էր լինում ռոճիկ տալ ենիչերիական զորքին, որն անասելիորեն ուժեղացվել էր. սա բերում է զորքի թվի կրճատմանն ու որակի անկմանը, ինչը հանգեցում էր նորանոր պարտությունների, որոնք էլ ավելի էին ճգնաժամային դարձնում իրավիճակը: Օսմանյան կայսրությունը հայտնվել էր արատավոր շրջանակի մեջ, որից դուրս գալու համար պետք էին բարեփոխումներ, իսկ դրանց համար պետք էր նախ գտնել չարյաց արմատը:

Սուլթանների կենտրոնաձիգ քաղաքականության հետևանքով հետին պլան մղված արիստոկրատիան զգում է, որ եկել է իր ժամանակն ու որպես չարյաց արմատ մատնանշում քափղքուլու ստրկական համակարգը՝ դեվչիրմե, իչ օղլաններ, աջեմի օղլաններ և նամանավանդ ենիչերիություն:

Դեվչիրմեի հավաքագրման համեմատական մաքրությունն արդեն արատավորված էր տարբեր միջոցներով: Մահմեդականները, հրեաները և այլոք կաշառքի օգնությամբ ներկայացնում էին իրենց որդիներին դեվչիրմեի, իսկ ապա նույն միջոցներով տանում էին որդուն իրենց ցանկացած ուղղությամբ. զորք՝ որպես ենիչերի, որտեղ նա կստանար կայուն ռոճիկ, ինչպես նաև կկարողանար հովանավորել իր մնացյալ ազգականներին, կամ պալատ՝ որպես իչ

<sup>247</sup> Danişmend İ.H., İzahlı osmanlı tarihi kronolojisi, İstanbul, 1948, Cilt 2, s. 401-410.

<sup>248</sup> M. Todorova, Was there a demographic crisis in the Ottoman Empire in the seventeenth century?, Études balkaniques, 2, 1988, Sofia, p. 57-58.

օղյան, որտեղ արդեն իրենց կապերով նրան կհասցնեին բարձր պաշտոնների կառավարությունում և կամ նրան կտրվեր վարչական պաշտոն իր հարազատ տարածքների մոտակայքում: Այս ուղիներից ավելի շատ օգտվում էր նախկին արիստոկրատիան, որ հեռացվել էր կառավարման օղակներից, սակայն ուներ դեռ բավական ներուժ, որը պետք է ուղղվեր համապատասխան հնարավորության դեպքում: Կաշառակերությունը քայքայեց նաև երբեմնի այս կուռ համակարգը: Սրան զուգահեռ՝ ենիչերիական գորաբանակում անտեսվում էին ընտանիք չկազմելու, ինչպես նաև արհեստներով կամ առևտրով չզբաղվելու կանոնները<sup>249</sup>: Ավելին, ենիչերիները ժամանակի ընթացքում ստիպեցին, որ օրենք ընդունվի իրենց որդիների՝ գորաբանակում ծառայության վերաբերյալ: Ենիչերիական սպաները պետական զանձարանից ավելի մեծ գումարներ ստանալու նպատակով ցուցակներից դուրս չէին գրում մահացած ենիչերիներին՝ գոյացնելով «մահացած հոգիների» մի հսկայական բանակ, որը ծանրանում էր առանց այդ էլ սնանկ պետական զանձարանի ուսերին:

Կա տեսակետ, որ սուլթանները, մասնավորապես՝ Մուրադ III-ը, դիտավորյալ են թույլ տվել ենիչերիության մեջ կաշառակերության տարածումն ու այդ համակարգի քայքայումը, քանի որ նրանք արդեն դարձել էին անկառավարելի ու վտանգում էին պետության շահերը: Սակայն, այսպիսով բանակում մարդաքանակը կրկնապատկվեց, քանի որ պետությանը, բացի կաշառքով ընդունվածներից, պետք էր նաև բանակում իրապես ծառայող ռազմուժ: Դա ունեցավ այն ազդեցությունը, որ զանձարանը, որի ֆոնդերը հազիվ էին բավարարում ենիչերիների նախնական քանակի ջոճիկները վճարելու համար, դիմեց մետաղադրամների որակի իջեցմանը, ինչը պատճառ դարձավ ապստամբությունների՝ առաջին հերթին ենիչերիների կողմից<sup>250</sup>:

<sup>249</sup> M. And, XVI. yüzyılda acemi ve yeniçeri ocağı, 2, Tarih mecmuası, İstanbul, 1971, Mart, Cilt 1, Sayı 2, s. 17.

<sup>250</sup> H.A.R. Gibb, H. Bowen, Islamic Society and the West..., p. 180.

Հասարակության ճնշման արդյունքում ավելի ու ավելի հազվադեպ էին դիմում դեվչիրմե հավաքներին, և արդեն XVII դարակեսին դրանք չունեին պարբերական բնույթ, ինչով կորցրին իրենց նշանակությունը պետական համակարգում: Դեվչիրմեի դադարեցումով, սակայն, ենիչերիները չանհետացան: Դեվչիրմե ինստիտուտի վերացումը բերեց նրան, որ ենիչերիների օջախները համալրվում էին միայն ազատ ծնված մահմեդականներով, քանզի միայն մահմեդականները կարող էին ծառայեցվել հավատքի բանակում: Սակայն այս մահմեդական նորակոչիկները շատ ավելի քիչ էին ենթակա կարգապահության, քան իրենց նախորդները, որոնք հավաքված էին դեվչիրմեով: Նրանք շուտով ստիպեցին վերջնականորեն հրաժարվել ենիչերիական կազմակերպության երկու հիմնական սկզբունքներից՝ նախքան թոշակի անցնելն ամուսնանալու և առևտրով կամ արհեստով չգրադվելու արգելքներից<sup>251</sup>:

Ենիչերի զորաբանակն իր գոյությունը պահպանեց ևս մեկ դար՝ մինչև 1826 թվականը՝ նշանավորելով արդեն ոչ թե Օսմանյան կայսրության հզորությունը, այլ ընդհակառակը՝ անկումը:

### *Ստրուկներ*

Դեվչիրմե համակարգով հավաքված քրիստոնյա երեխաները մի քանի անգամ ավելի շատ էին, քան պահանջվում էր ենիչերիական զորաբանակը համալրելու համար: Ըստ պաշտոնական տվյալների՝ Ստամբուլում աջեմի օղլանների զորամասը սկզբում ուներ 3 հազար, իսկ XVI դարի կեսերին՝ մոտ 4 հազար անդամ: Էդիրնեի ու Գելիբոլուի հետ միասին նրանց թիվը հասնում էր 6 հազարի: XVI դարի վերջին մայրաքաղաքում կար 8900 աջեմի օղլան, իսկ XVII դարի սկզբին, համաձայն աղբյուրներից մեկի՝ 9400, մյուսի՝ 12000: Հետագայում մի շարք պատճառների հետևանքով նրանց թիվը գնալով նվազում է<sup>252</sup>:

<sup>251</sup> Նույն տեղում, p. 181-182.

<sup>252</sup> J. H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s. 79-81.



Այսպիսով, այն ժամանակ, երբ աջեմի օղլանների զորամասը XVI դարի երկրորդ կեսին ու XVII դարի սկզբին գտնվում էր զարգացման զագաթնակետում, այն հաշվում էր միայն 12 հազար մարդ: Պարզ է, որ նոր հավաքների դեպքում այն ամբողջապես չէր թարմացվում: Չնայած XVI դարի վերջին պաշտոնական ցուցակներով զորամասում հաշվվում էր 48 հազար մարդ, սակայն այդ ժամանակ արդեն այնտեղ կային բազում կեղծ ենիչերիներ (մահացած ենիչերիների անունները ցուցակներից դուրս չէին հանվում, որպեսզի պետությունից նրանց անունով աշխատավարձ ստացվի): Բացի այդ, պետք է ի նկատի ունենալ նաև հետևյալ մանրամասները. ենիչերիական զորաբանակը թարմացվում էր ամեն յոթ տարին մեկ, իսկ ենիչերիներն այնտեղ ծառայում էին մինչև ծերություն: Մինչդեռ XVI դարում դեվչիրմե հավաքն անց էր կացվում երեք տարին մեկ կամ ավելի հաճախ:

Ուստի, ակնհայտ է, որ դեվչիրմեով հավաքվածների թիվը քանիցս գերազանցում էր ենիչերիական զորաբանակի կարիքները: Այս կապակցությամբ դեվչիրմե համակարգի ուսումնասիրողների առջև մի հարց է ծառայում. «Ի՞նչ ձևակառուցի են արժանացել միլիոնավոր քրիստոնյա երիտասարդները, որոնց օսմանցի գավթիչները զատել են իրենց սեփական հպատակներից»: Պատասխանը հստակ է. նրանք օգտագործվում էին որպես ծրի, ստրկական աշխատանքային ուժ<sup>253</sup>:

Այսպիսով, իչ օղլաններից ու աջեմի օղլաններից բացի, կար նաև երրորդ խումբ, որն անհայտանում էր պետական բարձր պաշտոնյաների կամ սպաների ավատական տիրույթներում, *թիմարներում, չիֆթլիքներում*: Եվրոպացի ճանապարհորդ Ղերնշվամը հայտնում է. «Ինչպես սուլթանական աջեմի օղլաններն են սրածայր գլխարկ դնում, այդպիսի գդակ են կրում նաև տղաները, որոնք ապրում են փաշաների, թուրք հոգևորականների, արհեստավորների,

<sup>253</sup> В. Мутафчиева, Аграрните отношения в Османската империя през 15-16в., с. 153.



բոլոր իրեն ստրուկ գնել թույլ տվող մարդկանց մոտ... Իսկ եթե որևէ մեկը երեխա է ունենում, վերջինս նույնպես ստրուկ ու գերի է համարվում: Եթե տերը կարիքի մեջ է ընկնում, ապա վաճառում է նրան: Սուլթանն ու փաշաներն իրենց մոտ ունեն այնպիսի տղաներ, որոնք իրենց են հասել դեվշիրմեի միջոցով»<sup>254</sup>: Եվ այսպիսով, հավաքվածների երրորդ մասը, որոնց քանակը թվապես հնարավոր չէ սահմանել, ստրկացվում էր: Սակայն ի տարբերություն իջ տղանների և աջեմի տղանների, նրանց ստրկությունն իրենց արտոնություն չէր բերում: Նրանք ամենահասարակ անազատներն էին այդ աշխարհում, որտեղ ստրկությունը հասարակ երևույթ էր: Կարելի էր նրանց նվիրել ու վաճառել: Նրանք չունեին սեփականության իրավունք, ավելին, իրենք էին հանդիսանում սեփականություն: Նույն ժամանակ էլ նրանք ամենևին տնային ստրուկներ չէին<sup>255</sup>: Հավաքված երիտասարդության մեծ մասն ուղարկվում էր աշխատելու այն անմարդաբնակ տարածքներում, որոնք տրվել էին իրենց ավատատիրոջը որպես պայմանական կամ այլ տիպի տիրույթներ: Այնտեղ նրանք վերադառնում էին իրենց նախկին կարգավիճակին՝ աշխատանքային ուժ, սակայն այլևս ոչ որպես *ռայաթ*. Դեվշիրմեն, փաստորեն, նաև աշխատուժի վերաբաշխման հարմար եղանակ էր կառավարող վերնախավի համար: Կար նաև այլ տարբերություն, որովհետև դեվշիրմեով անցածներն արդեն մահմեդական էին: Եվս մեկ անգամ Օսմանյան կայսրության կողմից ուտնահարվում է շարիաթը, քանի որ ըստ դրա՝ մահմեդականը չի կարող լինել ստրուկ:

Այսպես, դեվշիրմեով հավաքված տղաների ոչ փոքր մասը չէր մտցվում օսմանյան ղեկավար դասակարգի շարքերը, ինչպես մեզ փորձում են համոզել որոշ պատմաբաններ, այլ ընկնում էր օսմանյան հասարակության ամենաստորին խավի մեջ: Սա նշանակում էր, որ իրենք ստանում

<sup>254</sup> Дневникът на Х.Дерншвам за едно пътувание....стр. 80-81 цит. по Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 91.

<sup>255</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 91.

էին ավելի ծանր կարգավիճակ, քան քրիստոնյա եղած ժամանակ:

Դեվչիրմեն ստեղծված էր, որպեսզի բավարարեր հիմնականում բանակի ու բյուրոկրատական համակարգի մարդկային ռեսուրսների պահանջարկը: Սակայն, ինչպես տեսնում ենք, այն նաև աշխատուժի տարածքային վերաբաշխման գործառույթ ուներ:

Ընտրության առաջին փուլը չանցած տղաները փոխանցվում էին *Անատոլիայի* ու *Ռումելիայի* աղաների պատասխանատվության ներքո, որոնք նրանց տեղավորում էին գյուղացիների ու ավելի հազվադեպ՝ քաղաքացիների ընտանիքներում որպես աշխատուժ: Մեծ մասամբ քրիստոնյա տղաներն օգտագործվում էին գյուղատնտեսությունում: Թուրք պատմաբան Ի.Ուզունչարշլընը նշում է, որ նրանց տալիս էին հիմնականում անատոլիական գյուղացիներին<sup>256</sup>: Ենիչերի ղեկավարները, սակայն, ոչ թե տալիս էին, այլ ժամանակավոր վաճառում էին չնչին գումարով գյուղացիներին՝ վերջիններիս տնտեսություններում աշխատուժի պահանջը բավարարելու համար<sup>257</sup>:

Ֆրանսիացի ճանապարհորդ Ղարամոնը նույնպես տեղեկացնում է, որ դեվչիրմեով հավաքված տղաներից ամենազեղեցկատեսներին ընտրելուց հետո, մնացածին ուղարկում են Բուրսայի ու Քարամանի հողագործների և հովիվների մոտ՝ դաշտեր մշակելու, անասուն արածեցնելու կամ այլ աշխատանքներ կատարելու<sup>258</sup>: Գյուղացիներից հավաքվող գումարը մեկ անձի հաշվով չնչին էր, սակայն մեծ գումար էր կազմում՝ հաշվի առնելով տղաների բազմաքանակությունը: Այն գանձվում էր հօգուտ ենիչերիական աղաների, որոնք դրա մի մասը տալիս էին իրենց քարտուղարներին: Այս վճարը վկայում էր նրա մասին, որ թուրքերին վաճառվող քրիստոնյա երիտասարդները դիտ-

<sup>256</sup> İ. H. Uzunçarşılı, *Kapıkulu ocakları...*, s. 6-7. İ. H. Uzunçarşılı, *Osmanlı tarihi...* c.1, s. 509.

<sup>257</sup> İ. H. Uzunçarşılı, *Kapıkulu ocakları...*, s. 29.

<sup>258</sup> Նույն տեղում, s. 17. 26.

վում էին որպես սուլթանի սեփականություն: Դրա մասին է վկայում նաև օրենքով սահմանված կարգը, համաձայն որի՝ բոլոր այդ երիտասարդները գտնվում էին ենիչերիների գլխավոր աղայի ու նրա երկու օգնականների ենթակայության ներքո, որոնք կառավարում էին իրենց գործերը հատուկ պաշտոնյաների՝ քեթսուղաների միջոցով<sup>259</sup>:

Ինչպես երևում է բերված աղբյուրներից, դեվչիրմեով հավաքագրված քրիստոնյա տղաների մեծամասնությունն օգտագործվում էր որպես ստրուկներ թուրք գյուղացիների տնտեսություններում: Հայտնվելով թուրքական շրջապատում, այդ քրիստոնյա երեխաները թուրքացվում էին ու մահմեդականացվում:

Սուլթանական տնտեսություններում աջեմի օլլանների ստրկական աշխատանքի լայն կիրառման մասին են խոսում սուլթանի հրամանները:

Այսպես, 1558-1560թթ. հղամանագրքում կարդում ենք մի հրաման ենիչերի աղային, որ դեպի Ստամբուլ տանող ջրի ճանապարհի վրա աշխատող 23 աջեմի օլլաններին ծառայության նշանակեն պալատում<sup>260</sup>; 1565-1566թթ. հրամանագրքում՝ հրաման ենիչերիի աղային պարտեզներում աշխատող աջեմի օլլաններից 500 հոգու պալատ ուղարկելու վերաբերյալ<sup>261</sup>; 1570-1572թթ.՝ հրաման էղիրնեի բոսթանջըբաշըին (գլխավոր այգեպան) առ այն, որ էղիրնեի սուլթանապատկան այգիներում վաղուց ծառայող աջեմի օլլաններից 50 հոգի ուղարկեն ենիչերի աղային, որը նրանց պետք է ուղարկի պալատ՝ ծառայության<sup>262</sup>:

<sup>259</sup> Նույն տեղում, s. 29.

<sup>260</sup> 3 numaralı mühimme defteri (966-968 / 1558-1560), c.1, Ankara, 1993, s. 684.

<sup>261</sup> 5 numaralı mühimme defteri (973 / 1565-1566), c.1, Ankara, 1994, s. 138.

<sup>262</sup> 12 numaralı mühimme defteri (978-979 / 1570-1572), c.3, Ankara, 1996, s. 375, 798.

Իսկ ի՞նչ էր տեղի ունենում այն ժամանակ, երբ սուլթանական տնտեսություններում էր պակասում աշխատողների քանակը: Դիմենք նույն հրամանագրերին:

1564թ. հրաման<sup>263</sup>, որտեղ ենիչերի աղային հրամայվում է թուրք գյուղացիների մոտ գտնվող (Türk üzzerinde olan) աջեմի օղլաններից 25 հոգու ուղարկել որպես օգնական-աշակերտ հրետանավորների ղեկավարի մոտ; հրաման համար 479, որտեղ սուլթանը հրամայում է ենիչերի աղային թուրք գյուղացիների մոտ գտնվող աջեմի օղլաններից ընտրել հյուսելու ընդունակություն ունեցողներին և ուղարկել 8 հոգու իր անձնական մագ հյուսողի մոտ որպես աշակերտ<sup>264</sup>:

1570-1572թթ. հրամանագրեցի պարզ է դառնում, որ եղիրների բոսթանջըբաշըն նամակ է գրել, թե եղիրների սուլթանական պարտեզում 57 հոգու պակասորդ ունի: Հրաման է տրվել ենիչերի աղային լրացնել պակասորդը թուրքերի ընտանիքներում գտնվողներից<sup>265</sup>:

Թուրքական ընտանիքներ ուղարկված աջեմի օղլաններն այսպիսով սուլթանի համար մարդուժի պաշար էին հանդիսանում, որտեղից նա պարբերաբար բավարարում էր էժան աշխատուժի իր պահանջները:

Դեվչիդմենների ստրկական աշխատանքից լայնորեն օգտվում էին նաև բարձրաստիճան պաշտոնյաները, ենիչերիական զորքի բարձր հրամանատարները և այլոք: Այսպես, ենիչերիական աղաներն ու այլ սպաները տղաներին ուղարկում էին իրենց խոշոր ավատներ, որտեղ նրանց աշխատեցնում էին ինչպես ստրուկների:

Դեվչիդմենների ստրկական աշխատանքը լայն կիրառում էր գտել, մասնավորապես, տարբեր տեսակի պետական արհեստանոցներում, շինարարություններում և այլուր: Հիշեցնենք, որ եթե Ստամբուլում ստուգման

<sup>263</sup> 6 numaralı mühimme defteri (972 / 1564-1565), c.1, Ankara, 1995, s. 212.

<sup>264</sup> Նույն տեղում, s. 261.

<sup>265</sup> 12 numaralı mühimme defteri..., s. 293.

ժամանակ սյուրյուում (հոտում) գտնվում էին երիտասարդներ, որոնք չէին համապատասխանում դեվչիրմե հավաքի օրենքին, ապա ամբողջ հոտը որպես պատիժ ուղարկվում էր մշտական աշխատանքի թուփհանե, Ջեբեհանե (զինագործարաններ) ու Թերսիհանե (նավաշինարան):

Աջեմի օղլանների ստրկական աշխատանքն օգտագործվում էր ոչ միայն սուլթանական ձեռնարկություններում, այլ նաև արհեստավորների կողմից:

Տեղեկություններ ենք քաղում Դերնշվամի մուտից. «Եթե որևէ արհեստավորի պետք է ծառա կամ օգնական, նա դիմում է աջեմի օղլանների աղային՝ խնդրելով տրամադրել իրեն 1, 2 կամ 3 նոր աջեմի օղլան, այսինքն՝ թլպատված տղա, վճարում է 25-ական աքչե, իսկ աղան գրանցում է նրանց անունները արհեստավորի վրա: ...Այս աջեմի օղլանները դեռ երկար տարիներ պետք է տանջվեն արհեստավորների մոտ, ... և ոչ ոք նրանց չի վճարի դրա համար: ...Այսպիսի աջեմի օղլաններին բաժանում են ամենուր նաև *սիպահիներին*, չաուչներին, գյուղացիներին և ամենքին, ում նման մարդիկ են պետք աշխատանքի համար»<sup>266</sup>:

5-8 տարի նման կյանքից հետո ենիչերիական աղայի պահանջով ու ըստ նրա կողմից նշված քանակի աջեմի օղլանների մի որոշ մաս, ընդ որում՝ ամենաավագները, ուղարկվում էին Ստամբուլ<sup>267</sup>: Չնայած 30 տարեկան աջեմի օղլանների առկայությունը ցույց է տալիս, որ ութ տարին ամենևին էլ առավելագույն ժամանակահատվածը չէր<sup>268</sup>: Այստեղ նրանց կրկին ենթարկում էին բժշկական զննման, ստուգում նրանց թուրքացման ու մահմեդականացման աստիճանը և նշում նրանց անունները էջբալ դեֆթերում: Ստուգումն անցածներին գրանցում էին աջեմի օղլանների զորաբանակ՝ աջեմի օջաղը, որտեղ

<sup>266</sup> Дневникът на Х.Дерншвам за едно пътувание..., с. 86-87 цит. по А. Новичев, К истории рабства в Османской империи..., с.101.

<sup>267</sup> İ. H. Uzınçarşılı, Karıkulu ocakları..., s. 151.

<sup>268</sup> А. Новичев, К истории рабства в Османской империи..., с. 108.

նրանց ուսուցանվում էր ռազմական արվեստ, ինչպես նաև մշակում էին մահմեդական մոլեթանդության ու սուլթանին կույր նվիրվածության ոգով:

Թվում է, թե աջեմի օղլանների աշխատանքային տաժանակրությունը սրանով ավարտին է հասնում: Սակայն թուրք պատմաբան Ի.Ուզունչարը ընդ գրում է. «Թուրքերի մոտ ծառայությունից հետո աջեմի օղլանների զորաբանակ մտած անծինք ուղարկվում են աշխատանքի ենիչերիական զորամասերում, նավերում, շինարարություններում ու այլուր, իսկ նրանց մի մասը երկարատև ժամկետով հանձնվում էր աշխատանքի թնդանոթածիզներին, զինագործներին և այլն»<sup>269</sup>:

\*\*\*

Թուրք պատմաբան Հալիլ Ինալչիքը մահմեդական տարածքներում ստրկական առևտրի երկարատև ծաղկումը վերագրում է մահմեդական մշակույթին ներհատուկ պայմաններին: Նախ և առաջ միջնադարում *Աբբասյան* խալիֆները ժամանակ առ ժամանակ մեծաքանակ ստրուկներ էին պահում մահմեդական կառավարիչների զորքերում: Ստրուկները նաև օգտագործվել են որպես աշխատուժ քաղաքային արհեստանոցներում և մեծ ազարակներում, որոնք պատկանում էին պետությանը կամ մեծ հողատերերին: Ավելին, պալատի օրինակին հետևելով՝ վերին խավը և նույնիսկ բարեկեցիկ ոչ մահմեդականներն ունեին մեծ տնային տնտեսություններ՝ մեծաքանակ ստրուկներով<sup>270</sup>:

Ընդհանուր առմամբ, ստրուկներն ուսումնասիրվող դարաշրջանում կազմում էին ներկայսերական, տարածաշրջանային, ինչպես նաև միջազգային առևտրի կարևոր «ապրանքներից» մեկը: Դ.Երեմենը նշում է, որ «սուլթանական զանձարանի եկամտի մի մասը եղել է ստրկա-

<sup>269</sup> I. H. Uzunçarşılı, *Kapıkulu ocakları...*, s. 57.

<sup>270</sup> H. Inalcik, *Servile Labor in the Ottoman Empire, Studies in Ottoman Social and Economic History*, VII, London, 1985, p. 25-26.

վաճառությունից ստացված հարկը»<sup>271</sup>: Այդ առևտուրը մեծապես կարևորվում էր նաև օսմանցիների կողմից: Այսպես, 1260-1390թթ. ընկած ժամանակաշրջանում, որի ընթացքում փոքրասիական թուրքերը մեծապես ներթափանցեցին Փոքր Ասիայի արևմտյան մասի ու Թրակիայի բյուզանդական տարածքներ, Մակեդոնիա ու Բուլղարիա, բազմաքանակ գերիներ հոսեցին օսմանյան տարածքներ: Կարելի է նույնիսկ ավելացնել, որ այս ժամանակաշրջանի ընթացքում մահմեդական հինթերլանդում ստրուկների մեծ պահանջարկն ու աճող գները մեծ դեր խաղացին արշավանքների ընդարձակման ու Փոքր Ասիայի արևմտյան մասում *ղազիների* հարուստ իշանությունների հետագա աճի գործում: Այս իշխանությունների կանոնավոր հաճախորդները դարձան վենետիկցիներն ու ջենովացիները՝ ստրուկ գնելով ոչ միայն Իտալիայի ստրկական շուկաների, այլև լանտյան իրենց գաղութներում գյուղատնտեսական աշխատուժը համալրելու համար: Ստրկավաճառությունը վենետիկցիների տնտեսական գործունեության ամենից եկամտաբեր ճյուղն էր<sup>272</sup>: XIV դարասկզբում ստրկավաճառության աճը վկայում է այն մասին, որ թուրքերին ավելի ձեռնտու էր վաճառել ստրուկներին վենետիկցիներին, քան օգտագործել իրենց տարածքներում որպես աշխատուժ<sup>273</sup>: Միջերկրական ծովի խոշոր նավահանգիստ Անթալիան ստրկական առևտրի հռչակավոր կենտրոններից էր: Այստեղ «արտահանվում» էին երկրի հյուսիսից բերված սպիտակ ստրուկները և «ներմուծվում» սևամորթներ<sup>274</sup>:

<sup>271</sup> Д. Еремеев, На стыке Азии и Европы. Очерки о Турции и турках, М., 1980, с. 37.

<sup>272</sup> А. Тойнби, Постигжение истории, М., 2004, с. 197.

<sup>273</sup> Ch. Verlinden, L'Esclavage dans L'Europe medievale, T.2, Gent, 1977, p.825 цит. по К. Жуков, Торговые связи Венеции и Генуи с эгейскими эмиратами Айдын и Ментеше (XIV - начало XV в.), Тюркологический сборник 1979, М., 1985, с.37.

<sup>274</sup> Н. Inalcik, The Ottoman Empire. The Classical Age, 1300-1600, London. 1975. p. 128.



Ստրուկների և նրանց հետ փոխհարաբերությունների վերաբերյալ օրենքներ են մշակվել սուլթան Սելիմ I-ի (1512-1520) օրոք<sup>275</sup>: Հայտնի են օրենքներ՝ զրված նաև նրան հաջորդած սուլթանների՝ Սուլեյման I-ի (1520-1566) և Մուրադ III-ի (1574-1595) օրոք: Այսպես, մեզ հայտնի է հիջրայի 967 (1559թ.) և 983 (1575թ.) թվականների երկու ֆերման-հրովարտակ, համաձայն որոնց՝ Օսմանյան կայսրությունում արգելվում է ստրուկներ վաճառել ոչ մահմեդականներին, որոնք նաև զրկվում են ստրուկ պահելու իրավունքից<sup>276</sup>: Խոսքն ամենայն հավանականությամբ վերաբերում է Օսմանյան կայսրության հպատակ ոչ մահմեդականներին, քանզի եվրոպացի առևտրականները մեծ դեր ունեին այս առևտրում: Հրովարտակներն ընդունվել են ավելի շուտ մահմեդական ստրկավաճառների պահանջով՝ ոչ մահմեդական՝ հրեա և քրիստոնյա, մրցակիցներին դաշտից դուրս մղելու համար:

Ինչևէ, ստրկությունն ու ստրկավաճառությունը շարունակել են իրենց գոյությունը Օսմանյան կայսրությունում մինչև XIX դարի վերջերը<sup>277</sup>:

Պատմաբաններն ավելի հաճախ են գրում այն մասին, թե ինչ մեծ դեր էր խաղում ստրկավաճառությունը ուշ միջնադարի թուրք հասարակության համար. «Իրենց (թուրքերի) շուկաները հայտնի են միայն այս ապրանքով, որ մշտապես առկա է իրենց մոտ՝ թե՛ իրենց, թե՛ վաճառք, թե՛

<sup>275</sup> Книга законов султана Селима I. Публикация текста, перевод, терминологический комментарий и предисловие А. Тверетиновой, М., 1969, с. 32-33.

<sup>276</sup> R. E. Koçu, Esirler ve esirciler, Tarih mecmuası, İstanbul, 1972, Haziran, Sayı 5, s. 47.

<sup>277</sup> Վ.Ղվեյյան, Ստրկավաճառությունը Օսմանյան կայսրությունում XIX դարում, Արևելագիտության հարցեր, պրակ 3-4, Երևան, 1987, 107-120 էջ: Kömürçyan Y., İstanbul Tarihi, XVII. Asırda İstanbul, İstanbul, 1984, s. 238.



որպես երաշխիք թողնելու, թե նվերի համար»,- գրում էր մի լիտվացի դիվանագետ Ղրիմում<sup>278</sup>:

Եվ նաև որպես ստրուկների աճող կարիքի արդյունք, հատկապես սրընթաց աճի ժամանակաշրջաններում, ինչպես, օրինակ, Բայազեդ I-ի (1389-1402) ու Մեհմեդ II-ի (1451-1481) օրոք, ինչպես նաև այն ժամանակ, երբ ներքին ճգնաժամերի պատճառով ստրուկների ներհոսքը դանդաղում էր, օսմանյան պետությունը զգում էր ստրուկների պակաս: Ուստի այդժամ վերջինս դիմում էր այնպիսի միջոցի, ինչպես նոր գրաված տարածքների ազգաբնակչության զանգվածային ստրկացումն ու տարագրումը և ոչ մահմեդական *ռայա* բնակչությունից «տղաների հարկի» գանձումը<sup>279</sup>: Ընդ որում՝ վերջին դեպքն ամենից շահավետն էր, քանի որ երիտասարդ, հատուկ ընտրված, իրենց սերնդի լավագույն ներկայացուցիչ այս տղաները ստրկական շուկաներում պետք է որ համարվեին լավագույն, ամենից թանկարժեք, հետևաբար՝ ամենաշահավետ ապրանքը: Հիշենք նաև, որ օսմանյան պետությունը ո՛չ մի ներդրում, ո՛չ մի ծախս չի արել այդ «ապրանքը» արտադրելու համար. որպես ծախս կարելի է համարել միայն հավաքի կազմակերպումը: Ուստի, պետական մակարդակի հասնող այս բիզնեսը մեծ եկամուտներ էր բերում սուլթանական գանձարանին, ինչը չէր կարող չշահագրգռել օսմանցիներին դեվչիրմե համակարգը բերել կանոնակարգված տեսքի, իսկ այն խախտողներին ենթարկել տույժերի, որպես պետական շահերը ոտնահարող անձանց:

Այսպիսով, կարող ենք հետևություն անել, որ օսմանյան պետության համար նորանոր արշավանքների

<sup>278</sup> А. Новичев, Рабство в Османской империи в средние века. — Проблемы социальной структуры и идеологии средневекового общества. Вып. 2, Л., 1978, с. 70 цит. по М. Фрейденберг, Дубровник и Османская империя, М., 1989, с. 214.

<sup>279</sup> H. Inalcik, Servile Labor in the Ottoman Empire, Studies in Ottoman Social and Economic History, VII, London, 1985, p. 35.

խթան էր նաև այս յուրահատուկ ռազմավարի առկայությունը. մարդկային ռեսուրս, որն իր ժամանակի ամենաթանկարժեք ու ամենից շուտ վաճառվող ապրանքն էր: Վերջին հանգամանքն էլ մեծ նշանակություն ունեցավ, որպեսզի օսմանյան պետությունը սահմանի «արյան» կամ «տղաների հարկ»՝ դեվչիքմե, նախ՝ որպես ծրի մարդու իր կարիքներն ապահովելու, ապա՝ որպես եկամտաբեր առևտրի պարագա ստրկական շուկայում վաճառքի հանելու համար:

## ՎՈՒՄ ԶՈՐՐՈՐԴ

### ԴԵՎԵԻՐՄԵՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՅԱՆՔՈՒՄ ԵՎ ԱՅՂ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՎԱՐՏԸ

#### *Դեվչիրմեի անցկացումը հայ ժողովրդի մեջ*

XVI դարի սկզբներից մինչև XVII դարի երեսնական թվականների վերջերը, կարճատև ընդմիջումներով, Հայաստանը ռազմական թատերաբեմ էր դարձել իր նվաճումների գագաթը մազլցած Օսմանյան կայսրության և Առաջավոր Ասիայում քաղաքական առաջնության ձգտող Սեֆյան Իրանի միջև:

1512թ. սուլթան Սելիմ Ահեղը մեծ զորք գումարեց և հարձակման անցավ «շիա աղանդավորներին» գլխավորող Իրանի դեմ: 1514թ. թուրքերը Չալդրանի ճակատամարտում պարտության են մատնում շահ Իսմայիլին և գրավում Թավրիզը: Այնուամենայնիվ, պարտված շահը կարողանում է վերականգնել ուժերը և նահանջի հարկադրել սուլթանին:

Հաջորդ տարիներին պատերազմը շարունակվում էր փոփոխակի հաջողություններով: Իրանի սահմանները մերթ-ընդարձակվում էին դեպի հյուսիս կամ արևմուտք, մերթ կծկվում՝ տեղի տալով թուրքերի առաջխաղացմանը: Հայաստանն ու Անդրկովկասը ենթարկվում էին օսմանա-իրանական հարվածներին ոչ միայն որպես պատերազմի թատերավայր, այլև որպես նրանց նվաճումների նշանախեց: Բախվող կողմերը ձգտում էին իրենց հսկողության տակ առնել Հնդկաստանից ու Միջին Ասիայից դեպի փոքրասիական նավահանգիստներ տանող միջազգային առևտրի մայրուղիներն ու Մերձավոր Արևելքի իշխող դիրքերը՝ Թավրիզը, Երևանը, Էրզրումը և Թոքաթը՝ մի կողմից, Կասպից, Սև և Միջերկրական ծովերը հանգուցավորող առևտրի ու հաղորդակցության ճանապարհներն ու

քաղաքային հանգրվանները՝ Թիֆլիսը, Գանձակը, Շամախին և Դերբենդը՝ մյուս կողմից<sup>280</sup>:

Մասնագետներն այս պատերազմները բնորոշում են որպես պայքար Մերձավոր Արևելքի առևտրական ճանապարհների և առևտրի գլխավոր առարկայի՝ հում մետաքսի համար: Պետք է նշել, սակայն, որ Թուրքիային մտահոգողը Հայկական բարձրավանդակի ռազմավարական կարևորությունը կամ մետաքսի արտադրության գլխավոր կենտրոններին տիրելը չէր միայն, այլև աշխատունակ բնակիչներին գերեվարելը, Ստամբուլի և Եգիպտոսի շուկաներում նրանց վաճառելն ու գանձած ոսկիներով սուլթանական բանակի և արքունիքի ծախսերը հոգալու ձգտումը:

1533-1535թթ. Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև մղվող պատերազմական գործողությունները վերջացան առանց լուրջ արդյունքի: Օսմանյան կայսրությանը ոչ միայն չհաջողվեց վճռական հարված հասցնել Իրանին, այլև, բացառությամբ Բարձր Հայքի (Դերջան, Էրզրում<sup>281</sup> և Կարս), ամբողջ Արևմտյան և Հարավային Հայաստանը շարունակում էր մնալ քրդլուրաշների ձեռքում: Ամենավիճառ շարժառիթը կարող էր խանգարել ժամանակավոր զինադադարը, և այդ առիթը շուտով ներկայացավ: 1538թ. ապստամբական վիճակում էին Իրանի անդրկովկասյան տիրույթները: Թեև շահի հրամանով նրա եղբայր Ալխազ Միրզան 1545-1546թթ. նվաճեց Շիրվանը, սակայն միացավ Իրանին դիմադրող ֆեոդալներին և ապստամբություն բարձրացրեց իր եղբոր՝ շահ Թահմազի դեմ: Շահի կողմից ապստամբության ճնշումից հետո Ալխազ Միրզան

<sup>280</sup> Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում, XIV-XVIII դդ., Երևան, 1972թ., էջ 81-82:

<sup>281</sup> Էրզրումն ու Կամախը դեռ 1473թ. Դերջանի ճակատամարտով գրավել է Սեմեդ II-ը (Երեմիա Քեոմիլոճեան, Պատմութիւն համառոտ Դճ տարւոյ օսմանցոց թագաւորացն, աշխատասիրությամբ՝ Ժ.Ավետիսյանի, Եր., 1969, էջ 309):

անցավ Օսմանյան կայսրություն և օգնեց օսմանցի թուրքերին վերագրավել Վանն ու Վասպուրականը, ինչով վերսկսվեց պատերազմական իրավիճակը<sup>282</sup>:

1555թ. պատերազմող կողմերն Ամասիայում հաշտություն կնքեցին: Չնայած նախընթաց քառասնամյակում պատերազմը ավերիչ ընթացք էր ունեցել թե՛ Իրանի և թե՛ Օսմանյան կայսրության համար, այսուհանդերձ, հիմնականում անխախտ մնաց նրանց ուժերի հարաբերակցությունը: Հաշտության պայմանագիրը գրեթե վերականգնում էր կռվող կողմերի հին սահմանները: Օսմանցիները ստացան միայն Արևմտյան Հայաստանի մեջ մտնող Վասպուրականն ու Ալաշկերտի հովիտը և Արևմտյան Վրաստանը: Օսմանա-իրանական սահմանագիծը էական փոփոխություններ չկրեց նաև հաջորդ պատերազմներից հետո<sup>283</sup>:

Օսմանցիների ծավալման դեմ որքան ուժեղանում էր քրիստոնյա երկրների (Ավստրիայի և Հունգարիայի) դիմադրությունը Կենտրոնական Եվրոպայում, այնքան նրանք սկսում էին ակտիվանալ ասիական սահմանագծերում: Անդրկովկասի զավթումը թուրքերի համար հրատապ էր դառնում մանավանդ այն պատճառով, որ տիրանալով Կազանին ու Աստրախանին՝ ռուսները մտնում էին Հյուսիսային Կովկաս և ամրություններ կառուցում Թերեքի գետաբերանում: 1578թ. օսմանցիները գրավեցին Շիրվանը և մտան Դերբենդ: Երկու տարի անց նրանք խուժեցին Ղարաբաղ, գրավեցին Երևանն ու հասան Գեղարքունիք<sup>284</sup>:

XVI դարի հայ աղբյուրները վկայում են «դեվլչիր-մեի»՝ պարբերաբար կրկնվող «տղայաժողովների» մասին:

Սակայն մենք փաստ ունենք նաև այն մասին, որ հայերից մանկահավաք կատարվել է դեռևս 1464թ.: Այդ մասին մի ձեռագրի հիշատակարաններից մեկում ասված է հետևյալը.

<sup>282</sup> Հայ ժողովրդի պատմություն..., էջ 83:

<sup>283</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>284</sup> Նույն տեղում, էջ 86:

«...Իսկ անարևն արքայն տաճկաց ժողովեաց զքրիստոնէից մանկունսն և եբեր Ըստամայօլ, իսկ եպիսկոպոսն եկեալ ի հետ մանկանցն և եբեր զթուղթ ազատութեան հայոց, իսկ անարևն արքայն ոչինչ համարեցաւ զթուղթն»<sup>285</sup>.

XVI դարում առաջին մանկահավաքի դեպքը տեղի է ունեցել Չալդրանի ճակատամարտից մի քանի տարի հետո: Անանուն Սեբաստացու ժամանակագրության մեջ կարդում ենք. «...Ի թիւն ԶԿԸ (1519թ.) բարկութիւնն աստուծոյ սաստկացաւ և սուլդան Սէլիմն տղայ ժողեց ի քրիստոնէից»<sup>286</sup>: Սելիմ սուլթանին որպէս մանկահավաք սահմանող հիշատակում է նաև XVII դարի հեղինակ Վարդան Բաղիշեցին («...և նստաւ ինքն թագաւոր սուլթան Սէլիմ ամս տասներեք, որ սահմանեաց զտղայքն ժողովել»<sup>287</sup>):

Մանկահավաքի հաջորդ փաստագրումը վերաբերում է 1531 թվականին՝ համաձայն Անանուն Սեբաստացու XVI դարի ժամանակագրության, թե «...Ի թիւն ԶԶ (1531) տղայ ժողեցին ի քրիստոնէից...»<sup>288</sup>, կամ էլ 1531 թվականի մի ձեռագրի հիշատակարանի («Թիւն ԶԾ (=1531) Սուլթան Սուլեյմանն..., ենիչարա համար տղայ ժողեց ի հայոց ազգէս...»<sup>289</sup>):

Այսպես, ինչպես նշեցինք, երկար տարիներ Հայաստանը եղել է պատերազմական դաշտ Իրանի ու Օսմանյան կայսրության միջև: Արևմտյան Հայաստանը օսմանցիների համար ռազմադաշտ էր, և հետևաբար՝

<sup>285</sup> Լ. Խաչիկյան, Ժե դարի 2-րդ կեսի հիշատակարանները, չիրատարակված, էջ 302, մեջբերում ըստ Մ.Զուլայյան, «Դեվչիմեն» (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, ՊԲՀ, Երևան, 1959, #2-3, էջ 250:

<sup>286</sup> Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. Ա, Երևան, 1951, էջ 169:

<sup>287</sup> Գ. Աղանջյան, Դիվան հայոց պատմության, գիրք Ժ, էջ 71:

<sup>288</sup> Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 169:

<sup>289</sup> Մ. Զուլայյան, նշվ. աշխ., էջ 251:

հայերը գերված ժողովուրդ էին, որոնց մեկ հինգերորդը պատկանում էր սուլթանին: Այսպիսով, օսմանյան պետությունն այդ ընթացքում ենթակա հայ ազգաբնակչությունից հավաքում էր դեվչիրմե, իսկ պատերազմական տարածքներում բնակվող հայերից՝ փենջիջ:

Միջայել Չամչյանցը նշում է, որ սուլթան Սելիմը բազում հայ գերիներ է վարել Թավրիզից՝ ժողովելով քաղաքի բոլոր հայ արհեստավորներին ու տանելով նրանց Ստամբուլ<sup>290</sup>: Թեև ժամանակագիր Երեմիա Քյոմուրճյանը չի նշում, որ տարագրյալները հայեր են (...Յարհեստաւոր հնարագործաց էառ և յԻսթամպօլ յղեալ<sup>291</sup>), սակայն Գ. Այվազյանի (Այվազովսկու) մոտ կարդում ենք, որ դրանք եղել են «արուեստագէտ ճարտարս հազար, յորս յոլովք էին ի մերմէ ազգէ<sup>292</sup>», իսկ համաձայն ճանապարհորդ Էվլիյա Չելեբիի՝ Թավրիզը եղել է հայաշատ քաղաք, և ըստ նրա չափազանցված վկայության՝ հայերն ունեցել են 42 եկեղեցի<sup>293</sup>:

Սխալ կլինի, սակայն, անտեսել նաև այն հայ երիտասարդներին, որոնց, այնուամենայնիվ, հաջողվել է օգտագործել դեվչիրմե համակարգի ընձեռած կարիերայի այն հնարավորությունները, որոնց մասին այդքան թմբկահարում են թուրք պատմաբանները:

Տեղին ենք համարում նշել Հալիլ փաշայի կարիերայի աճի կարճ պատմությունը:

Հալիլ փաշան համակարգ մտել է դեվչիրմեի միջոցով: Մուրադ III-ի օրոք Ռումելիի բեյլերբեյի Դողանջը

---

<sup>290</sup> Մ. Չամչյանց, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), Երևան, 1984, հատոր Գ, էջ 511:

<sup>291</sup> Երեմիա Քեօմիւրճեան, Պատմութիւն համառոտ Դճ տարւոյ օսմանցոց թագաւորացն, էջ 129:

<sup>292</sup> Գ. Այվազյան, Պատմութիւն Օսմանեան պետութեան, հատ. Ա, Վենետիկ, 1841:

<sup>293</sup> Էվլիյա Չելեբի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 263:



Մեհմեդ փաշայի կրտսեր եղբայրն է<sup>294</sup>: Այսինքն՝ մարաշահայ այս ընտանիքից վերցվել է նվազագույնը երկու տղա:

Նրա եղբայր Մեհմեդ փաշան, ամենայն հավանականությամբ, դարձվել էր իչ օղլան: Սրա օգտին է խոսում թե՛ այն, որ Մեհմեդ փաշան ստացել էր վարչական պաշտոն՝ բեյլերբեյի, թե՛ նրա մականուն «Դողանջը»-ն, որն իչ օղլանների «բազեպանների խցի» օսմաներեն տարբերակն է (doğancı koğuşu), այսինքն նա ավարտել էր իչ օղլանների այդ «ուսումնամասը»: Մեհմեդ փաշայի իչ օղլան լինելու մասին է խոսում նաև այն, որ վերջինս հիշատակվում է որպես Մուրադ III-ի ամենաազդեցիկ մերձավորը<sup>295</sup>, ընդ որում՝ նշվում է «մուսահիբ» եզրը, որը կիրառվում էր իչ օղլանների նկատմամբ:

Հալիլ փաշան չորս անգամ նշանակվել է ծովակալ և երկու անգամ՝ մեծ վեզիր:

Ենիչերիների աղայի պաշտոնից 1608-1609թթ. (1017թ. ըստ հիջրայի) նշանակվել է ծովակալ<sup>296</sup>: Նույն Ահմեդ I-ի օրոք է եղել նրա ծովակալության երկրորդ ժամանակահատվածը՝ 1613թ. (1022թ. ըստ հիջրայի) մինչև 1616 (1025թ. ըստ հիջրայի)<sup>297</sup>:

Ծովակալի պաշտոնից նշանակվել է մեծ վեզիրի պաշտոնի 1616թ. (1025թ. ըստ հիջրայի): Պաշտոնավարել է երեք սուլթանների օրոք՝ Ահմեդ I, Մուստաֆա I, Օսման II՝ մինչև 1619թ. (1028թ. ըստ հիջրայի)<sup>298</sup>: Օսման II-ի օրոք կրկին նշանակվել է ծովակալ՝ այս անգամ մեկ տարի ժամանակով՝ 1619թ. (1029թ. ըստ հիջրայի) մինչև 1620-1621թթ. (1030թ. ըստ հիջրայի): Կարճաժամկետ

<sup>294</sup> P. Incicyan, XVIII. Asırda İstanbul, tercüme ve tahşiye eden H. Andreasyan, İstanbul, İstanbul matbaası, 1956, s.106.

<sup>295</sup> İ.H Danişmend., İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi, 3. cilt, İstanbul, 1950, s. 112.

<sup>296</sup> Նույն տեղում, էջ 545:

<sup>297</sup> Նույն տեղում, էջ 546:

<sup>298</sup> Նույն տեղում, էջ 501:

ընդմիջումից հետո վերանշանակվում է ծովակալի պաշտոնին վերջին՝ չորրորդ անգամ՝ 1621թ. (1030թ. ըստ հիջրայի) մինչև 1623թ. (1032թ. ըստ հիջրայի):

Երկրորդ անգամ մեծ վեզիրի պաշտոնին է նշանակվել 1626թ. (1036թ. ըստ հիջրայի) և Մուրադ IV-ին ծառայել է մինչև 1628թ. (1037թ. ըստ հիջրայի)<sup>299</sup>: Այսպիսով, ընդհանուր առմամբ մեծ վեզիրի պաշտոնում եղել է 3 տարի, 7 ամիս<sup>300</sup>:

\*\*\*

Կարևոր է նշել այն անհերքելի փաստը, որ մանկահավաքները հայկական նահանգներում Բալկանյան երկրների համեմատ, սկսվել են ավելի ուշ և կատարվել ավելի քիչ, քան Բալկաններում: Այսպես, ըստ մանր ժամանակագիրների տվյալների, հայկական մանկահավաքները կատարվել են 1464, 1519, 1531, 1536, 1543, 1547, 1550, 1590, 1622 թվականներին<sup>301</sup>:

Այս երևույթը դարձյալ պետք է բացատրել նրանով, որ Օսմանյան կայսրության ասիական մասում օսմանցիների վիճակը համեմատաբար ավելի կայուն էր, քանի որ դեռ XII դարից թյուրքական զանազան ցեղերի Փոքր Ասիա ներթափանցելու հետևանքով այստեղ թուրքերն արդեն կազմում էին տեղի ազգաբնակչության զգալի մասը: Մինչդեռ Բալկաններում թուրքերը մեծ ջանք պետք է դնեին զանազան մեթոդներով երկրին իսլամական կերպարանք տալու համար: Արևմտյան Հայաստանում թուրքերը այդպիսի ջանքերի կարիք չունեին, քանի որ սուլթանական կառավարությունը որպես մշտական հսկողություն օգտագործում էր քուրդ ֆեոդալների ռազմական ուժը: Հենց դրանով պետք է բացատրել այն կարևոր հանգամանքը, որ մանկահավաքներ եղել են գերազանցապես բուն Հայաստանից դուրս՝ անդրեփրատյան հայաշատ քաղաքներից: Որ

<sup>299</sup> Նույն տեղում, էջ 504:

<sup>300</sup> Նույն տեղում, էջ 505:

<sup>301</sup> Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, էջ 169-171:

բուն Հայաստանից ևս կատարվել են մանկահավաքներ՝ վկայում է 1531 թվականի մի ձեռագրի հիշատակարանը. «Թւին ԶԾ (=1531) Սուլթան Սուլեյմանն՝ որ է Սելիմի տղայն,- ասված է հիշատակարանում,- ենիչերա համար տղայ ժողւեցին՝ ու զապագայն Աստուծոյ է գիտելի. ի Տրապիզոնու. ի Համշենու. ի Սպերու. ի Բաբերդու. ի Դերջանա. ի յերզնկա. ի Կամխա. ի յԱշխարհովիս.. (մի քանի քաղաքների անունները չեն կարդացվում,- գրում է հիշատակարանի հավաքող Ղ. Փիրզալեմյանը). Տիվրիկա... մինչև ի Կան ի ծովափն զխեղճն և զաղետ ծնողացն ով կարէ պատմել»<sup>302</sup>.

Հրովարտականերից երևում է, որ մանկահավաքը կատարվում էր Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գավառներում: Երեխաներ հավաքում էին անգամ Կամախի, Գյումուշխանեի, Շապին-Գարահիսարի հանքերում աշխատող հայ և հույն հանքափոր բանվորներից, որոնք ծանրագույն աշխատանք տանելու պատճառով ազատված էին որոշ ընդհանուր հարկերից<sup>303</sup>.

Մաղաքիա Դերջանցին երկու անգամ՝ 1531թ., 1543թ., մեկնում է Կ.Պոլիս՝ Կամախի, Դերջանի և Բաբերդի գավառներում մանկահավաքը խափանելու նպատակով:

Ինչպես երևում է, Դերջանցուն երկրորդ անգամ հաջողվում է Պոլսում սուլթանից գրությամբ ստանալ ու խափանել մանկաժողովը վերոհիշյալ գավառներում<sup>304</sup>:

Ինչպես երևում է Գ.Դարանաղցու վկայությունից, Մ.Դերջանցին հանձն է առնում մանկահավաքի փոխարեն հատուկ հարկ տալ սուլթանական կառավարությանը՝

<sup>302</sup> Մ. Չուլալյան, նշվ. աշխ., էջ 251:

<sup>303</sup> I.H. Uzunçarşılı, Kapıkulu ocakları..., s. 97.

<sup>304</sup> Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Պէրուք, տպ. Սեւան, հատոր Բ, 1960, մաս 1, էջ 2238: Մ. Չամչյանց, նշվ. աշխ., հատոր Գ, էջ 513:

«օղլանջի ստակ» անվան տակ: Այդ մասին Ղարանաղջին գրում է.

«Եւ այդ ասեն, թե տղայժողովն, որ եղև ի սուլթան Սելիմի աւուրսն, նա զնաց վարդապետն ի յըՍտամպոլ, այնքան տքնութիւն արար ի դրունս արքային եւ ժողութիւն արար, մեծ ստիպով խնդրեաց տեսանել զերեսս արքային մինչ ծանուցին թագաւորին և նա կոչեաց առ ինքն և եհարց ցվարդապետն. Ջինչ խնդրես... ասէ վարդապետն. եթէ գտի շնորհս առաջի քո, նա կամ է զՀարուլումի (Կարնո) տղայ ժողովելն ինձ օժիտ այնես և ի տեղի ին տղայոցն սակաւ հարկս դնես: Եւ հաճոյ թուեցաւ թագաւորին, հրամայեաց այնպես լինել, որ կուգայր տղայոց ժողովն մինչև ի Սևաստ, և անտից դառնայր և ոչ գայր ի մեզ, եւ զիտեմք, որ երեք տարին անգամ մի կուգայր հարկահանն տղայ, ժողովին, որ օղլանջի ստակ ասէին»<sup>305</sup>:

### *Ղեվձիրմեի ավարտը*

Ղեվձիրմեն գործածության մեջ էր ողջ XVI դարի ընթացքում, կան նաև բազում փաստաթղթեր, որոնք վերաբերում են նաև XVII դարի առաջին կեսին: Ենիչերի-ական զորամասերի, ինչպես նաև ստրկական համակարգի այլ պահանջների համար ղեվձիրմեի հավաքագրման մասին փաստերը նոսրանում են XVII դարի երկրորդ կեսի վերաբերյալ փաստաթղթերում: Սա գրականության մեջ տեղիք է տվել այն կարծիքի, որ այդ դարի կեսերին ղեվձիրմե ինստիտուտը վերացվել է: Պ.Ռիկոն պնդում է, որ այն վերացվել է Մուրադ IV-ի (1623-1640թթ.) կառավարման վերջին տարիներին<sup>306</sup>: Համաձայն Մ.Ջուլայյանի՝ 1637 թվականից հետո ընկած ժամանակաշրջանի պատմությունը նկարագրելիս թուրք պատմագիրներից ոչ Նաիման, ոչ

<sup>305</sup> Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախէցոյ կամ Ղարանաղջոյ, Երուսաղեմ, 1915, էջ 304-341, մեջբերում ըստ Ս. Ջուլայյան, նշվ. աշխ., էջ 254:

<sup>306</sup> P. Ricaut, Histoire de l'etat present de l'Empire ottoman, Paris, 1676, p.592.

Ուաշիդը, ոչ էլ մեկ ուրիշը չեն հիշատակում դեվչիրմեի փաստը<sup>307</sup>: Յ. ֆոն Համերը նշում է որպես դեվչիրմե հավաքելու վերջին տարեթիվ 1685թ.<sup>308</sup>: Համաձայն Ի.Մորդմանի, չնայած այն բանին, որ 1651թ. մեծ վեզիրը խոստացել էր ապստամբ ենիչերիներին, որ զորաբանակ կհավաքագրվեն իրենց որդիները, մոտակա տասնամյակների ընթացքում դեվչիրմեն շարունակվել է: Նա կարծում է, որ վերջին մանկահավաքը տեղի է ունեցել համաձայն սուլթան Ահմեդ III-ի հրովարտակի՝ 1703 թվականին<sup>309</sup>: Իրոք, 1666թ սուլթան Մեհմեդ IV-ը *ֆերման* է հռչակում (*Ումմելիայի*<sup>310</sup>) բոլոր *քազաներից* ենիչերիական զորաբանակ տղաներ հավաքելու վերաբերյալ<sup>311</sup>: Հարկը շարունակում էին հավաքել նաև դարավերջին, ինչը ցույց են տալիս երկու փաստաթուղթ, որոնք մեզ են հասել շնորհիվ Յ.Վազդրավելիի, որը հրապարակել է Նեզուշ քաղաքի գրանցամատյանը (սիջիլ): Դրանցից առաջինը 1689թ. փետրվար ամսի մի *ֆերման* է, որով որպես դեվչիրմե Սոլունսկից հավաքած աջեմի օղլաններին հրամայում է ուղարկել որպես Հալբիդիք ամրոցի պահապաններ: Երկրորդը, որը տրվել է նույն ամսվա վերջին, հրամայում է Օդրինի ճամբարում ժողովել տարբեր տեսակի զորախմբեր, որոնց շարքում նաև աջեմի օղլաններ, որոնք հավաքագրվել են որպես «արյան հարկ»<sup>312</sup>:

Սուլթանական *ֆերմանները*, ինչպես նաև այլ փաստաթղթեր, ցույց են տալիս, որ 1705թ. Նեզուշում ու նրա շրջակայքում տղայաժողով է տեղի ունեցել, որը տեղացի քրիստոնյա բնակչության խռովության պատճառ է հան-

<sup>307</sup> Մ.Ջուլայան, նշվ. աշխ., էջ 255:

<sup>308</sup> J.v Hammer, Des osmanichen reiches Staatsverfassung und Staatsverwaltung, Bd. I. Wien, 1815, p.91.

<sup>309</sup> J. Mordtman, Dewschirme. Enczyklopadie des Islam, Bd. I, Leiden-Leipzig, 1913, p.993.

<sup>310</sup> Ц.Георгиева, Еничарите в българските земи..., с. 76.

<sup>311</sup> По следите на насилието..., с. 248.

<sup>312</sup> Ц. Георгиева, Еничарите в българските земи..., с. 76.

դիսացել<sup>313</sup>: 1711թ. մի բուլղարական հիշատակարանում պատմվում է, թե ինչպես է օսմանյան իշխանությունը հավաքում 12-ամյա տղաների<sup>314</sup>: Ակնհայտ է, որ չնայած հիշատակումների նոսրության, դեվչիրմեն հանկարծակի չի անհայտացել, այլ իր մահն է ապրել տասնամյակներ շարունակ: Ի.Հ.Ուզունչարշլըն նաև 1747թ. վերագրվող դեվչիրմեի հավաքագրման փաստ է ներկայացնում<sup>315</sup>, որը մենք կարող ենք համարել այդ հարկի հազվադեպ թեցիդիվ, որը շատ սահմանափակ էր ու վերաբերում էր բնակչության մի փոքր մասի:

Այսպիսով, Օսմանյան կայսրությունում դեվչիրմեն սկիզբ է առնում XIV դարավերջից ու հասնում մինչև XVIII դարի սկիզբը՝ տևելով ավելի քան 3 հարյուրամյակ: Երեք դարի ընթացքում գլխատվել է քրիստոնյաների մոտ 50 սերունդ: Դեվչիրմեի միջոցով իրականացվում էր քրիստոնյաների պարբերական հավաքագրումը ենիչերիական գործեր: Քանի որ օսմանցիներն իրենց իշխանությունը ամենավաղը հաստատել են Եվրոպայում, ու երկար ժամանակ Բալկանները եղել են մայրաքաղաք Ստամբուլի հինթերլանդը, ապա, բնականաբար, բալկանյան ժողովուրդներն են եղել ենիչերիական զորաբանակի հիմնական մասը: Սակայն ամեն դեպքում չպետք է անտեսել նաև այլ քրիստոնյա ժողովուրդներից, այդ թվում նաև հայերից, մանկահավաքների անցկացման իրողությունը:

\*\*\*

Դեվչիրմեի վերացումը, բացի բանակի կառուցվածքի վրա իր բացասական ազդեցություններից, որոնց մասին արդեն խոսվել է, ներգործեց նաև վարչատարածքային կառավարման վրա: Ազդեցություն էր գործել նաև կենտրոնական վարչակարգի վրա՝ հիմնականում բարձր պաշտոնների թիվը բազմապատկելով ու

<sup>313</sup> По следите на насилнето..., с. 253-254.

<sup>314</sup> Նույն տեղում, с. 255.

<sup>315</sup> I.H. Uzuncarslan, Karikulu ocakları..., s.69.

այդ պաշտոններին բարձրացնելով այնպիսի անձանց, որոնք հին օրերի խիստ կրթությունը չէին ստացել ու պետական ապարատում վեր էին բարձրանում շողոքորթության ու կաշառակերության շնորհիվ<sup>316</sup>:

Կարելի է վիճել, թե որն էր դեվչիրմեից հրաժարվելու ամենավատ հետևանքը. ազատ ծնված, ամուսնացած ենիչերիների անկո՛ւմը, թե՛ այն, որ պետության քաղաքացիական պաշտոններն այլևս բաց էին նրանց համար, ովքեր լավագույնս կարող էին բանսարկել և կամ առաջարկել ամենաբարձր զինը<sup>317</sup>:

<sup>316</sup> H.A.R. Gibb, H. Bowen, *Islamic Society and the West...*, p. 197.

<sup>317</sup> *A history of the Ottoman Empire to 1730*, V.J. Parry, H. Inalcik, A. N. Kurat and J. S. Bromley, Cambridge, London, New York, Melbourne, 1976, ed. M. A. Cook, p.187.

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ դեվչիրմեն Օսմանյան կայսրության համար ծառայում էր որպես մարդկային ռեսուրսների կառավարման լծակ: Ինչպես նշել ենք, թուրքերը լայնատարած նվաճումների արդյունքում հայտնվեցին փոքրամասնության մեջ և սխալ քաղաքականության դեպքում պարզապես կծուվեին տեղացի ժողովուրդների մեջ՝ որպես հետք թողնելով, թերևս, իրենց անունը և կամ մի քանի աշխարհագրական անուններ:

Օսմանցի թուրքերը չունեին նույնիսկ բավարար քանակությամբ ռազմական ուժ նորանոր նվաճումների համար, մարդկային ռեսուրսներ՝ զրաված տարածքներում սեփական վարչակարգ կազմակերպելու համար: Ինչպես նշում է պատմաբան Ա.Թոյնբին, «էրթողուլի որդի Օսմանի մի խումբ քոչվորներ չէին կարող կառուցել կայսրություն առանց մշտապես իրենց թիվն ավելացնելու»<sup>318</sup>:

Ռազմուժի կարիքը բավարարվում էր մահմեդականների սրբազան պատերազմի՝ ջիհադի կամ դազավաթի քաղաքականությամբ, որն անհավատների դեմ կռվելու համար օսմանյան բանակ էր բերում տասնյակ հազարավոր ռազմաշունչ ու կրոնամոլ զինյալների: Սակայն վերջիններս, լինելով կենտրոնական իշխանությունից այս կամ այն աստիճանի անկախ, հաճախ անկանխատեսելի էին, անկառավարելի, ուստի և անհուսալի: Օսմանյան պետությունը կարիք ուներ սեփական մարտունակ բանակի, որի համար, սակայն, չկար անհրաժեշտ քանակությամբ մարդկային ռեսուրս, ինչպես նաև ժամանակ:

(Մահմեդական աշխարհում տարածված երևույթ էր ռազմագերիների օգտագործումը բանակում: Համաձայն Ղուրանի՝ տիրակալին, իմա՝ պետությանն է պատկանում ռազմավարի մեկ հինգերորդ մասը (փեննջիք), իսկ

<sup>318</sup> A. Toynbee, *The Ottoman Empire's Place in World History*, in *The Ottoman State and Its Place in World History*, ed. by K.Karpat, Leiden, E.J.Brill, 1974, p.23.



հայկական, բյուզանդական և այլ քրիստոնյա տարածքներում թուրք հրոսակների ու զինյալ խմբերի ռազմավարի հիմնական տարրն էր կազմում այդ ժամանակ բավականին պահանջարկ ունեցող ապրանք՝ ստրկացված ռազմագերիներ: Այսպիսով, օսմանցիները սկսեցին կազմավորել զինյալ ջոկատներ, որոնք համալրվում էին մահմեդականացված ռազմագերիներով, որոնց մի մասը նախկինում թշնամական կողմի զինվորներն էին, այսինքն՝ նույնիսկ կարիք չունեին ռազմական գործի հետ նախնական ծանոթության: Այս փենջիքից ստացված ստրուկներից կազմավորվեց ենիչերիական զորաբանակը, որն արդեն դարձավ օսմանյան պետության վստահությունը վայելող զորատեսակը և որը դուրս մղեց նախորդներին:

Այս մեթոդը սկզբնական ժամանակում բավարարում էր օսմանյան պետության կարիքները: Հետագայում, սակայն, այն կատարելագործվեց, քանի որ անընդհատ ընդլայնվող զավթումների քաղաքականությունը ռազմական ուժի անընդհատ աճ էր պահանջում, իսկ փենջիքը չէր հասցնում մատակարարել բավականաչափ ռազմուժ: Բացի այդ, նոր պայմաններում հնարավոր չէր անսահմանափակ գերել գրավյալ տարածքների ազգաբնակչությանը, քանի որ օսմանյան պետության քաղաքականությունը այլևս հարևան քրիստոնյա երկրների զուտ կողոպուտը չէր: Հողերի ամայացումն այլևս ձեռնտու չէր օսմանցիներին, քանի որ դրանք ավելի դյուրին կլինեի հետ գրավել: Բացի այդ, օսմանցիներն ուզում էին ստեղծել կենտրոնաձիգ պետություն, որը կունենար ամուր կառուցվածք, ինչի հիմնատարրերից մեկը, անշուշտ, կայուն տնտեսությունն էր՝ գյուղատնտեսությունը, որն անհնար էր առանց աշխատուժի: Այսպիսով, օսմանցիները, փոխելով իրենց ընդհանուր քաղաքականությունը, փոփոխություններ պետք է մտցնեին նաև մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության մեջ. այլևս չէր կարելի ողջ ռեսուրսներն ուղղել ռազմուժի կարիքների բավարարմանը, այլ պետք էր ուշադրություն դարձնել նաև աշխատուժի վրա: Կենտրոնա-

ծիզ պետությունն ստեղծելու համար՝ վարչական ապարատ, սուլթանի արքունիք և այլն, մշտական ու կայուն ծախսեր էին հարկավոր, որոնց համար չէր կարող բավարար լինել գերիների վաճառքից եկող ոչ մշտական եկամուտը: Պետք էր ապահովել կայուն եկամուտ հարկերի միջոցով, որոնք հավաքվելու էին հպատակ ժողովուրդներից: Այսպես, հակառակ ռազմական հաջողություններին ու տարածքային ընդարձակմանը՝ ռազմագերիների ներհոսքը զգալիորեն պակասեց, ինչի հետևանքով աղքատացավ ռոճիկ ստացող օսմանյան հետևակի համալրումը:

Հենց այստեղ էլ ծնունդ առավ օսմանցիների կիրառած նոր մոտեցումը, որը մեծ փոփոխություն բերեց մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունում: Օսմանցիները ներմուծեցին դեվչիրմե ինստիտուտը, որը կրում էր սկզբում սպորադիկ, այնուհետև համատարած բնույթ: Օսմանյան պետության տարածքներում բնակվող քրիստոնյաներից պարբերականորեն հավաքվում էին արական սեռի երիտասարդ ներկայացուցիչներ, որոնց կրոնափոխում էին, ուսուցանում ռազմարվեստ և պատրաստում որակյալ ռազմական կադրեր: Այսպիսով չէին տուժում անհատ ավատատերը և գյուղատնտեսությունն ընդհանուր առմամբ, քանի որ չէր ամայանում հարկվող շրջանի բնակչությունը, այլ տանում էին միայն պատանիների մի մասին, իսկ բանակը շահում էր՝ ստանալով տվյալ շրջանի լավագույն կադրերը:

Դեվչիրմեն օսմանյան պետության համար դրականորեն տարբերվում էր փենջիքից նաև մեկ շատ կարևոր տեսանկյունից. փենջիքի ժամանակ օսմանյան պետությունը ստիպված բավարարվում էր այն մարդկային ռեսուրսներով, որոնք գերի էին ընկել, այսինքն՝ չունեին ընտրության համեմատաբար լայն հնարավորություն, մինչդեռ դեվչիրմեի դեպքում այդ ընտրությունը մեծ դեր էր կատարում, ինչը մեծապես բարձրացնում էր մատակարարվող մարդուժի որակական հատկանիշները:

Պետությունը հետապսու արդեն հնարավորություն ստացավ կառավարել իր ռազմուժի մատակարարումը՝ կարիքի դեպքում խտացնելով կամ նոսրացնելով դեվչիրմե հավաքների պարբերականությունը և կամ քանակական չափաբաժինը:

Սույն ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ դեվչիրմեով հավաքվածների թիվը քանիցս գերազանցում էր ենիչերիական զորաբանակի, ինչպես նաև վարչական ապարատի կարիքները: Ավելորդ մարդկային ռեսուրսներն օգտագործվում էին հիմնականում որպես ձրի, ստրկական աշխատանքային ուժ. հավաքված երիտասարդների մեծ մասը ուղարկվում էր աշխատելու այն ամայի տարածքներում, որոնք տրվել էին իրենց ավատատիրոջը՝ որպես պայմանական կամ այլ տիպի տիրույթներ: Այնտեղ նրանք վերադառնում էին իրենց նախկին կարգավիճակին՝ աշխատանքային ուժ, սակայն այլևս ոչ որպես հարկատու գյուղացի, այլ՝ ստրուկ: Դեվչիրմեն, փաստորեն, նաև աշխատուժի վերաբաշխման մեկ այլ հարմար եղանակ էր կառավարող վերնախավի համար: Մարդուժով առավել հարուստ տարածքներից հավաքում էին որոշ քանակությամբ աշխատուժ և ուղարկում մարդուժով համեմատաբար աղքատ, հետևաբար՝ թույլ գյուղատնտեսություն ունեցող վայրեր: Երկրորդ ջանալով ապահովել պետության ողջ տարածքում համեմատաբար հավասար զարգացում, ինչը կատարում էր նաև կայունացնող գործառույթ տնտեսության, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, ներքին քաղաքական իրավիճակի վրա:

Դեվչիրմեից բացի, գոյություն ուներ աշխատուժի նման վերաբաշխման նաև մեկ այլ մեթոդ՝ բռնագաղթը: Այս դեպքում առավել հարուստ շրջանից ամբողջ գյուղեր էին բռնագաղթեցվում աղքատ կամ նոր գրավված տարածքներ՝ դրանք ուղքի կանգնեցնելու համար, ինչպես դա արվեց, օրինակ, Կիպրոսի գրավումից հետո: Այս մեթոդի արդյունավետությունը, սակայն, դեվչիրմեի համեմատ ցածր էր, քանի որ խախտվում էր գյուղի, ընտանիքների ենթակառուց-

վածքը, որը նրանք կերտել էին տասնամյակներով և ինչը շատ բարդ էր արագ վերականգնել, ուստի բռնագաղթված ընտանիքների մեծ մասն ամեն զնով աշխատում էր վերադառնալ նախկին տարածքներ: Դեվշիրմեի դեպքում այս միտումը համեմատաբար ցածր էր, քանի որ պատանիները նախ բավականաչափ երիտասարդ էին, որպեսզի ինքնուրույն կարողանային գտնել հետդարձի ճանապարհը և այն անցնել: Բացի այդ, կրոնափոխված պատանիները, տեղի տալով տարիքային հոգեբանությանը, ժամանակի ընթացքում վարժվում էին իրենց նոր կարգավիճակին ու չէին էլ պատկերացնում ելք այդ իրավիճակից: ]

[ Բացի վերոշարադրյալ տնտեսական օգուտներից, դեվշիրմեն պետության գանձարանը (ինչպես նաև պաշտոնյաների գրպանները) լցնում էր դրամով, ինչը ևս կարևոր նախապայման էր այդ համակարգի երկարատև կյանքի համար:

Տղաներին գյուղեր աշխատելու ուղարկելիս պետությունը ոչ միայն վաճառում էր նրանց ավատատերերին, այլև շատ հաճախ նրանց պարգապես վարձով էր տալիս: ] Տղաների համար հավաքվող գումարը մեկ անձի հաշվով չնչին էր, սակայն մեծ գումար էր կազմում՝ հաշվի առնելով նրանց բազմաքանակությունը: Այսպիսով, եկամտի առաջին ուղին էր հավաքված տղաների վարձակալումը:

[ Եկամտի երկրորդ աղբյուրը *դեվշիրմենների* ուղղակի վաճառքն էր որպես ստրուկներ օսմանյան մայրաքաղաքի կամ այլ քաղաքների ստրկական շուկաներում: ] Ստրուկներն այդ ժամանակաշրջանում, թերև, ամենից լավ վաճառվող ապրանքատեսակն էին: Ուստի, դեվշիրմեն կամ «արյան հարկը», ինչպես այն անվանում են սլավոն հետազոտողները, կարելի է դիտարկել նաև որպես պետության գանձարանը լցնող հարկատեսակ, ինչպես, օրինակ, ընկույզով հարուստ Ջևիզլի գյուղից հարկվող ընկույզը:

Վերադառնալով օսմանցիների կիրառված բռնագաղթի քաղաքականությանը՝ նշենք դրա նշանակությունը ժողովրդագրական քաղաքականության տես-

անկյունից: Կայսրության մի մասից մյուսը տեղափոխելով ժողովրդական զանգվածներին՝ թուլացվում է տեղաբնիկների ուժը, ինչը կարևոր ներքաղաքական գործոն է դառնում պետության ներքին կայունության ապահովման, հավանական ապստամբությունների ու խռովությունների կանխման տեսակետից: Թուրքերը չեն դադարել կիրառել այդ քաղաքականությունը նույնիսկ մինչև մեր օրերը: Որպես օրինակ կարող ենք բերել XX դարի դեպքերը, երբ քրդական ապստամբությունը ամբողջականորեն ճնշելու համար Դիարբեքիի և Թուրքիայի Հանրապետության այլ հարավարևելյան ու հիմնականում քրդաբնակ շրջաններից քրդերը զանգվածաբար բռնազաղթվեցին երկրի արևմտյան վիլայեթներ, որտեղ հիմնականում թուրք բնակչություն է և որտեղ նրանք, ընկնելով անծանոթ միջավայր ու խախտելով իրենց կացութաձևը, դարձան տեղի բնակչության ամենաաղքատ ու թույլ զանգվածը:

Սակայն, ինչպես արդեն նշել ենք, բռնազաղթը հիմնականում հանդիսանում է արդեն անկառավարելի դարձող խնդրին արագ արձագանքման միջոց և արդյունավետության առումով ավելի թույլ է դեվչիրմեից, որի կիրառման պտուղները չնայած ուշ են հասունանում, սակայն ունեն ավելի երկարաժամկետ ու կայուն ազդեցություն:

Առաջնորդության բազում տեսությունների, ինչպես նաև պատմության մեջ տեղի ունեցած ապստամբությունների ու խռովությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս մեզ պնդել, որ վերջիններիս առաջնորդները պետք է անպայմանորեն դրականորեն առանձնանան իրենց հետևորդներից. ուժ, խելք, դրամ, ազնիվ ծագում, կրոնական առաջնորդություն և այլն: Օսմանյան հարկային ծանրագույն բեռի պարագայում, թերևս, անիմաստ կլինի խոսել հպատակ ժողովուրդների մոտ դրամի առկայության մասին, ուստի այդ կետը կարելի է անտեսել:

Դեվչիրմեի ռազմավարական հետևանքներից մեկն էլ առաջիկա հնարավոր ապստամբությունների ու խռովությունների հնարավորինս բացառումն էր: Դեվչիրմեն նաև

ջատում էր հպատակ քրիստոնյաների ապստամբական ներուժը: Դեվձիոմեով հավաքում էին հպատակ քրիստոնյաների ոչ միայն ամենաուժեղ, ամենաառողջ, ամենախելացի, ամենագեղեցկատես և այլ զավակներին, այլև, ինչպես արդեն նշել ենք մեր ուսումնասիրության մեջ, հատուկ շեշտվում է ազնվականների ու կղերականների որդիների հավաքագրումը: ]

Օսմանյան պետությունն իր սահմաններում ներառում էր մահմեդականների և քրիստոնյաների, ընդ որում՝ վերջինների համամասնությունն ու զանգվածը նորանոր նվաճումների հետևանքով անընդհատ աճում էր, ինչը լուրջ խնդիր էր: Օսմանցիների նախորդները, անկախ այն բանից, թե իրենց պետական կազմավորումը տեղի է ունեցել ըստ եվրոպական մոդելի, ինչպես, օրինակ, Բյուզանդիան և Բուլղարիան էին, կամ ասիականի՝ ինչպես Իրանը և Սելջուկյան սուլթանությունը, համախմբում էին իրենց տարակազմ բնակչությունը համաձայն մեկ կրոնի սկզբունքի: Օսմանյան կայսրությունը չէր կարող կիրառել նույն սկզբունքը: Ի հայտ գալով Փոքր Ասիայում՝ այն զարգացրել էր բռնատիրության մի տարբերակ, որի պետական կրոնը մահմեդականությունն էր: Սակայն տարածվելով՝ այն ներառեց նաև քրիստոնյա ժողովուրդներ, որոնք քանակական առումով գերազանցում էին մահմեդականներին: Եվ նոր նվաճված տարածքներում իշխանությունը պահպանելու համար օսմանյան պետությունը ջանում էր արագ կերպով ավելացնել մահմեդական տարրը: Բռնագաղթերն ամայացնում էին տարածքները, ուստի առավել ձեռնադրու տարբերակ էր հենց տեղաբնիկների մահմեդականացումը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում՝ XVI-XVII դարերում, մարդկային զանգվածների մոտ ինքնությունը որոշվում էր հիմնականում կրոնական պատկանելությամբ: Քրիստոնեությունն էր համախմբում հպատակ քրիստոնյաներին ընդհանրապես՝ ընդդեմ այլակրոնների, և ժողովուրդներին՝ մասնավորապես հայերին, հույներին, բուլղարներին

և այլն: Պետությունը, այլևայլ մեթոդներով, այդ թվում նաև դեվչիքմեի միջոցով թուլացնելով եկեղեցին, փաստորեն գլխատում էր ազգը, զրկում զանգվածին ինքնությունից, ինչը ոլորացնում էր վերջիններիս կրոնափոխությունը: Այսպիսով, մարդկային զանգվածները համալրում էին օսմանցիների շարքերը, ծուլվում՝ բազմացնելով իշխողների մարդկային ռեսուրսները և թուլացնելով սեփականները:

Դեվչիքմեն մահմեդականացման ուղիներից ամենա-ազդեցիկներից մեկն էր. դեվչիքմեով մահմեդականացվածներից շատ քչերին է հաջողվել դարձի գալ: Տղաները հավաքագրվում էին պատանեկան տարիքում: Այդ ժամանակ երեխայի մոտ դեռ արմատավորված չէ կրոնական ինքնությունը, իսկ ուղեղը ճկուն է և ընկալունակ: Հարազատ սոցիալական միջավայրից զատումը խոր հոգեբանական սթրեսի մեջ է զցում պատանուն, որը դրանից ազատվելու համար բնագոյաբար նրան դրդում է յուրացնել առաջարկված յուրաքանչյուր մշակույթ, ինտեգրվել առաջարկված յուրաքանչյուր համակարգում: Այսպիսով, երեկվա քրիստոնյաները դառնում էին ապագայի մոլեռանդ մահմեդականներ, որոնց հետագա սերունդներն արդեն, անշուշտ, մահմեդական էին:

Սույն ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկան դեվչիքմեի գործառույթները մարդկային ռեսուրսների ծագմական, տնտեսական, ժողովրդագրական, կրոնական ոլորտներում: Ավելին, դեվչիքմեն, ի թիվս վերոհիշյալների, ուներ նաև սոցիալական գործառույթ. օսմանցիները, զրկելով հպատակ ժողովրդին ներուժից, այդ ներուժն ուղղելով իրենց ձեռնտու հունով, փաստորեն պարպում էին սոցիալական լարվածությունը:]

[ Տղայահավաքներն իրենց ուրույն դերն են ունեցել նաև Օսմանյան կայսրությունում զանգվածային բռնի մահմեդականացման ու թուրքացման քաղաքականության համատեքստում: ]

Այսպիսով, մենք ականատես ենք պատմության մեջ մարդկային ռեսուրսների կառավարման մի մեխանիզմի, որը



ներկայացնում է հիշատակված բոլոր գործոններից միահյուսված մի համակարգ: Այն ուներ երկարաժամկետ ազդեցություն և օսմանյան պետության հաջողության ճակատագրական գործոններից մեկն էր:

Դեվչիրմեն համակարգի յուրահատկությունները կարող ենք ամփոփել մի քանի կետում.

- Դեվչիրմեն օսմանյան պետության համար դրականորեն տարբերվում էր փենջիքից, քանի որ դեվչիրմեի դեպքում այդ ընտրությունը մեծ դեր էր կատարում, ինչը մեծապես բարձրացնում էր մատակարարվող մարդուժի որակական հատկանիշները: Պետությունը հետապոյու արդեն հնարավորություն ստացավ կառավարել իր ռազմուժի մատակարարման չափաբաժինը:

- Դեվչիրմեն նաև աշխատուժի վերաբաշխման եղանակ էր: Մարդուժով առավել հարուստ տարածքներից աշխատուժն ուղարկվում էր թույլ գյուղատնտեսություն ունեցող վայրեր:

- Դեվչիրմեն Օսմանյան կայսրությանը մատակարարում էր ստրուկներով, որոնք ոչ միայն աշխատեցվում էին կայսրության տարածքում, այլև վաճառվում շուկաներում:

- Տղայահավաքներն իրենց ուրույն դերն են ունեցել կայսրությունում բռնի մահմեդականացման ու թուրքացման քաղաքականության համատեքստում:



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՋԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ  
ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

1. Դիվան հայոց պատմության, կազմեց Աղանյանց Գ., Թիֆլիս, գիրք Ժ, 604 էջ:
2. Երեմիա Քեօմիւրճեան, Պատմութիւն համառոտ ԴՃ տարիոյ օսմանցոց թագաւորացն, աշխատասիրութեամբ՝ Ժ.Ավետիսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969, 416 էջ:
3. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480թթ.), կազմեց Լ. Նաչիկյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1958, 597 էջ:
4. Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ, հատ. Ա, Երևան, 1951:
5. Էվլիյա Չելեբի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, թարգմանություն քնազրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Սաֆրաստյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967, 347 էջ:
6. 3 numaralı mühimme defteri (966-968 / 1558-1560), Ankara, Osmanlı Arşiv Daire Başkanlığı, c.1, 1993, 570+(LIX+816) s. (արաբատառ)
7. 5 numaralı mühimme defteri (973 / 1565-1566), Ankara, Osmanlı Arşiv Daire Başkanlığı, c.1, 1994, 703+(XLIX+448) s. (արաբատառ)
8. 6 numaralı mühimme defteri (972 / 1564-1565), Ankara, Osmanlı Arşiv Daire Başkanlığı, c.1, 1995, 449 s. (արաբատառ)
9. 7 numaralı mühimme defteri (975-976 / 1567-1569), Ankara, Osmanlı Arşiv Daire Başkanlığı, c.1, 1998, 1016+568+LIII s. (արաբատառ)
10. 12 numaralı mühimme defteri (978-979 / 1570-1572), Ankara, Osmanlı Arşiv Daire Başkanlığı, 1996, c.3, 646+(XXIX+434) +433 s. (արաբատառ)
11. Ibn Bibi (el-Huseyin b. Muhammed b. Ali el-Caferi er-Rugadi), el-Evamirü'l Ala'iyе fi'l-Umuri'l-Ala'iyе (Selçukname), hazırlayan Mürsad Öztürk, Ankara, 1996, 2 cilt (XIII+468 p.; XIII+262 p.). (արաբատառ)
12. P. Incicyan, XVIII. Asırda İstanbul, tercüme ve tahşiye eden H.Andreasyan, İstanbul, İstanbul matbaası, 1956, 192 s.
13. Kanunname-i Sultanî ber mucceb-i örf-i osmanî, II. Mehmed ve II. Bayezid devirlerine ait yasakname ve kanunnameler, Anhegger R., Inalcik H., Ankara, TTK Basımevi, 1956, 97 s.

14. Kömürçyan Y., İstanbul Tarihi, XVII. Asırda İstanbul, İstanbul, Eren, 1984, 238 s.
15. Записки янычара. Написаны Константином Михайловичем из Островицы. Введение, перевод и комментарии А. Роговой, М., Наука, 1978, 136 с.
16. Книга законов султана Селима I. Публикация текста, перевод, терминологический комментарий и предисловие А. Тверетиновой, М., Наука, 1969, 158 с.
17. Мебде-и канун-и йеничери оджагы тарихи (История происхождения законов янычарского корпуса), Издание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели Петросян И.Е., Москва, 1987, 284+316 с.
18. Второй трактат Кочибея, Тверетинова А., Ученые записки института востоковедения, М., Л., Изд. АН СССР, VI, 1953, 212-268с.
19. Документи за историята на българския народ, XV-XIX век, София, Държавно Издателство "Народна просвета", 1986.
20. По следите на насилието, Документи и материали за налагане на исляма, Съставител Петров П., София, Издателство наука и изкуство, Част първа, 1987, 424 с.
21. Стефан Герлах. Дневник на едно пътуване до Османската порта в Цариград, Подбор, превод, увод и коментар Киселинчева М., Предговор и редакция Цветкова Б., София, 1976, с.
22. Duda, Herbert W., Die Seltschukengeschichte des Ibn Bibi, Kopenhagen, 1959. XVII+366 p.
23. Ibn Batoutah. Voyages. trad. par G. DeFrémery et B. R. Sanguinetti, Paris, T. I-IV, 1893-1922.
24. Mustafa Ali. Counsel for sultans, 1581, Edition, translation, notes by Tietze A., Wien, 1982, Part II, 295 p.
25. The Turkish letters of Ogier Ghiselin de Busbeq, imperial ambassador at Constantinople, 1554-1562, translated from Latin of the Elzevir edition of 1633 by Forster, Oxford, Edward Seymour, 1968, XVI+265p.;

#### Մեծագրություններ

26. Danişmend İ.H., İzahlı osmanlı tarihi kronolojisi, İstanbul, Türkiye yayınevi, 1948. Cilt 2, 565 s.
27. Danişmend İ.H., İzahlı osmanlı tarihi kronolojisi, İstanbul, Türkiye yayınevi, 1950, Cilt 3, 770 s.
28. Köprülü F., Osmanlı devleti'nin kuruluşu, Ankara, TTK basımevi, 1959, 123 s.

29. Uzunçarşılı, İ.H., Osmanlı devlet teşkilâtından kapıkulu ocakları, I, Ankara, TTK basımevi, 1943, XXI-549 s.
30. Uzunçarşılı İ.H., Osmanlı devleti teşkilatına medhal, İstanbul, Türkiye yayımevi, 1941, XXI+549 s.
31. Uzunçarşılı İ.H., Osmanlı devletinin saray teşkilâtı, Ankara, 1945, TTK basımevi, 412s.
32. Uzunçarşılı İ.H., Osmanlı Tarihi, Ankara, TTK basımevi, c.I, 1947, 354s.
33. Այվազյան Գ., Պատմութիւն Օսմանեան պետութեան, Վենետիկ, ի ս. Ղազար, հատ. Ա, 1841, 669 էջ:
34. Երեմեև Դ., Թուրքերի ծագումը, Երևան, «Հայաստան», 1975, 357 էջ:
35. Լեռ, Երկերի ժողովածու, Երևան, «Հայաստան», Երրորդ հատոր, Գիրք առաջին, 1969, 510 էջ:
36. Հայ ժողովրդի պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, հատոր IV, Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում, XIV-XVIII դդ., 1972թ., 680 էջ:
37. Զամյանց Մ., Հայոց պատմություն (սկիզբի մինչև 1784 թվականը), Երևան, ԵՊՀ, Գ հատոր, 1984, 986, 195 էջ:
38. Օրմանյան Մ., Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Պէյրուս, տպ. Սեւան, հատոր Բ, 1960, մաս 1, 1601-2178 սյուն:
39. A history of the Ottoman Empire to 1730. V.J. Parry, H. Inalcik, A. N. Kurat and J. S. Bromley, Cambridge, London, New York, Melbourne, Cambridge University press, 1976, ed. M. A. Cook, 246 p.
40. Cahen C., Pre-Ottoman Turkey, London, 1968, XX+458 p.;
41. Gibb H.A.R., Bowen H., Islamic Society and the West. A Study of the Impact of Western Civilization on Moslem Culture in the Near East, London, New York, Toronto, Volume One, Part I, 1951, 386 p.
42. Hammer. J.v., Des Osmanischen Reiches Staatsverfassung und Staatsverwaltung, Wien, Camesinaschen Buchhandlung. Bd. I, 1815, 499 p.
43. Inalcik, H., The Ottoman Empire. The Classical Age, 1300-1600, London, Phoenix, 1975, p.258
44. Islam from the prophet Muhammed to the capture of Constantinople, edited and translated by Lewis B., New York, Evanston, San Francisco, London, Harper & Row Publishers, 1971, Volume I: Politics and War, XXXVII+266 p.
45. Kafadar C., Between two worlds. The construction of the Ottoman state, Berkley, University of California Press, 1995, 540 p.

46. Kunt, I. M., The sultan's servants, the transformation of Ottoman provincial government, 1550-1650, New York, Columbia University Press, 1983, XXIII+181p.
47. Lybier A., The Government of the Ottoman Empire in the times of Suleiman the Magnificent, Cambridge, Harvard University Press, 1913, 349 p.;
48. Pallis A., In the days of the janissaires: old Turkish life as depicted in the 'Travel - book' of Evliya Chelebi, London, New York, Melbourne, Sydney, Cape Town, Hutchinson&Co. Ltd, 1951, 236 p.
49. Papoulia B., Ursprung und Wesen der "Knabenlese" im osmanischen Reich, München, Verlag R. Oldenbourg München, 1963, 139 p.
50. Ricaut P., Histoire de l'etat present de l'Empire ottoman, Paris, 1676.
51. Shaw S., The history of the Ottoman Empire and modern Turkey, Vol. 1, Empire of Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire, 1208-1808, Cambridge, 1985.
52. Vryonis, Jr., S., The Decline of Medieval Hellenism in Asia Minor and the Process of Islamization from the Eleventh through the Fifteenth Century, Berkley, Los Angeles, London, University of California Press, 1986, XVII+532 p.
53. Георгиева, Ц., Еничарите в българските земи, София, Наука и изкуство, 1988, 238 с.
54. Еремеев Д., На стыке Азии и Европы. Очерки о Турции и турках, М., "Наука", 1980, 238 с.
55. Макиавелли Н., Государь: Сочинения. — М., "Фолион", 1999г., 503 с.
56. Миллер А. Ф., Мустафа паша Байрактар, Османская империя в начале XIX в., М., Л., Изд. АН СССР, 1947, 508 с.
57. Мутафчиева, В., Аграрните отношения в Османската империя през 15-16в., София, Издателство на Българската академия на науките, 1962., 264 с.
58. Тодоров Н., Балканский город 15-19 веков: социально-экономическое и демографическое развитие, "Наука", Москва, 1976, 515 с.
59. Тойнби А., Постижение истории, М., Айрис Пресс, 2004, 640 с.
60. Толкование священного корана на арабском и русском языках, Каир, 2000г., Аль Анфаль, 41-42.
61. Фрейденберг М., Дубровник и Османская империя, М., "Наука", 1989, 303 с.

62. Цуладзе А., Политическая мифология, М., Изд-во Эксмо, 2003, 384 с.

### Հոդվածներ

63. And M., XVI. yūzyılda acemi ve yeniçeri ocağı, 1. Tarih mecmuası, İstanbul, Hayat, 1971, Şubat, Cilt 1, Sayı 1, 11-15 s.
64. And M., XVI. yūzyılda acemi ve yeniçeri ocağı, 2. Tarih mecmuası, İstanbul, Hayat, 1971, Mart, Cilt 1, Sayı 2, 13-17 s.
65. Ercan Y., Devşirme sorunu, devşirmenin Anadolu ve Balkanlardaki türkleşme ve islamlaşma etkisi, Belleten. 1986 Aralık, 1987, TTK basımevi, Ankara, 679-721 s.
66. Koçu R.E., Esirler ve esirciler, Tarih mecmuası, İstanbul, Hayat, 1972, Haziran, Cilt 1, Sayı 5, 45-50 s.
67. Koçu R.E., Osmanlı Sarayında Enderun Teşkilâtı, Tarih mecmuası, İstanbul, Hayat, 1972, Ağustos, Cilt : 2, Sayı : 7, 31-36 s.
68. Özcan, A., Devşirme, İslam Ansiklopedisi, Ankara, Türkiye Diyanet Vakfı, 1994, cilt 9, 560 s.
69. Uzunçarşılı, İ. H., Devşirme, İslam Ansiklopedisi, İstanbul, Milli Eğitim Basımevi, 1940. cilt 3, 559 s.
70. Անասյան Յ., Թուրքական ֆուրուվկաթը և հայերը, առանձնատիպ, արտատպուած՝ «Հասկ» հայագիտական տարեգրքի նոր շրջանի Զ տարի հատորին, 1994թ., Անթիլիաս, 34 էջ:
71. Զուլայան, Մ., «Դեվշիրմեն» (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, ՊԲՀ, 1959, #2-3, 247-256 էջ:
72. Խառատյան, Ա., Գերության համակարգը Օսմանյան կայսրությունում (XV-XVIIIդդ.), «Լիաբեր» հասարակական գիտությունների ամսագիր, 2001, #1, 25-33 էջ:
73. Ղլեյան Վ., Ստրկավաճառությունը Օսմանյան կայսրությունում XIX դարում, Արևելագիտության հարցեր, պրակ 3-4, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987, 107-120 էջ:
74. Ayalon D., Preliminary remarks on the Mamlūk Military Institution in Islam, War, Technology and Society in the Middle East, Ed. Parry V.J. and Yapp M.E., London, Oxford University Press, 1975, 44-58 p.
75. Erder L., The measurement of preindustrial population changes: the Ottoman Empire from the 15<sup>th</sup> to the 17<sup>th</sup> century, Middle East Studies, Vol. XI, #3, 1975, London, 284-301 p.

76. İnalcık H., *L'Empire Ottoman*, I Congrès International des Etudes Balkaniques et Sud-Est Européens. S., 1965.
77. İnalcık H., *Servile labor in the Ottoman Empire*, *Studies in Ottoman Social and Economic History*, VII, London, 1985, 25-52p.
78. İnalcık H., *The Ottoman Empire: Conquest, Organization and Economy*, London, Variorum Reprints, 1978, 10-4p.
79. İnalcık H., *The Ottoman state: economy and society, 1300-1600*, *An economic and social history of the Ottoman Empire, 1300-1914*, edited by H. İnalcık, D. Quataert, Cambridge, 1996, p. 9-411.
80. Hacker J.R., *Ottoman policy toward the Jews and Jewish attitudes toward the Ottomans during the fifteenth century*, *Christians & Jews in the Ottoman Empire*, 117-137 p.
81. Kunt M., *State and sultan up to the age of Süleyman: frontier principality to world empire*, *Suleyman the Magnificent and his age, the Ottoman Empire in the early modern world*, edited by Metin Kunt and Christine Woodhead, London and New York, Longman, 1995, 4-23 p.
82. Ménage V., *Devşirme*, *The Encyclopedia of Islam*, edited by B.Lewis, Ch. Pellat and J. Schacht, Leiden, E. J. Brill, 1991, Vol. II, 211 p.
83. Menage V., *Some notes on the devşirme*, *Bulletin of the School of Oriental and African Studies*, London, University of London, XXIX, Part 1, 1966, 64-78 p.
84. Mordtmann J.H., *Devşirme.- Enzyklopedie des Islams*. Bd 1, Leiden - Leipzig, 1908, 1359 s.
85. Palmer J.A.B., *The Origins of Janissaries*, *The Bulletin of the John Rylands Library*, V, XXXV/2, March, 1953, 2, 448-481 p.
86. Todorova M., *Was There a Demographic Crisis in the Ottoman Empire in the Seventeenth Century?*, *Études balkaniques*, 2, 1988, Sofia, Academia Bulgare des Sciences, 55-63 p.
87. Toynbee A., *The Ottoman Empire's Place in World History*, in *The Ottoman State and Its Place in World History*, ed. by K.Karpat, Leiden, E.J.Brill, 1974, 15-27 p.
88. Vryonis S., *Speros, Byzantine and Turkish societies and their sources of manpower*, p. 141-142, in *War, Technology and Society in the Middle East*, edited by Parry V. J. and Yapp M. E., London, Oxford University Press, 1975, 125-153 p.
89. Vryonis S., *Review of Upsprung and Wesen* by B.Papoulia, *Balkan Studies*, 5 (1964), p. 145-153;
90. Vryonis S., *Seljuk Gulams and Ottoman Devşirmes*, *Der Islam*, Band 41, 1964, 224-252 p.

91. Wittek P., *Devshirme and sharia*, Bulletin of the School of Oriental and African Studies, London, University of London, 1955. XVII/2. 271-278 p.
92. Željazkova A., *Social aspects of the process of islamization in the Balkan possessions of the Ottoman Empire*, Études balkaniques, 3, 1985, Sofia, Academia Bulgare des Sciences, 107- 122 p.
93. Željazkova A., *The Balkan nations' armed resistance against the Ottomans at the end of XVII century and its place in the history of the empire and the subordinate European provinces*, Études balkaniques, 3, 1989, Sofia, Academia Bulgare des Sciences, 62-71 p.
94. Георгиева, Ц., *Развитие и характер на кръвния данък в българските земи*, ГСУ — ФИФ, 61, 1967, с.53;
95. Градуева Р., *О некоторых проблемах формирования османской системы управления (XIV - начало XV века)*, Османская империя: государственная власть и социально-политическая структура (под ред. Орешковой С.), Сборник статей, М., "Наука", 1990, 40-65 с.
96. Жуков К., *Торговые связи Венеции и Генуи с эгейскими эмиратами Айдын и Ментеше (XIV - начало XV в.)*, Тюркологический сборник 1979, М., "Наука", 1985, 34-49 с.
97. Новичев А., *К истории рабства в Османской империи*, Тюркологический сборник 1976, М., "Наука", 1978, 88-108 с.
98. Петросян И.Е., *К истории создания янычарского корпуса*, Тюркологический сборник 1978, М., "Наука", 1984.
99. Радушев Е., *Место вооруженных сил в структуре османской феодальной системы на Балканах*, Османская империя: государственная власть и социально-политическая структура, под ред. Орешковой С, (сборник статей), Москва, "Наука", 1990, 97-117 с.
100. Шамсутдинов А., *Проблема становления османского государства по турецким источникам XIV-XVвв.*, Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, (сборник статей), под ред. Орешковой С., Москва, "Наука", 1986, 19-39 с.

## Եզրաբանական բառարան

Աբբայաններ՝ Օմայան հարստության անկումից հետո իսլամական պետության զլուխ անցած հարստություն (750-1258):

Անատոլիա՝ այս եզրն օգտագործելիս ի նկատի ունենք Հայկական բարձրավանդակի արևմտյան մասն ու Փոքր Ասիա թերակղզին:

Ասպեր՝ օսմանական արծաթե դրամ՝ աքչե: Համաձայն ճանապարհորդ Չերլախի՝ մեկ դուկատը հավասար էր 70 ասպերի, մեկ կրոնը՝ 50, մեկ տալերը՝ 40:

Աքչե՝ դրամական միավոր Օսմանյան կայսրությունում: տես ասպեր:

Բարա՝ բեքթաշիական շեյխերի կոչում. թե՛ սելջուկյանների, թե՛ օսմանցիների ծագումով մեծ դեր ունեին իսլամական հոսանքներն ու դրանց շեյխերը, մասնավորապես ու հատկապես բեքթաշիները, նրանց ծագմաշունչ ուսմունքն էր ոգևորում նախկինում այլադավան ծագմիկներին ու հաղորդում նրանց մուլեթանդություն:

Բեյլերբեյի՝ վիլայեթների ղեկավար նշանակված զինվորական պաշտոնյա:

Գանիմաթ՝ ավար. համաձայն գանիմաթի օրենքի՝ պետությունն իր օգտին էր գանձում ավարի մեկ հինգերորդ մասը:

Դեվշիրմեններ՝ նույնանուն ինստիտուտով հավաքագրված տղաներ:

Դեֆթեր՝ մատյան:

Դուլամա՝ յուրահատուկ բաճկոն կամ թիկնոց:

Դուկատ՝ ոսկե դրամ, որը հատվում էր վենետիկում սկսած 1299թ.: Գերլախի ժամանակներում մեկ դուկատը հավասար էր 70 ասպերի:

Ջազարջիբաշը՝ ենիչերիական սպա:

Ջաիմ՝ զեամեթի տերը:

Ջեամեթ՝ 20 000-ից մինչև 100 000 աքչե եկամուտ բերող ավատ:

Ջիմմի՝ այն ժողովուրդները, որոնք ծանոթ էին Սուրբ գրքին նախքան Դուրանի ի հայտ գալը:



Էմիր՝ հրամանատար:

Թիմար՝ մինչև 20 000 աքչե եկամուտ բերող ավատ:

Թուլունյաններ՝ հարստություն եզիպտոսում 868-905թթ.:

Թուրանջիբաշը՝ ենիչերիական զորաբանակի սպա, որի պարտականությունների մեջ էր մտնում ղեկվիրմեի անցկացումը:

Իբթա՝ սելջուկյան պետությունում պայմանական ավատ:

Խալիֆ Օմար՝ Արաբական խալիֆայության երկրորդ խալիֆը (634-644):

Խասս՝ 100 000 աքչեից ավելի եկամուտ բերող ավատ:

Ղազի՝ սրբազան պատերազմի՝ ղազավաթի, մասնակից, մարտիկ:

Ղազնևիներ՝ Ղազնևիների պետությունը գլխավորող հարստություն (X-XII դարեր): Առավելագույն հզորության է հասել Մահմուդ Ղազնևիի ժամանակ (998-1030):

Ղուլամ՝ ստրուկ, որը մասնավորապես Սելջուկյանների մոտ օգտագործվում էր պալատական ծառայությունների համար ու բանակում:

Ջիզե՝ իսլամական պետություններում ոչ մահմեդական հպատակներից զանձվող հարկատեսակ, որը հավաքվում էր տղամարդկանցից: Քանի որ այն հարկվում էր միայն ոչ մահմեդականներից, մահմեդականություն ընդունողներն ազատվում էին այդ հարկից: Պետությունն իր հերթին պարտավորվում էր պաշտպանել բոլոր այն ոչ մահմեդականների կյանքը, պատիվը, սեփականությունը և այլն, ովքեր համաձայնվում էին վճարել ջիզե:

Մամլուք՝ ստրուկ, որն արաբական Արևելքում օգտագործվում էր պալատական ծառայությունների համար ու բանակում, հետագայում մամլուքները իրենց ձեռքն են վերցնում իշխանությունը և նույնիսկ հիմնում հարստություն:

Մերիտոկրատիա՝ կառավարման ձև, որտեղ ղեկավարներն ընտրվում են ոչ թե ըստ արյան ազնվության, այլ ըստ կարողությունների:

Մյուլք՝ ավատ, որի տերն այն կարող է վաճառել, թողնել որպես ժառանգություն կամ նվիրել մեկ այլի:

Յայաբաշը՝ ենիչերիական հետևակի ղեկավար սպա:

Նահիյե՝ սանջաքից փոքր վարչական միավոր Օսմանյան կայսրությունում, գավառակ:

Չըքմա՝ Յենիսարայ, եղիոնե, Գալաթա և Իբրահիմ փաշա պալատներում ծառայող իչ օղլանների նշանակում-ները պալատում ու պալատից դուրս: Չըքմաները եղել են փոքր ու մեծ: Սուլթանների թագադրման ժամանակ կատարվող նշանակումներն անվանվում էին մեծ չըքմաներ: Սրա ժամանակ պալատի հին ծառայողները ստանում էին արտաքին նշանակումներ: Իսկ փոքր չըքմաները տեղի էին ունենում հինգից յոթ տարին մեկ: Այդ ժամանակ նշանակումներ էին ստանում երկար ժամանակ նույն օղայում ծառայածները:

Չիֆթլիք՝ ազարակ:

Պրոնիա՝ Բյուզանդական կայսրության ռազմավարական համակարգում պայմանական ավատ:

Ռայա՝ գերազանցապես գյուղացի հարկատու բնակչություն (եզ, ռայաթ):

Ռումելի՝ Օսմանյան կայսրության՝ Եվրոպա աշխարհամասում գտնվող բեյլերբեյության անվանումը, որի կազմի մեջ էին մտնում Հունաստանը, Սերբիան, Բուլղարիան, Թրակիան, Ալբանիայի ու Չերնոգորիայի մի մասը, կենտրոնն էր Սոֆիա քաղաքը:

Սանջաք՝ վիլայեթից փոքր վարչատարածքային միավոր օսմանյան պետությունում: Համաձայն էվլիյա Չելեբիի՝ Ռումելի վիլայեթը բաղկացած էր 24, իսկ Անատոլիայի վիլայեթը՝ 14 սանջաքից:

Սանջաքբեյի՝ սանջաքի ղեկավար:

Սիպահի՝ Օսմանյան զինվորական համակարգում հեծյալ զինվորների դաս, որոնք ի պատասխան իրենց տրված ավատների, պատերազմների ժամանակ պարտավորվում էին հանդես բերել իրենց մասնակցությունը՝ անասուններով ու զինյալ ջոկատներով հանդերձ՝ համապատասխան ավատի չափսի:

Վաքուֆ՝ սեփականություն, որ տրվել է սեփականատիրոջ կողմից կրոնական կամ բարեգործական կարիքների համար համայնքին, պետությանը կամ մասնավոր անձին: Որպես վաքուֆ կարող էին տրվել դպրոց, մզկիթ, հող,

շարժական գույք: ՎաքուՖ տվողի ժառանգները կարող էին թոշակ ստանալ փոխանցված գույքի եկամուտներից: ՎաքուՖներն ազատվում էին հարկերից և ծառայում որպես մահմեդական հոգևորականության գոյատևման կարևոր աղբյուր:

**Ուլեմա՝** աստվածաբանության գիտակ, կայսրության դատաիրավական ոլորտի պատասխանատու խավ, որը կազմված էր հիմնականում ազատ և ուսյալ մահմեդականներից՝ «գրչի մարդիկ»:

**Քադի -** դատավոր:

**Քազա -** վարչատարածքային միավոր, ավելի փոքր, քան սանջաքը:

**Քազասքեր՝** ուլեմայական խավի ամենաբարձր պաշտոնը, բառացիորեն զինվորական դատավոր, օմանցիների մոտ առաջին քազասքերն էր Չանդարլը Քարա խալիլը:

**Քանունամե՝** օմանյան պետության՝ աշխարհիկ իրավունքի վերաբերյալ ընդունած օրենքների ժողովածու, օրենսգիրք:

**Քեթխուդա -** մեծ վեզիրի օգնականներին տրվող անուն, ընդհանուր իմաստով հարուստ կամ հզոր մարդկանց գործերն անող, կատարածու:

**Քյաթիբ -** քարտուղար:

**Օդա՝** բառացիորեն սենյակ, պալատներում, զորանոցներում՝ հատուկ բաժանմունք:

**Ֆերման՝** սուլթանական հրաման:

## "BLOOD TAX" IN THE OTTOMAN EMPIRE:

### *DEVSHIRME*

By ARTAK SHAKARYAN

#### *Executive summary*

The administrative system of the Ottoman Empire has always been a central theme in Oriental studies. In particular, researchers have paid a great deal of attention to the phenomenon of *devshirme* (boy-tribute, or 'blood tax' as it is called by the Slavs). Indeed, a number of Western historians have referred to this practice with admiration when describing the Ottoman administrative system. They have insisted that *devshirme* provided a brilliant opportunity of advancement for Ottoman Christian subjects, theoretically allowing an ordinary peasant from a far village to become a solemn Grand Vizier or a governor of this powerful Empire. In reality, however, the opposite is true: the existence of *devshirme* simply serves to highlight the servile position of the subject populations of the Ottoman Empire.

Historians have suggested various hypotheses to explain the inception of *devshirme*, ranging from legends about the 'genius minds' of the Ottoman Sultans to an analysis of the causes of demographic explosions in the period of time under discussion.

The Ottoman State was the successor of the previous Muslim states and thus adopted many of their methods, approaches, principles and styles of governance. These were later modified according to the unique conditions of the Ottoman Empire. Thus it can be said that the long-lasting historical phenomenon of *devshirme* was not the result of a single 'invention'; rather, it was formed over time and subject to changing accents and emphases.

The imposition of the *devshirme* followed the routes of the Ottoman invasions. It was first imposed on the Balkan Christians, and then gradually incorporated the other Christian subjects of the Empire, including the Armenians. Somehow, the fact that other ethnic groups were also subject to *devshirme* leads some historians to conclude that the Armenians were *not* subject to this levy. Turkish historians in particular maintain that this tax was not collected from the Armenians or that it was not implemented as rigidly among them.

This misrepresentation of history can no doubt be attributed to the fact that the academic world is, on the whole, not informed about the collection of *devshirme* from the Armenian population. This, in turn, is probably due to the fact that the Armenian chronicles, which provide a rich primary source for

Medieval Oriental studies, have not yet been made available to scholars.

